

# Այունյաց երկիր ՄԱԿՈՒԹԱՅԻՆ

Հիմնադիր ԵՎ Հրատարակիչ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ  
ԵՌԱՄՍՅԱ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

10 ՄԱՐՏԻ 2025Թ.

№ 17

© syuniacyerkir@mail.ru © www.syuniacyerkir.am



## ՆՈՐՈՐՅԱ ՈՍԿԵՁԵՌԻՎԸ ՍՅՈՒՆԻՔԻՑ

Բաղդասար Արզումանյանը, ով իր բարձրարվեստ ստեղծագործություններով կարող է համեմատվել միջնադարի հայ մեծ վարպետների՝ Գալձազի, Սիրանեսի, Մոմիկի հետ

08



## ՋԱՆԳԵՁՈՒՐԻ ԻՆՔՆԱՊԱՆՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Գարեգին Նժդեհի կիսանդրին, մանրակերտ, քանդակագործ՝ Նարեկ Օրդյան

17

## ՔԱՆԴԱԿԱԶԱՐԴ ԽԱՉՔԱՐ ԿԱՆԳՆԵՑՆԵՆՈՒ ՆՈՐՈՐՅԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ

Բաբիկ Վարդանյան

19



# Քանդակագործներ Այունիքից

Ոսկեկուռ այրուբենը,  
1976 թ.,  
Նախագծող՝ Բաղդասար  
Արզումանյան,  
կատարող՝ ոսկերիչ  
Ժիրայր Չուլոյեան


ՇՊՈՒՑԱՅԻՆ ԳՍԵՆԵՂ



«Մայր հայրենիք» կամ «Մեծ և Փոքր Սյունիքներ» հուշակոթող Սյունիքի և Արցախի սահմանագծին, 2004 թ., նախագծի հեղինակ և ճարտարապետ՝ Սևադա Զաքարյան: 2007 թ. հուշարձանի տարածքում նաև խաչքար է կանգնեցվել: 2023 թ. մարտի 29-ին Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի նախկին երթուղու փակումից և ապրիլի սկզբին՝ նոր երթուղու արևմտյան հատվածի (Կոռնիձոր և Տեղ գյուղերով անցնող) գործարկումից հետո Ադրբեջանի վերահսկողության տակ անցավ հուշակոթողը, որից հետո քանդվեց:



Բորիկ Մինասյան, «Ժառանգություն», 1993 թ., գտնվում է Զերմուկ քաղաքում



Բորիկ Մինասյան, «Արցախուհին», 1988 թ., գտնվում է Կապանի նորապսակների այգում



Գագիկ Ալեքսանյան, «Գարեգին Նժդեհ», 1989 թ., Խուստուլիի լեռնագագաթ



Գրիգոր Ավետիսյան, «Զորավար Անդրանիկ», 1991 թ., գ. Անգեղակոթ



Գագիկ Ալեքսանյան, «Պողոս Տեր-Դավթյան», 2022 թ., Կապան

## ՀԱՅՈՑ ՎՐԻՇԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՔՅԱԼԸ



Շահան Նաթալիի բրոնզաձուլյ արձանը Գորիսում, 2016 թ., քանդակագործ՝ Նարեկ Օրդյան

## ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ



Արամ Մանուկյանի կիսանդրին ծննդավայր Դավիթբեկում, վերականգնող քանդակագործ՝ Դերենիկ Ահարոնյան



Արամ Մանուկյանի հարթաքանդակը ծննդավայր Դավիթբեկի դպրոցում, քանդակագործ՝ Դերենիկ Ահարոնյան

ՊԱՅՈՒՆՅԱՆ ԳՐԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅՈՑ ԱՐՑԱԽԸ

- 2 «Մայր Հայրենիք» կամ «Մեծ և Փոքր Սյունիքներ» հուշակոթող Սյունիքի և Արցախի սահմանագծին (Սևադա Զաքարյան)
- 2 «Ժառանգություն» քանդակը (Բորիկ Մինասյան)
- 2 «Արցախունի» քանդակը (Բորիկ Մինասյան)

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍՆԵՐԸ

- 3 Գարեգին Նժդեհի արձանը Խուստուփի լեռնագագաթին (Գագիկ Ալեքսանյան)
- 3 Զորավար Անդրանիկի հուշարձանն գ. Անգեղակոթում (Գրիգոր Ավետիսյան)
- 3 Պողոս Տեր-Դավթյանի հուշարձանը Կապանում (Գագիկ Ալեքսանյան)

ՀԱՅՈՑ ՎՐԻՓԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՔՅԱԼԸ

- 4 Շահան Նաթալիի արձանը Գորիսում (Նարեկ Օրդյան)

ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

- 4 Արամ Մանուկյանի կիսանդրին և հարթաքանդակը ծննդավայր Դավիթբեկ գյուղում (Դերենիկ Ահարոնյան)

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

- 6 Սյունիքի մերօրյա քանդակագործները, որ կրում են քանթարավոր նախնիների ոգու ցոլքը (Սամվել Ալեքսանյան)

ՆՈՐՈՐՅԱ ՈՍԿԵՑԵՌԻԿԸ

- 8 Բաղդասար Արզումանյանը, ով իր բարձրարվեստ ստեղծագործություններով կարող է համեմատվել միջնադարի հայ մեծ վարպետների՝ Գալձազի, Սիրանեսի, Մոմիկի հետ (Վարազդատ Հարությունյան)
- 10 Ոսկեկուռ և ադամանդապատ Մեսրոպյան այբուբենը (Վարազդատ Հարությունյան)
- 10 Ոսկեկուռ խաչը (Վարազդատ Հարությունյան)

ԴԻՄԱՆԿԱՐԻ ՈՒՐՎԱԳԻԾ

- 11 Միխայել Դուկասյան (Վաչե Մկրտչյան)

ԳԵՐԴԱՍՏԱՆ. ԱՌԱՔԵԼՅԱՆՆԵՐ

- 13 Զարթնած հայրենիքի գրկում՝ լեռներն իբրև բարձ (Սուսաննա Բաբաջանյան)

ՀԱՍԱՐԻ ԱԶԱԿԻՑԸ ԵՎ ՀՈՎԱՆԱՎՈՐԸ

«Սյունյաց երկիր. մշակութային» եռամսյա հանդեսը տպագրվում է 2021 թվականից՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ: Հանդեսի սույն համարի տպագրությանն աջակցել է նաև Նարեկ Բաբայանը, ում մեր երախտագիտությունն ենք հայտնում:



ՀԱՅՈՑ ՄԵՃԵՐԸ՝ ՍՅՈՒՆԻՔԻՑ

Վասակ Սյունի, մարզպան հայոց և վրաց աշխարհի, մանրակերտ, քանդակագործ՝ Նարեկ Օրդյան

33



ԸՆԴՀԱՏՎԱԾ ՍՏԵՂՑԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՐԻ

Ըմբշամարտիկների պայքարը, մանրակերտ, քանդակագործ՝ Ռուբիկ Գասպարյան (Բուդան)

20

- 14 Երբ քանդակագործությունը գեներով է անցնում (Վահրամ Օրբեյան)
- 15 Գորիսյան ավանդույթներով հայ մշակույթը Ֆրանսիայում (Արմինե Ավագյան)
- 16 Արմո Տաթևազին կերտել է նաև Կոստանտին Օրբեյանի կիսանդրին ու Դավիթ Բեկի հուշարձանը (Արև Աբեյան)

ԳԵՐԴԱՍՏԱՆ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ-ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

- 16 Հովհաննես Բաղդասարյան, ով գնում է նախնիների՝ հանճարեղ Բաղդասար Արզումանյանի և մեծահռչակ Գետիկ Բաղդասարյանի հետքերով

ԳԵՐԴԱՍՏԱՆ. ՕՐԴՅԱՆՆԵՐ

- 17 Նարեկ Օրդյան. Սյունյաց աշխարհի մերօրյա քանդակագործը (Վահրամ Օրբեյան)
- 18 Հայոց վրիժառույթյան առաքյալը (Սամվել Ալեքսանյան)

ՔԱՆԴԱԿԱԳՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՆԳԵՑՆԵԼՈՒ ՆՈՐՈՐՅԱ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐ

- 19 Բաբիկ Վարդանյան (Արկաղի Հովհաննիսյան)
- 19 Ռազմիկ Արզումանյան (Թեհմինա Մարության, Քաջիկ Դորունց)

ԸՆԴՀԱՏՎԱԾ ՍՏԵՂՑԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՐԻ

- 20 Ռուբիկ Գասպարյան (Բուդան)
- 20 Գարեն Զադայան
- 21 Լևոն Թումանյան (Վահրամ Օրբեյան)
- 21 Սոս Ասրյան

ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԻՑ ԶԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

- 22 Ռոբերտ Կամոյան. կյանք նվիրված գունաշխարհին
- 22 Լորիկ Մինասյան (Վահրամ Օրբեյան)
- 23 Ժիրայր Մարտիրոսյան
- 23 Բորիկ Մինասյան

ՍՅՈՒՆԻՔԻ ԶԱՆԴԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻՆ ՀԱՎԱՏԱՐԻՄ

- 24 Ստեփան Դավթյան (Վահրամ Օրբեյան)
- 25 Մանվել Մաթևոսյան
- 26 Սարգիս Բաբայան
- 27 Գագիկ Ալեքսանյան (Վահրամ Օրբեյան)
- 28 Գրիգոր Ավետիսյան
- 28 Վահե Եղյան
- 29 Եղիշ Կարապետյան (Վահրամ Օրբեյան)
- 29 Գառնիկ Հայրապետյան

- 30 Նաիրի Բաղդասարյան
- 30 Նարեկ Բաղդասարյան

ԻՆՔՆՈՒՍ ԶԱՆԴԱԿԱԳՈՐԾՆԵՐ՝ ԱՆԻՄԱԼԻՍՏԱԿԱՆ ԺԱՆՐՈՒՄ

- 31 Էդիկ Կոստանոյան. «Իմ պատկերացրած պատկերը փայտի մեջ է, ավելորդ մասերն եմ հեռացնում» (հարցազրույցը՝ Վահրամ Օրբեյանի)
- 31 Գեորգի Գևորգյան (Վահրամ Օրբեյան)

ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇՏԱՍԿԸ՝ ՀԱՎԵՐՓԱՑՎԱԾ

- 32 Հուշակոթող Գորիսում (Սևադա Զաքարյան)
- 32 Վազգեն Սարգսյանի հուշարձանը Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում (Նարեկ Օրդյան)
- 32 Համլետ Մինասյանի հուշարձանը Հարժիսի միջնակարգ դպրոցի բակում (Գարեն Զադայան)
- 32 Վուրգ Ոսկանյանի հուշարձանը Միսիանի Ագատամարտի հրապարակում (Գետիկ Բաղդասարյան)

ՀԱՅՈՑ ՄԵՃԵՐԸ՝ ՍՅՈՒՆԻՔԻՑ

- 33 Սուրբ Գրիգոր Տաթևացու հուշակոթողը Գորիսում (Նարեկ Օրդյան)
- 33 Վասակ Սյունի՝ մարզպան հայոց և վրաց աշխարհի (Նարեկ Օրդյան)
- 33 Իսրայել Օրի (Նարեկ Օրդյան)
- 33 Ակսել Բակունցի հուշարձանը գրողի տուն-թանգարանի բակում՝ փողոցի կողմից (Միխայել Դուկասյան)

ՀԱՅՈՑ ՄԵՃ ԵՂԵՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇՏԱՍԿԸ՝ ՀԱՎԵՐՓԱՑՎԱԾ

- 34 Հուշարձան Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում (Յուրիկ Գևորգյան)
- 34 Հուշահամալիր Գորիսում (Սևադա Զաքարյան)

ՄԵՆՔ ԱՅՍՏԵՂ ՊԻՏԻ ԾԱԽՐԵՆՔ ՈՒ ՄՆԱՆՔ

- 35 Մեծ Իշխանասարը՝ սարերի սարը, որի սրբացած գագաթը գերության մեջ է
- 35 Գորիսի մուտքը խորհրդանշող հուշակոթող (Սևադա Զաքարյան)
- 35 Սյունյաց սարեր (Գուսան Աշոտ)

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՍԵԼԻՄ

- 36 Տաթևի մայր վանքը, որ Սիսական տան բոլոր վանքերի գլուխն ու շնորհաբաշխության աղբյուրն է
- 36 Հայաստան ասելիս (Համո Սահյան)
- 36 Ոսկեկուռ խաչը (նախագծող՝ Բաղդասար Արզումանյան, կատարող՝ ոսկերիչ՝ Ժիրայր Զուլյեյան)





# Բաղդասար Արզումանյանը, ով իր բարձրարվեստ ստեղծագործություններով կարող է համեմատվել միջնադարի հայ մեծ վարպետների՝ Գալձազի, Սիրանեսի, Մոմիկի հետ

Բաղդասար Հայրապետի որդի Արզումանյանը՝ հայ ժողովրդի հրաշամանուկներից մեկը, ծնվել է Սյունիքի մարզի (նախկին Սիսիանի շրջանի) Մազրա, այժմ՝ Բարձրավան գյուղում: Նախնական կրթությունն ստացել է հայրենի գյուղի դպրոցում: 1924-ին ընտանիքով փոխադրվել է Նախիջևան: Ի ծնե գեղասեր, ի վերուստ նկարչական ունակություններով օժտված պատանու գեղարվեստական ունակությունները ծլարձակվեցին, երբ 1928թ., փոխադրվելով Երևան, ընդունվեց Ա. Թամանյանի անվան շինարարական տեխնիկում: Ութամյա ուսուցումը այդ նշանավոր կրթօջախում խիստ բարերար անդրադարձ ունեցավ: Տեխնիկական-շինարարական գիտելիքները զուգակցվեցին գեղարվեստական-ճարտարապետական ունակություններին, որոնցով հարստացած՝ նա 1936-ին ավարտեց այդ հաստատությունը: Որպես տեխնիկ-նախագծող, աշխատանքի անցնելով ճարտարապետ Միքայել Մազմանյանի արվեստանոցում,


նա մասնակցել է տարաբնույթ շենքերի նախագծերի մշակմանը, որոնցից առավել նշանավորը Գրքի պալատն է (այժմյան հրատարակչությունների շենքը՝ կառուցված Կորյունի և Տերյան փողոցների անկյունում): Աշխատակցելով հեղինակներին՝ Միքայել Մազմանյանին և Հովհաննես Մարգարյանին, Բաղդասար Արզումանյանը հրապուրվում է ճարտարապետությամբ, որոշում է կատարելագործվել՝ 1938-ին ուսումը շարունակելով Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետում: Նրա ուսումնառությունն անցնում է այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ Հայաստանում ծավալված բուռն շինարարության բովան հայկական նորոգ ճարտարապետությունը զարգանում էր՝ հիմնվելով ժողովրդի հարուստ ժառանգության, ավանդույթների ստեղծագործական վերախմաստավորման վրա: Հայ բազմատաղանդ քաղաքաշինարար և ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը ստեղծագործական այդ ուղղության առաջատարն էր: Նրա լավագույն գործերը՝

օպերայի և բալետի թատրոնը, կառավարական տունը և այլ շենքեր, նպաստում են ճարտարապետական կրթօջախի ապագա ճարտարապետների ճշմարիտ դաստիարակությանը: Դրան հետամուտ էին ճարտարապետության ամբիոնի դասախոսները, որոնք ջանքեր էին գործադրում բարձրորակ մասնագետներ պատրաստելու համար:

Բաղդասար Արզումանյանի ուսման տարիները համընկնում են խորհրդային երկրի ամենամոռայլ ժամանակաշրջանի հետ: Հնձում էր ստալինյան եղեռնը. նրա ուսուցիչներից Միքայել Մազմանյանն ու Գևորգ Քոչարը հայտնվում են հեռավոր աքսորում. բանտարկվում է պրոֆ. Նիկողայոս Բունիաթյանը: Պակասը կարծես լրացնում է 1941 թ. հունիսին սկսված Հայրենական մեծ պատերազմը: Երրորդ կուրսի ուսանող էր, երբ ի թիվս բազում ուսանողների, Բաղդասար Արզումանյանը 1942-ին զորակոչվում է խորհրդային բանակ: Զենիթահրետանային ուսումնարանում նախապատրաստվելով՝ նույն տարվա մարտ ամսին լեյտենանտի կոչմամբ մեկնում է գործող բանակ: Անցնում է Հայրենական պատերազմի դժվարին ու մահաբեր ճամփաներով, մարտնչում Կալինինյան, Բելոռուսական, Մերձբայթյան ռազմաճակատներում, մասնակցում Քյունիքսբերգ քաղաքի գրավմանը, արժանանում մարտական խրախուսանքների: Մարտերից մեկի մասին նա պատմում է. «Մարտական առաջադրանք էինք ստացել ապահովել մեր հետևակի առաջխաղացումը՝ պաշտպանելով թշնամու օդային հարձակումներից: 1944 թ. հունիսի 23-ին՝ երեկոյան, արևը մայր մտնելուց առաջ, շատ ցածր թռիչքով անտառից դուրս եկան վեց ինքնաթիռ ու սկսեցին գնդացրային կրակ տեղալ մեզ վրա: Բարեբախտաբար մարտկոցը մարտական վիճակում էր: Այդ օրը կործանեցինք յոթ ինքնաթիռ»: Այս սխրագործության համար ինքն ու դասակի զինվորներն արժանանում են պարգևների:

Պատերազմը ավարտելուց հետո Բաղդասար Արզումանյանը շարունակում է ծառայել Արևելյան Գերմանիայում և զորացրվում է միայն 1946-ին՝ կուրծքը զարդարած «Հայրենական պատերազմի 2-րդ կարգի» և «Կարմիր աստղ» շքանշաններով, «Արիության համար», «Քյունիքսբերգի գրավման համար», «Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար» և այլ մեդալներով:

Վերադառնալով Երևան՝ նրա գլխավոր նպատակը թերավարտ ուսումը լրացնելն է լինում: Ծարտարապետական կրթօջախը գրկաբաց է ընդունում հայրենիքի պաշտպաններին: Առանձնակի պայմաններ են ստեղծվում նրանց համար: Ծարտարապետության ամբիոնը, որի վարիչն էի ես, և դասախոսական կազմը ամեն ջանք գործադրեցին, հոգատարությամբ շրջապատեցին, պայմաններ ստեղծեցին, որպեսզի նրանց ուսումնառությունը ընթանա բնականոն կերպով: Նախապատերազմյան դասատուներից Միքայել Մազմանյանը և Գևորգ Քոչարը տակավին գտնվում էին հեռավոր աքսորում: Ամբիոնի փորձառու դասախոսներն էին Սամվել Սաֆարյանը, Մարկ Գրիգորյանը, Հովհաննես Մարգարյանը, Զավեն Բախչինյանը, Տիրան Երկանյանը: Դրանց կազմը լրացրին Երիտասարդ շնորհալի ճարտարապետներ՝ Ռաֆայել Իսրայելյանը,



Խաչքար նոր Վեհարանի բակում



Բաղդասար Արզումանյանը Սփյուռք-Հայրենիք հուշակոթողի մոտ

Գրիգոր Աղաբաբյանը, Հրայր Իսաբեկյանը, Գևորգ Թամանյանը, Գևորգ Մուշեղյանը և ուրիշներ:

Մասը կազմելով չորրորդ կուրսի ուսանողների՝ պոլիտեխնիկական ինստիտուտում շարունակում են կրթություն ստանալ Հայրենական պատերազմի մասնակիցներ Բաղդասար Արզումանյանը, Շմավոն Ազատյանը և Զաքար Զաքարյանը (վերջին երկուսը՝ հաշմանդամ): Մեր ձեռքը նրանց գլխին եղավ, նրանք մշտապես գտնվեցին մեր ուշադրության կենտրոնում, որի շնորհիվ ցուցաբերեցին գերազանց առաջադիմություն և բարձր գնահատականներով ավարտեցին:

Այն տարիներին նոր էր սկսվել ավանդվել հայկական ճարտարապետության պատմություն դասընթացը: Օգտակար եղավ դասախոսություններին համընթաց ուղևորություններ կատարել դեպի ճարտարապետական հուշարձաններ: Բաղդասար Արզումանյանն ու Շմավոն Ազատյանը առանձնակի հետաքրքրությամբ էին մասնակցում այդ ուղևորություններին, դիտում էին ու նկարում: Դրանք էապես նպաստում են նախնայց վարպետների մեծագործությունների նկատմամբ հարգանք առաջանալուն, նրանց փորձով ու կարողությամբ լիցքավորվելուն, հայկական ճարտարապետության ու զարդարվեստի ավանդույթները շարունակելուն ու զարգացնելուն:

1949-ին ավարտելով ինստիտուտը՝ երկուսն էլ աշխատանքի են անցնում Երևան-նախագիծ ինստիտուտում, որտեղ իր հիսունամյա գործունեության քսան տարին է անցկացնում Բաղդասար Արզումանյանը: Այս հաստատությունում էին մշակվում մայրաքաղաքի կառուցապատման տարաբնույթ նախագծերը: Բաղդասար Արզումանյանը իր գործունեությունը սկսում է որպես շարքային նախագծող, իսկ երբ ծլարձակվում են նրա մասնագիտական կարողությունները, արժանանում է արվեստանոցի գլխավոր մասնագետի, ապա՝ ղեկավարի պաշտոններին:

Իր բազմաբեղուն կյանքի տարիներին նա ծավալում է ստեղծագործական բուռն գործունեություն, մասնակցում Երևանի, Վանաձորի և Հայաստանի տարբեր բնակավայրերի կառուցապատման ու բարեզարդման հայրենանվեր գործին՝ ներդնելով իր ստեղծագործական կարողությունը, շինարարի փորձը: Անհատապես ու հեղինակությամբ կազմած նախագծերով շարք են մտնում հասարակական շենքեր, գիտահետազոտական և արտադրական համալիրներ, մետրոպոլիտենի ստորգետնյա կայան,



կոթողներ, որոնք ծանրակշիռ ներդրում են մեր նորոյա ճարտարապետական գանձարանում: Դրանց քանակը քսանից ավելին է, ուստի, հարմար ենք նկատում անդրադառնալ առավել կարևորներին:

Փորձառու ճարտարապետ Հովհաննես Մարգարյանի հետ նրանք մեծ ավանդ են ներդրում Վանաձոր քաղաքի հասարակական գլխավոր կենտրոնի կառուցապատման գործում: Նրանց նախագծերով են իրականացվում հրապարակի երեք կողմերը պարփակող քաղաքապետարանի, «Գուգարք» հյուրանոցի ու բնակելի տների երկու խմբերը: Տեղադրությամբ, մասշտաբով, ճարտարապետությամբ և հրապարակի վերին մասում տեղադրված վարչական շենքով (հեղինակ՝ Զավեն Բախչինյան), գոյացել է քաղաքաշինական մի հոյակապ համալիր՝ երկրորդը Երևանի Հանրապետության հրապարակից հետո:

Միջնադարի ճարտարապետության վարպետներից դաս առնելով՝ Բաղդասար Արզումանյանը կարողացել է վարպետորեն ներդաշնակել Ծաղկաձորի, Հանքավանի և Վանաձորի պիոներական ճամբարների համալիրները՝ ստեղծելով շրջակա գեղատեսիլ բնության և ճարտարապետության յուրօրինակ միասնություն: Ինչպես ասվում է, նկարիչը պատկերում է բնությունը, ճարտարապետը՝ զարդարում: Դա լիովին հաջողվել է հեղինակին: Դրան մեծապես օգտակար են եղել արտասահմանյան երկրներ (Թուրքիա, Հնդկաստան և այլուր) կատարած ճանապարհորդությունները, որոնք նպաստել են նրա գեղագիտական ընկալումների հարստացմանը:

Երևանի հիմնադրման 2750-ամյակին ի հիշատակ՝ 1968-ին Էրեբունի հնավայրի ստորոտում տեղ է գրավում թանգարանի շենքը: Բաղդասար Արզումանյանը, հեղինակակցությամբ ճարտարապետ Ծմավոն Ազատյանի և քանդակագործ Արա Հարությունյանի, ստեղծում է կոթողային մի կառույց, որը մեկնաբանվում է որպես ճարտարապետության ու քանդակի միասնություն: Դեպի թանգարանի շենք է տանում մուտքին հասնող աստիճանավոր լայն ուղին: Առաջին հարկը լուծված է որպես քառանկյալ շենքի պատվանդան: Բուն թանգարանի ողջ խուլ ճակատը քանդակապատ է: Հարթ ու խուլ են մյուս ճակատները, իսկ ցուցարաններն ապահովված են վերևից թափանցող բնական և արհեստական լույսերով:

Երևանի հիմնադրման 2750-ամյակի տոնահամբույթները մասնակցած Ուզբեկստանի հյուրերը, հավանելով առանձնապես թանգարանի շենքը, նույնպիսի թանգարանի նախագիծ են պատվիրում հեղինակներին: Ի նշանավորումն Սամարղանդ քաղաքի հիմնադրման 2450-ամյակի՝ այն կառուցվում է հիշյալ քաղաքում:

Ճարտարապետ Հովհաննես Մարգարյանի հետ Բաղդասար Արզումանյանի ևս մեկ համագործակցության արդյունք է մի ինքնատիպ կառույց՝ Նորք տանող ճակատի ներքին մասի կայարանը: Այն տեղադրված է Գետառի ձախ ափից վեր՝ Կորյունի և Նալբանդյան փողոցների հատման հանգույցում: Հատակագծով բոլորակ շենքը տեղ է գրավում բարձունքին, որն ունի հանդիսավոր աստիճաններ: Ապակեպատ կայարանի առաջին հարկում նախատեսված է, երկրորդ հարկում՝ ճակատային դահլիճը:

Առավել բարդ ու բազմաբովանդակ է Երևանի Սերգեյ Մերգելյանի անվան մաթեմատիկական գիտահետազոտական ինստիտուտի համալիրը՝ նախագծված Հովհաննես Մարգարյանի կողմից համահեղինակներն են Բաղդասար Արզումանյանը և Ծմավոն Ազատյանը:

Բաղդասար Արզումանյանը Հովհաննես Մարգարյանի ղեկավարությամբ մասնակցել է նաև Երևանի ռադիոտան նախագծմանը, իր ներդրումն է կատարել շենքի արտաքին ճակատի և ներքնատեսքի գեղատեսիլ դրվագումներում:

Առավել հիշարժան է Երևանի մետրոպոլիտենի «Սասունցի Դավիթ» կայարանը, որը նախագծվել է Բաղդասար Արզումանյանի գլխավորությամբ՝ մասնակցությամբ ճարտարապետներ Սարգիս Ներսիսյանի և Արեգ Իսրայելյանի: Ըստ առաջադրանքի՝ մետրոպոլիտենի այս կայարանի համալիրը պիտի տեղավորվեր Երևանի երկաթուղային կայարանի կառավարչության տակ: Կազմված և հավանության արժանացած



Միսիսիանի Բարձրավան գյուղի հուշարձանը՝ նվիրված Մեծ հայրենական զորհրդին

նախագծով կայարանամերձ հրապարակից կայարանի շենքի գլխավոր մուտքի երկու կողմերի սանդուղքները իջնում են կայարանի շենքի գետնահարկ, որտեղից մարդկային հոսքն անցնում է դրամարկղային սրահ, այնուհետև երկու կողմերում կրակների շարք ունեցող երկար միջանցքով շարժաստիճաններով բարձրանում վերգետնյա կառավարչություն: Ճանապարհը երկար է, հոգնեցուցիչ, ուստի հեղինակները հոգ են տարել կուտակումներն ու շարժման խճողումները կանխելու համար:

«Սասունցի Դավիթ» կայարանի հարդարանքներում օգտագործվել են հայկական ճարտարամիջոցներ. շարժաստիճանների երկու պատերին «Սասունցի Դավիթ» էպոսի մոտիվներով բարձրաքանդակներ են (հեղինակ՝ Արտաշես Հովսեփյան):

Երևանի կոյնակի գործարանի հեղինակ Հովհաննես Մարգարյանի մահվանից հետո արտադրանքը ավելացնելու կարիք է առաջանում, հետևապես անհրաժեշտ է լինում ընդարձակելու գործարանը: Նկատի ունենալով, որ Բաղդասար Արզումանյանը մասնակցել է գործարանի առաջին հերթի նախագծմանը, նրան պատվիրում են կազմել լցման արտադրամասի և համտեսի սրահի նախագիծ: Այդ գործում ներգրավվում են ճարտարապետներ Սարգիս Ներսիսյանը և Հասմիկ Ալեքսանյանը, ու համատեղ կազմած նախագծով կառույցը իրականացվում է: Համտեսի սրահի ներքնատեսքի ճարտարապետական-գեղագիտական բարձր արժանիքների համար համահեղինակներն արժանանում են ՍՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի ոսկե մեդալին:

Մեր հերոսի ծանրակշիռ և դժվարին իրականացումներից մեկն է «Մոսկվա» կինոթատրոնի դիտարահի ընդարձակման նպատակով կատարված վերակառուցումը: Բաղդասար Արզումանյանի ղեկավարած ճարտարապետների ու ճարտարագետների խումբը հաջողությամբ է իրականացնում այդ գործը: Գնահատելիս այն է, որ աշխատանքներն ամենևին չեն խաթարում մայրաքաղաքի այս կարևոր հանդիսատեսային շենքի ո՛չ արտաքին, ո՛չ էլ ներքին տեսքերը (հեղինակներ՝ Գևորգ Քոչար և Տիրան Երկանյան):

Հայրենիքի համար մարտնչած Բաղդասար Արզումանյանն իր հոգու պարտքն է համարել մասնակցել պատերազմում զոհված հայ մարտիկների հիշատակի հավերժացման սրբազան գործին: Իր նախագծերով հայրենի գյուղում և Հայաստանի տարբեր շրջաններում կառուցվում են տասից ավելի հուշարձաններ, որոնք ճարտարապետության փոքր ձևերի լիարժեք ստեղծագործություններ են:



Աղբյուր Գեղարդավանքում

Վերը շարադրվածներով չեն լրանում Բաղդասար Արզումանյանի վաստակին պատկանող գործերը: Ուստի ստորև հարկ է հիշատակել ինքնուրույն կամ հեղինակակցությամբ նախագծված տարբեր տիպի շենքերը:

ա. «Էրեբունի» հյուրանոցի շենքը՝ տեղադրված Հանրապետության հրապարակի հարավակողմի հետնամասում (հեղինակային խումբ):

բ. Կիրովի անվան գործարանի բնակելի տները Երևանի Թամանցիների փողոցում:

գ. Բնակելի տուն Սվեդլովի (այժմ՝ Փավստոս Բուզանդի) փողոցում, որի մի ճակատն ուղղված է Մաշտոցի պողոտայի կողմը, ուր «Աերոֆլուտի» բաժանմունքն է:

դ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության շենքը:

ե. ՀԽՍՀ գյուղատնտեսության նախարարության շենքը:

զ. 8-ամյա դպրոցի շենք Օշական գյուղում:

է. Երևանի Աջափնյակ բնակելի շրջանի 2-րդ, 4-րդ, 7-րդ, 10-րդ և 15-րդ թաղամասերի բնակելի տները (նախագծված հեղինակային խմբերով):

Բաղդասար Արզումանյանը՝ հայրենի բնության և այն զարդարող ճարտարապետական հուշարձանների պաշտամունք ուներ: Իր բազմաբնույթ գործունեությունը նա մշտապես զուգակցում էր հայրենի պատմական կոթողների ուսումնասիրությամբ: Ճարտարապետ Ծմավոն Ազատյանի հետ կատարել են ճարտարապետական բազմաթիվ հուշարձանների չափագրություններ: Այդ շնորհակալ աշխատանքը միևնույն ժամանակ մեծապես նպաստել է հեղինակների՝ խորամուխ լինելու հայկական ճարտարապետության և զարդարվեստի հնարքներում, դասեր առնելու միջնադարի մեծատաղանդ վարպետներից, ինչը իր անդրադարձն է ունեցել նրանց ստեղծագործություններում:

Այդ է պատճառը, որ Բաղդասար Արզումանյանի արվեստը ինքնաբերական ազգային է և հոգեհարազատ ժողովրդին: Դրանում

դրսևորված է նրա մտածելակերպի ողջ էությունը, բազմաժանր կերպով արարելու անսպառ հնարավորությունը: Դա դրոշմված է առավելապես Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի գահակայների պատվերով կատարված իրագործումներում: Դրանցով բազմատաղանդ Բաղդասար Արզումանյանը արժանի տեղ է գրավել նորոյա հայ ճարտարապետության Թամանյանական դպրոցի վարպետների շարքում:

Բաղդասար Արզումանյանը ընկերական շրջանում հանրահայտ էր նաև որպես բարձրաշնոր ծաղրանկարիչ: Դիպուկ են նրա հերոսների սրամիտ արտահայտությունները, յուրաքանչյուրում արտահայտված են նրանց դեմքերի ու բնավորության առանձնահատկությունները: Հնարավոր չէ առանց լիաթոք ծիծաղի դիտել ճարտարապետներ Ռաֆայել Իսրայելյանի, Հովհաննես Հակոբյանի (Յանսոնի), Հովհաննես Բաբաջանյանի ու պրոֆեսոր Լևոն Մանուչարյանի ծաղրանկարները:

Սերգեյ Արուտչյանից հետո Բաղդասար Արզումանյանը երկրորդ ճարտարապետն է, որ հանդես է եկել որպես ծաղրանկարիչ: Առաջինը դարձավ միայն հանրահայտ ծաղրանկարիչ, իսկ Բաղդասար Արզումանյանը մնաց հավատարիմ իր մասնագիտությանը՝ պակաս հայտնի որպես ծաղրանկարիչ:

Բաղդասար Արզումանյանը բարոյական բարձր նկարագրի տեր էր, ընկերասեր, բարի: Այս հատկություններով նա սիրվեց, հարգանքի արժանացավ, բարի հիշատակ թողեց իրեն ճանաչողների, իր ստեղծագործական վաստակը գնահատողների շրջանում:

Ի գնահատումն նրա ստեղծագործական վաստակի՝ պարգևատրվել է «Պատվի համար» շքանշանով, մեդալներով, արժանացել «Վաստակավոր շինարարի» պատվավոր կոչման, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Սուրբ Մեսրոպ Մաշտոց և Սահակ Պարթև» շքանշանի:

ՎԱՐԱՋԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ոսկեկուռ խաչը

Ոսկեկուռ այբուբենի հաջողությունը Վեհափառ Հայրապետի ցանկությունն առաջացրեց ստեղծել մի նոր ու մնայուն գործ՝ ոսկյա խաչ, որի նախագծումը վերստին հանձնարարեց Բաղդասար Արզումանյանին:

Կրկին խոսքը տրամադրենք հեղինակին. «Վեհափառ Հայրապետը նորից է ինձ հրավիրում ու հարցնում.

- Ի՞նչ նոր գործով հարստացնենք մեր թանգարանը:

- Ոսկե խաչով, Վեհափառ Տեր:

- Ինչո՞ւ,- հարցնում է:

- Հայ ժողովրդին պահպանել են Այբուբենն ու խաչը: Նրանք իրար կողքի պիտի լինեն:

- Դու իմ միտքն ես կարդում,- բացականչում է Վեհափառը»:

Որոշված էր տեղադրության ու ցուցադրության պայմանները թողնել նույնը, չափերը՝ 80x130 սմ, նույնպես: Գործի անցնելով՝ Բաղդասար Արզումանյանը կազմում է նախագծի մի քանի տարբերակ: Դրանցից մեկի վրա դրոշմած է մակագրություն.

«Կատարեալ է Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց 23 ապրիլ 1978»:

Ոսկյա խաչը նախագծելիս հեղինակը հիմք է ընդունում քարակերտ խաչքարերին հատուկ հորինվածքը, սակայն ավելի նուրբ ու մանված մանրամասներով՝ համապատասխան նյութին ու ոսկերչական արվեստին: Դրա փորձը ինքը ուներ, քանզի իր նախագծերով էին Մայր Աթոռի համար պատրաստվել արծաթյա փոքր խաչեր, պանակներ ու եկեղեցական տարատեսակ սպասքներ:

Օնիքսյա սալի կենտրոնում տեղ գրաված ոսկյա խաչի ուղղահայաց ձողի թևի աջ ու ձախ կողմերում տարածվում են կիսաշրջան սկիզբներով,

# Ոսկեկուռ և ադամանդապատ մեսրոպյան այբուբենը

Հախքան բուն ստեղծագործությանն անդրադառնալը՝ խոսքը տրամադրենք հեղինակին:

«Մի երեկո ինձ իր մոտ է հրավիրում Վեհափառ Հայրապետը.

- Կուզեմ հայկական այբուբենը պատրաստել տալ՝ թանգարանում ցուցադրելու համար:

- Վեհափառ՝ Տեր, ես ոսկերիչ չեմ, քարերի մարդ եմ, ճարտարապետ:

- Ո՛չ, դու կարող ես:

Ես ստիպված էի համաձայնել:

- Ինչի՞ց. - հարցրի:

- Մետաղից:

- Արծաթի՞ց,- կրկին հարցրի:

- Ո՛չ, ոսկուց,- պատասխանեց Վեհափառը:

- Այդքան ոսկի որտեղի՞ց, Վեհափառ՝

- Ադիկա իմիս հոգսն է,- ժպտալով պատասխանեց նա»:

Վեհափառ Հայրապետը, մեծ կարևորություն տալով հայկական տառերի գյուտին, այն դիտում էր որպես բախտորոշ իրադարձություն հայ ժողովրդի կյանքում, միևնույն ժամանակ այն գնահատում որպես ազգապահպանության հզոր միջոց: Այդ իսկ պատճառով նա ցանկանում է սուրբ Մեսրոպ Մաշտոցի և սուրբ Սահակ Պարթևի անմոռանալի սիրանքը մարմնավորել բարձրարվեստ մի կոթողով, ոսկերչական արվեստի յուրահատուկ միջոցներով:

Բաղդասար Արզումանյանը հնարամտորեն է մշակել Մեսրոպյան տառերի համակարգը, որը փակցվում է 80x130 սմ չափերի օնիքսյա հղկված սալի վրա: Նշված չափերն էլ թելադրվում են 36 տառերի (6-ը ուղղահայաց սյուներով, 6-ը՝ հորիզոնական շարքերով, յուրաքանչյուրը՝ 6x10 սմ չափերի), տառատեսակների դասավորությունը:

Հեղինակը, պահպանելով տառերի վերը նկարագրված դասավորությունը, խուսափում է միօրինակությունից ու չիսխտելով այբուբենի հաջորդականությունը՝ 36 տառերից 28-ը նկարում է՝ վերարտադրելով 5-7-րդ դարերի ավանդական տառաձևերը, իսկ 8-ը (Ջ, Է, Ժ, Ծ, Ծ, Զ, Կ) նկարում է արծվագիր տառերով: Ընտրությունը կատարված է այնպիսի հաջորդականությամբ, որպիսին պահանջվում է տառերի հաջորդական և ուղղահայաց հորինվածքի հավասարակշռությունը պահպանելու

հյուսկեն, նախազգար ճյուղեր, որոնց վրա թառած են գուլիները դեպի կենտրոն ուղղած աղավախներ՝ որպես Սուրբ հոգու խորհրդանիշներ: Երկնային յուրաքանչյուրը հենվում է քանդակագարի շրջանակով պատած քանդակագարի վարդյակներին, որոնց միջև տեղ է գրավում բողբոջ ծաղիկը՝ կյանքի հավերժության խորհրդանիշը: Հորինվածքի կենտրոնում բուն խաչն է իր վերին ու կողմնային թևերով՝ բոլորն էլ պատած բուսական և երկրաչափական զարդանախշերով: Խաչաթևերի հատման հանգույցը՝ ընդգծված է ութթևանի աստղով՝ շրջապատված արևը խորհրդանշող ճառագայթներով, իսկ հետևի կողմից՝ քանդակագարի շրջանակով: Աստղի ու պատվանդանի զարդանախշերի բոլոր հանգույցների կենտրոններում տեղավորված են մեկական թանկագին քարեր:

Օնիքսյա հարթությունը չորս կողմից երիզված է ոսկեկուռ անկրկնելի զարդանախշերով պատած շրջանակով, որի վրա գտնվող համաչափորեն միմյանց հաջորդող աստղիկների կենտրոնները նույնպես զարդարված են թանկագին քարերով: Ողջ հորինվածքի ստորին մասում՝ զուգվարդյակների տակ ձգված ոլորուն ժապավենի վրա, տեղավորված է հետևյալ արձանագրությունը.

«Նուրբ Սուրբ Էջմիածնին վասպուրականցի Արծրուն և Էլիզ Ջրբաշեններից»:

Ժապավենի ձախակողմյան վարդյակի վրա կատարված են «Սրբ Էջմծն», իսկ աջակողմյան վարդյակին՝ «թ. ՌՆԻԵ (1976)» մակագրությունները: Դրանից ներքև՝ երկկող ժապավեններից ձախակողմյանի վրա մակագրված է. «Նախագծեց Բաղդասար Արզումանյանը», իսկ աջակողմյանի վրա՝ «Կատարեց ոսկերիչ Ժիրայր Չուլոյանը»:

Շնորհաշատ հեղինակի ու կատարող վարպետի միասնական ջանքերի շնորհիվ քրիստոնեական հավատքի խորհրդանիշը՝ խաչը, մարմնավորում է ստացել հայկական արվեստի ավանդույթներին հարազատ ձևերով ու ոսկերչական բարձր վարպետությամբ՝ ըստ արժանիության դառնալով մեր օրերի կիրառական արվեստի անկրկնելի գործերից մեկը:

ՎԱՐԱՋԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

համար:

Արծվագիր և կենդանագիր տառերը լայն տարածում են գտել հայկական մանրանկարչության մեջ: Դրանցում հիմնական արտահայտչամիջոցը տառերի հորինվածքն ու գունավորումն է: Ըստ նախագծի՝ այբուբենի տվյալ համակարգում արծվագիր տառերով մուծված 8 տառերը զարդանախշված են հայկական ճարտարապետական զարդամոտիվներով, չլրկնվող հյուսվածքներով, տերևներով ու վարդյակներով, որոնք ընդհանուր համակարգում աշխուժացում մուծելով հանդերձ համապատասխանում են գործածված նյութի՝ ոսկու գեղամշակման յուրահատուկ պահանջներին:

Հորինվածքով առանց այն էլ գեղեցիկ մաշտոցյան տառերն իրենց հպարտ ու խրոխտ, միևնույն ժամանակ դասական պարզ ու արտահայտիչ ձևերով առավել գեղեցիկ են դարձել, քանզի մարմնավորվել են ազնիվ մետաղով՝ ոսկով, և ընդլայնված են ադամանդներով ու թանկագին գունավոր քարերով: Շնորհաշատ հեղինակի ու ոսկերիչ վարպետի երկամյա համատեղ ջանքերով մեսրոպյան տառերն իրենց հնչեղ հմայությամբ ընկալվում են որպես բարձրարվեստ ստեղծագործություն, ոսկերչական արվեստի գլուխգործոց:

Օնիքսյա տախտակը երիզված է ոսկեկուռ շրջանակով ու պսակված է մագաղաթյա ձեռագրերում հանդիպող խորանով, որի կենտրոնում տեղավորված է Սուրբ հոգին խորհրդանշող աղավախին: Նրանից իջնող ճառագայթները սփռված են այբուբենի կողմը՝ խորհրդանշելով սուրբ հովանավորությունը:

Խորանը երիզող շրջանակի վրա կատարված է հետևյալ մակագրությունը.

«Ի հայրապետութեան Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի Ամենայն Հայոց ի թուին ՌՆԻԵ (1976)»: Ներքևում՝ նույնպես շրջանակի վրա, արձանագրված է.

«Նախագծեց ճարտարապետ Բաղդասար Արզումանյանը, կատարեց ոսկերիչ Ժիրայր Չուլոյանը»:

Այբուբենի և խորանի շրջանակի պատրաստման համար գործադրվել է 23,5 կգ ոսկի, յուրաքանչյուր տառ ընդլայնվել է 8-16, որոշ տառեր՝ 18 ադամանդներով:

ՎԱՐԱՋԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Արարատյան թեմի առաջնորդարանի թանկ խաչքարերը



# Միխայել Ղուկասյան

Միխայել Ղուկասյանի հետ առաջին ծանոթությունս մոտ 50 տարի առաջ էր՝ 1975 թվականին: Գործիսի նորաբաց քառամյա նկարչական դպրոցի առաջին դասարանի սան էի, Միխայելը՝ քանդակագործության դասատու ընկեր Ղուկասյան: Նրա դասաժամերը հարուստ էին սաների գեղագիտական ճաշակը բարձրացնող հետաքրքիր նյութերով, դաստիարակչական պատմություններով: Դասավանդման ուրույն ոճից հիշողությանս մեջ դրոշմվել են դաստիարակչական և ուսուցողական մի քանի մտքեր՝ «...Եթե մերկ կնոջ արձանների լուսանկարները տեսնելիս ձեր ներսում թաքուն հռչակաբան, ուրեմն ձեզնից ոչ միայն արվեստագետ, այլև նորմալ մարդ չի ձևավորվի: Արվեստին պետք է նայել արվեստագետի աչքերով, իսկ դրա համար պետք է կարողանալ արվեստի որևէ ճյուղին անվերապահ նվիրվել, երևակայությամբ ու տրանսպորտ ստեղծել քո ձեռագիրն արտահայտող յուրօրինակ գործեր ու ծանոթ լինել քանդակագործության ու քանդակագործների պատմությանը՝ անտիկ ժամանակներից մինչև մեր օրեր...»:



կար նայեցին՝ մեկ արձանին, մեկ՝ միմյանց, ապա լիաթոք ծիծաղեցին: Երևի իրենք էլ էին այն կարծիքին, որ արձանն իր գեղեցկությամբ գերազանցել է բնորդին...

## Ճակատագրի «մանկական» հետքը

Միխայելը սերում է բնիկ գորիսեցի Խաչուն Լաբուն (Խաչատուրի որդի Լայրապետի) գերդաստանից: Լայրը՝ ատաղձագործ-հյուսն Արմենակը, Լայրապետի թոռն էր՝ Միխայելի որդին: Նա Լայրենական մեծ պատերազմում հրաշքով էր ողջ մնացել, հետո Գորիսում ընտանիք կազմել, ունեցել վեց զավակ:

Միխայելի՝ նկարչության ու քանդակագործության հանդեպ սերը, նկարիչ-քանդակագործի բնատուր շնորհի ծնունդ են: Փոքրիկ Միխայելի մանկական խաղերի թեմաներն էին՝ «Մեզնից ո՞վ է ի՞նչ լավ բան կարող է անել», «Ո՞վ այնպիսի բան կստեղծի, որ դեռ ոչ ոք չի ստեղծել...» Բնականաբար, նման պրպտուն մտքերը տանում էին դեպի ստեղծագործական աշխարհ... Դեռևս չձևավորված արվեստագետն իր որոշումը կայացնում է սկզբում երեքուստի, ապա՝ համարձակ ու վճռական: Սա՝ է բնատուր ստեղծագործական ձիրքով օժտված արվեստագետի էությունը:

Միխայելի մանկական ընկերները ճանաչված բրուտազործ Լրանտ Բաղդասյուրյանն ու նկարիչ Ռազմիկ Արզումանյանն էին: Նրանք մանկուց միշտ միասին են եղել, սիրել են հայրենի բնությունը, այնքան են քայլել Քարահունջի, Գորիսի, Վերիշե-

նի հնավայրերի շրջակայքում, որ անգիր գիտեին յուրաքանչյուր քար ու թփի տեղ: Հետագայում, երբ երեք անբաժան ընկերներից մեկը մի բան էր ստեղծում, դա մյուս ընկերների կողմից լայն քննարկման առարկա էր դառնում: Ստեղծագործության հեղինակն անպայման հաշվի էր առնում ընկերների կարծիքը և, ըստ այդմ, իրենց ստեղծագործությունը հասցնում ավարտուն տեսքի: Հրանտը շուտ հեռացավ կյանքից, իսկ քարգործ-վարպետ Ռազմիկը երկար ժամանակ ընտանիքով բնակվում է Կանադայում: Ռազմիկը թեև գծանկարի մասնագետ է, վերջին տարիներին վարպետացել է նաև քանդակագործության ասպարեզում՝ Գորիսի Ակսել Բակունցի տուն-թանգարանի ծաղկազարդ խաչքարի հեղինակն է: Վերջերս Գորիսում էր, պատմեց Կանադայում ստեղծած իր քանդակների մասին...

## Տուն, որը նաև... արվեստանոց էր

Միխայելն ավարտել է Գորիսի 2-րդ միջնակարգ դպրոցը: Այդ ընթացքում նրան արդեն գիտեին որպես պատանի վարպետ, ով ուներ սուր աչք, ուժեղ հիշողություն, կարողանում էր տեսածն իսկույն անթերի թղթին հանձնել: Դպրոցի պատի թերթի նկարների հեղինակն էր: Նա դպրոցական տարիքից ստեղծագործում էր, ուներ բազմաթիվ գեղանկարներ, քանդակներ. փայտից, կա-

կում, խստադեմ հոր չհանդուրժող հայացքի ներքո, Միխայելի՝ անպայման քանդակագործ դառնալու համար նպատակադրվածությամբ...

## Թե կարող ես, ժամանակիդ շունչը դարձիր...

Տիկին Սուսաննան ամուսնու՝ արվեստի հանդեպ ընդգծված սերը կապում է նրա առաջին ուսուցչի՝ Արմենակ պապի՝ Իգորիից արտագաղթած ազգական Վազգեն Խչոտյանի անվան հետ, ով 1950թ.՝ Միխայելի ծննդից ի վեր, ապրում և աշխատում էր Գորիսում: Բազմաշնորհ մարդ էր, մասնագիտությամբ՝ տուն հիմնանորոգող վարպետից մինչև գեղանկարիչ: Գորիսում նրան ճանաչում էին որպես «ոչ տեղացի» պատկառազորու արվեստագետ-նկարիչ: Աշխատում էր Գորիսի թատրոնում՝ բեմադրական մասի վարիչ: «Եզոպոս»-ից մինչև Գորկու «Հատակում»՝ բոլոր ներկայացումների դեկորացիաներն իր ձեռքի գործն էին՝ տվյալ ժամանակին ու ոգուն համապատասխան: Նա նաև ներկայացումների հագուստի, հանդերձանքի ոճերն էր ընտրում-պատրաստում: Միխայելն արվեստին առնչվող շատ գաղտնիքներ նրանից սովորեց: Թեև դպրոցում արդեն շնորհալի նկարչի համբավ ուներ, բայց Միխայելի հանրաճանաչության սահմանները քաղաքում ավելի մեծացան, երբ Վազգեն Խչոտյանի առաջարկով Գորիսի թատրոնի ռեժիսորը 2-րդ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Միխայելին՝ ներկայացումներից մեկում, Էպիգորիի դեր վստահեց: Ներկայացումը մեծ հաջողություն ունեցավ, իսկ Միխայելը հարազատ քաղաքում դարձավ «իր ժամանակի հերոսը»:

## Քանդակագործին ուզում էին ինժեներ «դարձնել»...

Միխայելը 1966 թ. դպրոցն ավարտելուց հետո եղբայրների ու բարեկամների հորդորով ընդունվեց Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկայի ֆակուլտետը: Նրա կարծիքով, սակայն, ինժեներ-մեխանիկի մասնագիտությունն իր բանը չէր... Առաջին կուրսի ուսումնական տարին դեռ չավարտած, ողջ ժամանակը տրամադրեց ինքնակրթությանը՝ ցանկացած գնով նկարիչ-քանդակագործ դառնալու համար: Թեև ուսանելու ժամանակ կարող էր չծառայել բանակում, քանի որ ինստիտուտում կար զինվորական ամբիոն, բայց նա գերադասեց ուսումը կիսատ թողնել, ներկայանալ զինկոմիսարիատ: 1968-70 թթ. ծառայեց ԳԴՀ-ում՝ խորհրդային զորքերի մոտոհրաձգային զորամասերից մեկում:

Միխայելը բնութամբ ազատամիտ էր, հայ ֆիդայիները նրա պարծանքն էին: Գաղափարախոսություններից հեռու էր, թեև կոմունիստական թեմաները կարծես հետապնդում էին նրան, ու տեղական վարչակարգը՝ հնարավորությունների չափով, հաճախ փորձում էր օգտակար լինել նրան: Բեռլինում ծառայելիս քանդակից Լենինի քարե կիսանդրին, որը հրամանատարության կողմից բարձր գնահատականի արժանացավ ու տեղակայվեց զորամասի ամենաաչքի ընկնող տեղում: Միխայելին արտահերթ արձակուրդ տվեցին:

«Ջանգեզուրի տատիկ» քանդակների հերոսահին՝ հարազատ Մանուշակ տատը, թոռանը տանը տեսնելով՝ զարմացավ. «Ա՛յ բալա, բանակդ էսքան շո՞ւտ պրծավ...»: Հետագայում, ինստիտուտն ավարտելուց հետո, Գորիսի կուսշրջկոմի առաջարկով Միխայելը ստեղծեց Լենինի քարե մեծ կիսանդրին, որը նախ տեղադրվեց նախկին շրջկոմի շենքի դահլիճում, ապա տեղափոխվեց նախարարական մուտքի դիմաց: Աշխատանքը պետք է վարձատրվեր, Միխայելն ասաց՝ «Ես արվեստանոց եմ ուզում»: «Բայց դու կոմունիստ չես», - պատասխանեցին նրան ու ազատամիտ արվեստագետին ընդունեցին կոմկուսի շարքերը:

Զորացրվելուց հետո Միխայելը Գորիսում 4-5 տարի լրջորեն զբաղվեց քանդակագործությամբ: Բուն ընդունվելուց առաջ քաղաքում արդեն ճանաչված էր որպես ինքնուրույն քանդակագործ: Այդ ընթացքում Միխայելը ստեղծեց բազմաթիվ փոքր քանդակներ, աղջկա կիսանդրիներ, որոնցից հիմա արվեստանոցում կան: 19 տարեկանում

# Միխայել Ղուկասյան

ՍԿԻՉԲԸ՝ էՋ 11

կարողացավ իշխանություններին համոզել, որ ինքը կարող է ստեղծել մեծ արձաններ, որոնք կգարդարեն Գորիսի շրջանը: Ստեղծեց 4 մետր բարձրությամբ մկանուտ տղամարդու ցեմենտե ստեղծարձան: Ջլապինդ ձեռքերով հաղթանակամետ ստեղծագործ մարդը գլխավերևում երկու ձեռքով բռնել էր... աստղը: Որդին՝ Օրին, բացատրում է հոր մտահղացումը. «Արձանը թեև խորհրդային քաղաքացու կերպարանք ուներ, բայց հայրս այն քանդակել է որպես Վահագն աստված, որի ուժն ու հնարավորությունները փոխանցել է արձանին»:

Այնուհետև Միխայելը Վերածննդի դարաշրջանի արվեստի մոտիվներով ստեղծեց մոտ մեկուկես մետրանոց երկու առյուծ: Ապա՝ հեքիաթի իրական հերոսի տպավորություն թողնող՝ երկու մետր բարձրությամբ խեցու մեջ նստած սլացիկ կազմվածքով կիսամերկ մի աղջիկ, որի արձանը ներդաշնակված է ջրային տարածությանը: Այդ բոլոր արձանները տեղադրվել են 1970-75թթ. Գորիսի Սղդի գյուղի տարածքում՝ մինչև Միխայելի բուն ընդունվելը: Որոշ արձանների նյութը չի դիմացել ժամանակի քննությանը, քայքայվել է...

1975 թ. կատարվեց Միխայելի երազանքը՝ ընդունվեց Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի գեղանկարչության բաժինը:

### Դասախոսը կանխորոշեց ուսանողի ապագան

Միխայելն ուսումնական դարբնոցում ստացած տեսական գիտելիքներին գումարեց գործնական հմտությունները՝ յուրացրեց կավից ապագա արձանի նմանօրինակի ստեղծման, գիպսե կաղապարի միջոցով բնօրինակն այլ նյութի վրա ավելի մեծ չափսերով փոխանցման, արձանը նյութի տեսակին համապատասխան կերտելու գաղտնիքները: 1976 թ. Գորիսում կայացավ երիտասարդ նկարիչների բացօթյա ցուցահանդես, որտեղ ցուցադրվեցին նաև Միխայելի բազմաթիվ գծանկարները, ջրաներկով, գուաշով, յուղաներկով բնանկարները, նատյուրմորտները, դիմանկարները: Նա դժվարությամբ էր համակերպվում մտքին, որ այդտեղ քանդակ չկար ցուցադրված:

Ուսման տարիներին Միխայելին փորձով, գիտելիքներով օգնել է նրա վարպետը՝ քանդակագործության դասախոս Հակոբ Իշխանյանը: Դասախոսից շատ բան է սովորել՝ ուսման տարիներին և դրանից հետո անընդհատ այցելելով նրա արվեստանոց, ժամերով ու օրերով հետևելով նրա ձեռքերի ամեն մի շարժմանը, տեսնելով, թե վարպետի ձեռքում անտաշ քարն ինչպես է դառնում արվեստի հրաշագեղ գործ:

Միխայելի մարդամոտ բնավորության շնորհիվ, գրեթե ամեն տարի ամռանն իրենց տանը հյուրընկալվում էին իր ուսանողական ընկերներն ու դասախոսները: Մեկնում էին արշավների դեպի Սյունիքի գեղատեսիլ վայրերը՝ Որոտան, Տաթև, Սասանի կամուրջ...

Ուսումնական տարիներին Միխայելը շատ գեղանկարչական աշխատանքներ ստեղծեց: Այդ ժամանակ քանդակագործությունը կարծես հետին պլան մղվեց: Այն կրկին իր հունի մեջ մտավ, երբ նրա քանդակագործական տաղանդը նկատած պրոֆեսոր Ղուկաս Զուբարյանն նրան առաջարկեց իր հետ մասնակցել Մատենադարանի մուտքի մոտ տեղադրված արձանախմբից Կորյուն վարդապետի արձանի վերջնահղված աշխատանքներին (արձանի հեղինակը Զուբարյանն է):

Միխայելն ուսանողական տարիներին ցեմենտե ստեղծեց «Ջրահարսը» քանդակը, որը 1977 թ. տեղադրվեց Տաթև-հեկի բակում, որը մինչև հիմա պահպանվում է:

### Ո՞ր բնագավառ՝ թատրոն, քարի արտադրամաս, քարի հանք

Գորիսի նկարչական դպրոցում նկարչության և քանդակագործության դասատու



աշխատելուց հետո՝ 1986-87 թթ., Միխայելը Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի բեմադրական մասի վարիչն էր: ՀՀ վաստակավոր արտիստ, ռեժիսոր Երվանդ Մանարյանի հետ միասին հաճախ էին լինում իր արվեստանոցում: Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի հիման վրա ՀՀ ժողովրդական արտիստ Միլիտոս Դազարյանի կողմից Գորիսի թատրոնում բեմադրվող ներկայացման համար անհրաժեշտ մի շարք պարագաներ՝ աթոռները, հնարձ սեղանի ոտքերը, նկարի շրջանակն իր տան արվեստանոցում են ստեղծվել: Այդ ժամանակ արդեն կար ՀՀ կառավարության որոշում, որի համաձայն տեղական իշխանությունները պետք է ստեղծագործող արվեստագետներին ապահովեն աշխատանքային պայմաններով՝ անվարձահատուց տրամադրելով արվեստանոց: Միխայելի հարցը դրական լուծում ստացավ՝ արվեստագետը, ի վերջո, իր հայրենի քաղաքում

ունեցավ ստեղծագործելու վայր՝ արվեստանոց: Այնտեղ տեղափոխվեց տան արվեստանոցի գրեթե ողջ պարունակությունը: Արձանների մի քանի նմուշներ մնացին տանը և առ այսօր զարդարում են Միխայելի բնակարանի սենյակները, ուր, կարծես, զգացվում է «բացակա» քանդակագործի և մի քանի ամսական «նոր» Միքայելի շունչը:

Թատրոնում աշխատելու տարիները համընկան կոոպերատիվների ստեղծմանը՝ երկրում խրախուսվեց անհատ սեփականատիրությունը: Կարծես կողմնորոշվելու ժամանակն էր՝ միայն մշակույթով բազմաշունչ ընտանիքը դժվար կբարգավաճեր: Որոշեց քարի արտադրամաս ունենալ: Մոտ երկու տարի Գորիսի տարածաշրջանը հետազոտեց՝ իմանալով՝ ի՞նչ քարեր կան, դրանցից ի՞նչ կարելի է ստեղծել՝ առանձնատների սրբատաշ քարեր, խոյակներ, նախշազարդ հատվածներ, հուշաքարեր, արձաններ... Այս աշխատանքները Միխայելի քարամշակման արտադրամաս ստեղծելու հեռանկարային ծրագրի համար կարևոր հիմք հանդիսացան: Նա պարզեց, որ Գորիսի տարածաշրջանում կան որակական բարձր հատկություններով բազալտի, գրանիտի, մարմարի հանքավայրեր: 1987 թ. Քարահունջ բնակավայրին մերձակա «Մանուշակաձորում» հիմնեց քարամշակման արտադրամաս, որը քաղաքում իր տեսակի մեջ առաջինն էր: Հետագայում նաև որակյալ բազալտի հանք ունեցավ: Այդ շրջանում քանդակագործությունը երկրորդ պլան մղվեց: Նախքան Միխայելի «ստեղծագործական երկրորդ շնչառությունը բացվելը», նա կերտել է ևս երկու հրաշալի քանդակ: Հայրենական մեծ պատերազմում զոհված տանձատափիների հիշատակը հավերժացնող հուշարձանը, որի առաջին գծանկար-էսքիզից մինչև նախագիծը կազմել, առաջին քարից մինչև վերջին խոյակը շինարարների հետ հավասարապես տրվել ու հոյակերտ տեսքի է բերել հուշարձանի ճարտարապետն ու հեղինակը՝ քանդակագործ Միխայել Ղուկասյանը: Գորիսի Վիենի այգու շատրվանին ոսկեգույն թիթեռներ կային: Դրանք նույնպես Միխայելն էր ստեղծել:

### Բակունցյան թեման

Միխայելն ուսանողական տարիներին գիպսից քանդակել էր Բակունցի կիսանդրին, որը երկար տարիներ տեղադրված էր Գորիսի Ակսել Բակունցի տուն-թանգարանի նախադռան մոտ: Թանգարանի տնօրենության հետ խորհրդակցելուց և իրավասու մարմինների թույլտվությունը ստանալուց հետո Միխայելն իր միջոցներով կերտեց Բակունցի քարե արձանը, որը հանդիսավորապես բացվեց 2016թ.: Այն, կարծես, Բակունցի մասին «դրսում լաժծի» ու «ներսում տեսածի» միջև մի յուրօրինակ կապող օղակ է. գրողի մասին առաջին անգամ լաժծ օտարերկրացին լինելով Գորիսում և քաղաքի Ակսել Բակունցի փողոցում տեսնելով գրողի արձանը, անպայման ուզում է մտնել դռնից ներս, տեսնել՝ ի՞նչ վայր է դա, որի մասին խոսում են բոլորը...

### Ջանդակագործի գլուխգործոցը

2015-16 թվականներին Միխայելի տղաներն արդեն ինքնուրույն կարողանում էին կարգավորել քարի արտադրամասի գործերը, որն ամբողջապես խլում էր Միխայելի համար այնքան թանկ ստեղծագործելու ժամանակը: 2016-18 թթ. կավից ավարտեց մի կոթողային արձան, որը երկու անվանում ուներ՝ «Մեծ մամա»՝ իր Մանուշակ տատի իրական կերպար, և «Մայր Զանգեզուր»՝ որպես Գորիսի տարածաշրջանի այցեքարտ հանդիսացող կոթողային գործ (որդիները 3 մետրանոց արձանի գիպսե կրկնօրինակը տեղափոխել են քարի արտադրամաս, որպեսզի հոր երազանքն իրականացնեն իրենց ձեռքով, իրենց բազալտի հանքանյութից կերտեն հոր ստեղծած քանդակը և տեղադրեն Գորիսի տեսարժան վայրերից մեկում): Քանդակում տատը Զանգեզուրի տարագրվ է, գրկին՝ չարաճճի երեխա (նախատիպը Միխայելի փոքր եղբայր Աշոտն է), ով ուզում է տատի գրկից պոկվել դեպի ազատություն: Զանգեզուրցի մոր մի ձեռքն Աստվածաշնչի վրա է, մյուս ձեռքով պինդ գրկել է երեխային, որի մի ձեռքի խաչը վերափոխված է թրի...

### Առեղծվածային 2022-ը

Երբ Գորիսի պետական համալսարանում բացվեց նկարչության բաժին, Միխայելն աշխատեց գեղանկարչության ու քանդակագործության դասախոս: 2022 թ. գարունն ասես զարթոնք բերեց նրան՝ համալսարանի 1-ին հարկի ընդարձակ սրահում բացվեց Միխայել Ղուկասյանի անհատական ցուցահանդեսը, որտեղ նրա տարբեր տարիների գծանկար-գունանկարներն էին, Ակսել Բակունցի արձանի ու կիսանդրու գիպսե նախատիպերը: Ցուցահանդեսը շատ այցելուներ ունեցավ: Այն բացահայտեց Միխայել Ղուկասյան քաղաքացու, նկարիչ-քանդակագործ-արվեստագետի կերպարը: Այդ ընթացքում Միխայելը գիշերուօգր աշխատում էր Ակսել Բակունցի մեկ այլ կիսանդրու վրա, որը պետք է տեղադրվեր քաղաքի՝ գրողի անունը կրող դպրոցի բակում: Օգոստոսի 20-ին Միխայելն ու որդիները տեղադրեցին արձանը: Որպես պատվավոր հյուրեր, նրանց հրավիրեցին գրողի կիսանդրու և հիմնանորոգված դպրոցի հանդիսավոր բացմանը՝ սեպտեմբերի 1-ին... Օգոստոսի 25-ին, սակայն, Միխայելը հանկարծամահ եղավ: Մահվանից վեց օր անց, հոգեզավակի «ծնունդը» նշվեց առանց «ծնողի» Միխայելի:

### Գտնված գանձը

Մահից հետո հարազատները Միխայելի անձնական իրերի մեջ տեսան հաստափոր մի տետր, որը գտնված գանձ էր հարազատների համար: Այնտեղ կան բնության, կյանքի, սիրո, ընկերության, ընտանիքի, արվեստի, գեղեցիկի ուրույն ընկալումների մասին մտորումներ, Աստծո, բնության երևույթների, մարդկային փոխհարաբերությունների մասին խոհափիլիսոփայական մտքեր, դիտարկումներ, բանաստեղծություններ, պատմվածքներ... Իմ խնդրանքին՝ ծանոթանալ Միխայելի անտիպ ստեղծագործություններին, որդին ասաց՝ հարազատների շրջանում կան մասնագետներ, ովքեր պետք է ամբողջապես ուսումնասիրեն այն, որից հետո ընթերցողները կտեղեկանան դրա մասին:

ՎԱՉԵ ՍԿՐՏՅԱՆ



# Զարթնած հայրենիքի գրկում՝ լեռներն իբրև բարձ



Ս. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Ա քսիմատիկ ճշմարտություն է. ստեղծել-արարել մարդու բնույթն է, և անկախ նրանից, թե ինչպես է այն արտահայտվում՝ տներ-կամուրջներ կառուցելով, բանաստեղծել-երգահանելով, մանուկներ ու հաց երկնելով, միևնույն է, դա ստեղծագործություն է, դա հենց այն

վերծանված, և յուրաքանչյուր աղեղ ու գիծ խոսում են արվեստագետ նախամարդու տիեզերածանաչության անբացատրելի հնարավորությունների մասին:

Եվ ինչո՞վ է ապացուցելի, որ այդ պարզունակ թվացող, իրականում գիտական սարքերը, ի՞նչ մի աստվածային ներշնչում են ամփոփում իրենց մեջ...

Արանք, հենց այնպես, խոհեր են, և թվում է, ոչ մի կապ չունեն խոսելիք նյութի հետ: Այժմ ավելի կոնկրետանանք և հեռավոր գալակտիկաների նավերը պատկերող պիտեկանտրոպներից ու ռոդենյան հրաշագեղ ժամանակներից՝ առանց համեմատվելու փոքր ինչ ակնկալիքի տեղափոխվենք այսօրը: Թող որ՝ կաղ, ասելիքով դեռ շփոթ, բայց այսօրը:

Շատերն են ճանաչում նրան՝ քարտաշ Արմոյին: Ոչ քանդակագործ է, ոչ էլ որևէ տիտղոսակիր: Պապը՝ տաթևի վարպետ Բաբան, և հայրը՝ քարտաշ-պատշար Հարությունը: Բնականաբար, քարի մեջ այս կամ այն ձևով «տեղավորվելու» գենը կա,



է, որին մենք անվանում ենք բարիք: Թերևս բառն այս սոցիալիստական մտադադացում ծամծմվելով, լրագրերում անհամ-անդեմ հոլովվելով, զրկվել է իր իրական փայլից, և ով գիտե, քանի տասնամյակ է պետք, մինչև վերստին մաքրվեն աղակուտակ մեր զգայարանները և ըմբռնվենք բարին իբրև բարիք և մղոններից ճանաչենք գեղեցիկը...

... Քարի վրա երգ նոտագրելը հին արվեստ է և գուցե ամենադժվարն այն իմաստով, որ քարը՝ քար է, երգը՝ երգ և սրանց կատարյալ համաձուլը իսկական հրաշք է դառնում:

Հազարամյակներ առաջ, երբ դեռ նախամարդը հնար չունեի հոգու իր ընդվզումներն արտահայտելու, երբ չկային վրձին ու ներկապանակ, գիր ու մագաղաթ, նա բրիչով ժայռապատկերներ էր փորում՝ քաղաքակրթության, փիլիսոփայության ու արվեստի հեռահար զգացումներով: Այսօր ժայռաքանդակային այդ արվեստը մինչև վերջ չի

կա շնորհալի ձեռքը և՛ անվերջ բանելու մղումը:

Արմո Առաքելյանը քիչ գործերի մասնակից չէ քաղաքում և շրջանի գյուղերում: Առ այսօր էլ շատերին է հիացնում Բռունի զոհվածների հուշարձանի նրա պատրաստած քարե շղթան, քիչ չեն շրջանում հուշարձանները, որոնց կառուցման աշխատանքներին մասնակցել է Արմո Առաքելյանը, բայց հաստատապես կարծում եմ, որ նրա հեղինակած գործերից առանձնացվելի են նրա խաչքարերը, որոնք թեպետ արդեն վարժանք, բայց կատարվում են նուրբ զգացողությամբ ու մեղվաջան: Արմոյին էլ, բնականաբար, առաջարկվել են մոնումենտալ դիմաքանդակների պատրաստում և թերևս այս մասնավոր շատ ու շատ պատվերներ խլել են ոչ միայն ժամանակ, տորոլել են միտք ու հույզ, խզել ձեռքի և հոգու այնքան անհրաժեշտ կապը: Ով գիտե, աստվածային ինչ կրակ կծեր այս պարզ, սովորական



մարդու հոգում, եթե նյութական կարիքները չստիպելին ձեռք մեկնել այլևայլ պատվերների...

Եվ, այնուհանդերձ, հենց Արմոյին հանձնարարվեց սուրբ ֆիդայիների դիմաքանդակների պատրաստումը: Գուցե մեծ համարձակություն էր, բայց երկի սա էլ պատահական չէր, երևի հենց նրան էր վիճակված այդ քննությունը:

Մեկ տարի առաջ էր: Արդեն պատրաստ էին Անդրանիկի և Սիմոն Զաքարյանի դիմաքանդակները (հեղինակ՝ քանդակագործ Արշակ Պետրոսյան): Արմոյին կավի ու գիպսի աշխատանքներում օգնում է որդին՝ Կյովա Առաքելյանը: Համաձայն ենք Արմոյի հետ. դժվար է քարի հետ աշխատելը, մի սխալ հարված և՛ քարը կփչանա, կփոխվի կիսանդրու բնավորությունը և հոգեբանությամբ

յունը:

Հաղթահարվել են դժվարությունները, հանրապետության անկախության օրը՝ մայիսի 28-ին, Գարեգին Նժդեհի, Անդրանիկի, Ռուբեն Շիշմանյանի (Քեռի), Արաբոյի, Գևորգ Չառլչի, Սողոմոն Թեհլերյանի, Մախալուտոյի, Սիմոն Զաքարյանի դիմաքանդակները տեղադրված են քաղաքի կենտրոնական հրապարակի պուրակում:

...Անիմանալի են Արարչի գործերը, անբացատրելի՝ նրա գաղտնիքները: Այս քարե դիմաքանդակների մեջ գուցե իրավ հոգիներն են մեր ազգային հերոսների, մեր փրկարարների, որոնք ցավալի ուշացումով, բայց հավերժորեն հանգրվանելու եկան զարթնած հայրենիքում:

«ԶԱՆԳԵԶՈՒՐ», 28 ՀՈՒՆԻՍԻ 1990 Թ.

# Երբ քանդակագործությունը գեներով է անցնում

Քանդակագործների գերդաստանի զավակ է Արմեն Առաքելյանը. երրորդ, թե չորրորդ սերնդի ներկայացուցիչներից է: Քանդակագործ է եղել պապը՝ Արամայիս Առաքելյանը (Արմո Տաթևացի):

Կայր՝ Առն Առաքելյանը, մասնագիտությամբ քանդակագործ-մանկավարժ է, մասնակցել է միջազգային սիմպոզիումների, հիմնականում՝ Ֆրանսիայում: Հայրն ու պապն Արցախյան շարժման տարիներին ֆիդայիների արձաններ են կերտել, որոնք տեղադրվել են Գորիսի կենտրոնում: Ապուպայերն էլ քարգործ վարպետներ են եղել: Երկու կարծիք լինել չէր կարող, որ քարին հոգի ու շունչ տալու ձիրքը գեներով են անցել իրեն, ինչն անվերապահորեն ինքն է նաև խոստովանում: Մուրճն ու հատիչն իրենց ազգի «բրենդն» են եղել:

«Արդյոք դասախոսական աշխատանքը չի՞ խանգարում ստեղծագործելուն», - հարցին պատասխանում է, որ, իրոք, մանկավարժությունը շատ ժամանակ է խլում, բայց ձգտում է այնպես անել, որ ոչ



«Տարերք»

## ԱՅՑԵՔԱՐՏ

Արմեն Առաքելյան: Ծնվել է 1987 թ. սեպտեմբերի 12-ին: Միջնակարգ կրթություն է ստացել Գորիսի Ակսել Բակունցի անվան միջնակարգ դպրոցում: Այնուհետև ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետի «Կերպարվեստ-գծագրություն» բաժինը: Ուսանողության տարիները՝ 2003-2008 թվականներ: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կերպարվեստի ամբիոնի քանդակի դասախոս է 2009 թվականից մինչև այժմ: 2010 թվականից Հայաստանի նկարիչների միության անդամ է: Սուրբ Սարգսի տոնին նվիրված հանրապետական առաջին մրցույթ-ցուցահանդեսին (2009 թ.) քանդակի անվանակարգում արժանացել է երկրորդ մրցանակի: Մրցույթին մասնակցել է «Մայրություն» քանդակով: Ցուցահանդեսների է մասնակցել նաև արտերկրում՝ Ֆրանսիայի Ռոման քաղաքում և Սան-Ֆրանցիսկոյում (ԱՄՆ):

մեկը չտուժի: Ի դեպ, երբ զանգահարեցի Երևան՝ անհրաժեշտ տեղեկություններ վերցնելու, ասաց, որ ձուլարանում է: Հերթական քանդակներն էին «միս ու արյուն» ստանում, չէր կարող գործից կտրվել: Պայմանավորվեցինք ավելի ուշ ժամի հեռախոսագրույց ունենալ: Բավետի պարուհիներ էր քանդակել, նաև փոքրիկ գաղտնիք է բացում, իր քանդակների մեծամասնությունը կանայք են, սիրում է նաև ընտանեկան միջավայրը ներկայացնել, մայրը զավակի հետ և այլն: Երբեմն տուրք է տալիս անիմալիստական ժանրին, կերպարվեստի տեսակ, որի հիմնական օբյեկտը կենդանիներն են: Կենդանիների մի շարք է քանդակել:

Յուրաքանչյուր մարդ, նախևառաջ, երախտապարտ է լինում իր ուսուցիչներին: Ջրուցակիցս հիշատակեց բուհի իր դասախոսներին, նախ՝ Արտաշես Քեշիշյանին (ով իր դիպլոմային աշխատանքի ղեկավարն է եղել), այնուհետև՝ Ազատ Հարությունյան, Հովհաննես Մուրադյան, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ, հանրաճանաչ մանկավարժ և քանդակագործ Ղուկաս Չուբարյան, ով մեկ տարի դասավանդել է իրեն: Կարոտով է հիշում ուսանողական տարիները:

Մեր զրուցակցից փորձեցինք որոշ հարցեր ճշտել՝ քանդակագործության ոլորտին առնչվող: Ասենք՝ փայտափորագրությունը, խեցեգործությունը կարելի՞ է մի հարթության վրա դիտարկել քանդակագործության հետ: Պատասխանեց, թե արվեստում հստակորեն տարանջատված են՝ գեղան-



«Յուլ»



«Մայրություն»



«Սեր»

կար, գծանկար, քանդակ և դեկորատիվ կիրառական արվեստ: Իմ նշածներն ավելի շատ կիրառական արվեստի մեջ են մտնում: Յուրաքանչյուր ոլորտում սերնդափոխությունը պարտադիր պայման է: Վաղ թե ուշ հներն իրենց տեղը զիջում են նորերին: Արդյոք երիտասարդությանը ձգում է քանդակագործությունը, հեռանկարային սաներ ունի՞: Ա. Առաքելյանն ընդամենը մի անուն հիշատակեց, ով իր մեջ հույսեր է ներշնչում:

Արմեն Առաքելյանը քանդակագործությունից գատ՝ նաև այլ նախասիրություններ ունի. զբաղվում է գեղանկարչությամբ, սիրում է բնության գրկում բնապատկերներ անել, մեծապես հետաքրքրված է արվեստի պատմությամբ: Իսկ հորբին ճանա-

պարհորդելն է, լինում է եվրոպական տարբեր երկրներում, անպատճառ արվեստի թանգարաններ է այցելում, որտեղ հանրաճանաչ քանդակագործների աշխատանքներ են ցուցադրվում: Անուններ է տալիս՝ հայտնի և անհայտ: Իսկ ահա հայ քանդակագործներից տպավորված է Հակոբ Գյուրջյանի, Բենիկ Պետրոսյանի ստեղծագործություններով:

Քանդակ ստեղծելու համար ինքը ո՞ր նյութն է նախընտրում. էական նշանակություն ունի՞, թե որն է նախընտրում՝ տո՞ւֆ, մարմա՞ր, բազա՞լտ... Պատասխանում է՝ իհարկե ունի, բայց ինքը բրոնզն է նախընտրում...





Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիրը Ֆրանսիայի Ռոման մարզի Բուդլե Վալանս քաղաքում

# Գորիսյան ավանդույթներով հայ մշակույթը Ֆրանսիայում

Ֆրանսիայի Ռոման և Բուդլե Վալանս քաղաքներում գտնվող՝ 1915թ. Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիրների (Ծիծեռնակաբերդից հետո մեծությամբ աշխարհում երկրորդն ու երրորդ են) հեղինակը գորիսեցի քանդակագործ Լյովա Առաքելյանն է:

**Ա**հա թե ինչ է գրել Ռոման քաղաքի հայկական միության վարչության անդամ Էմանուել Թաշճյանը հրատեղյակ նամակում. «Այո՛, Առն, քեզի չպիտի մոռանանք, քանի որ ամեն անգամ, որ պիտի անձնինք Հուշավայրի կողքին, և տարին անքամ մը, երբ պիտի ոգեկոչենք Ապրիլ 24-ի առիթով մեր նահատակներու յիշատակը, դուն անպայման ներկայ պիտի գտնուիս մեր մօտը, քանի որ մեր հայրենյաց Հայկական այնքան գեղեցիկ քարերուն վրայ կը գտնուին ձեռքերիդ դրոշմը և կնիքը»:

Լ. Առաքելյանը նաև մոտ երկու ամիս առաջ հրավիրվել էր Փարիզ՝ միջազգային սիմպոզիումի մասնակցելու համար: Փարիզի ամենաբարձր կետում՝ «Սակղեկյուղ» եկեղեցու համար (թարգմանաբար՝ «Երկու քույր») տուֆի վրա եկեղեցու գերբը պիտի քանդակեր, որը փակցվեց եկեղեցու պատին: Աշխարհի տարբեր ծայրերից հրավիրված արվեստագետներն արվեստի տարբեր ճյուղերն էին ներկայացնում անցնող-դարձող փարիզեցիների համար... Ռուսաստանից հայտնի դաշնակահար կար, նկարիչ՝ Պերուցի, նաև երգչուհի ու պարուհի: Լյովան սա փոքր գործ է համարում, նման աշխատանքների մասին չի սիրում խոսել, արդեն շատերի գտնվելու վայրը չի էլ հիշում, բայց այն, որ քանդակագործությունը ներկայացնում էր հայաստանցի, արդեն ինչ-որ բան ասում է նրա՝ Ֆրանսիայում գնահատված լինելու մասին:

Ավարտել է Երևանի մանկավարժական ինստիտուտը, մասնագիտությամբ քանդակագործ-մանկավարժ է: Ասում է, թե քանդակագործությունն իր մեջ «պայտնական է» (նրա հայրը՝ Արամայիս Առաքելյանն էլ Գորիսում շատ հայտնի է): Պապն էլ, հոր պապն էլ քանդակագործներ են եղել: Հիմա էլ իր զավակներն են գործը շարունակում. որդին վերջին կուրսում է սովորում (քանդակ), դուստրը Մոսկվայի Սուրիկովի անվան ակադեմիան է ավարտել, նկարչուհի է: Միայն մի դուստրն է «շեղվել» լեզվաբան է:

**«Բնական է՝ սկզբում՝ երեխա ժամանակ, նկարում էի, իսկ քարի վրա աշխատել հայրիկից եմ սովորել, մինչև ընդունվելս էլ հայրիկին օգնում էի աշխատելիս: Ավարտելուց հետո Ծիծեռնակաբերդում վեց տարի նկարչության և գծագրության դասատու եմ աշխատել, դրան զուգահեռ՝ Գորիսի նկարչական դպրոցում՝ քանդակի ուսուցիչ: Հետո, երբ արդեն կապվեցի Ֆրանսիայի հետ, դասավանդելը թողեցի»,-** պատմում է նա:

Նկարչությունն արդեն թողել էր, իսկ դասավանդելուն զուգահեռ զբաղվում էր քանդակագործությամբ: Հիմնականում պատվերների վրա է աշխատել, որոնք ոչ միայն Գորիսից էին լինում, այն ժամանակ էլ մինչև Ռուսաստան ու Ամերիկա աշխատանքները տարել են: Հիմնականում անհատների համար է աշխատել: Իսկ այստեղ տեղադրված գործերից հիշում է Գորիսի կենտրոնի ֆիդայիների արձանախումբը (որ վերջերս հանվեց...), քաղաքի մուտքի խաչքարը: Երևանում «Նարեկացի արվեստի միության» քանդակներն ու ֆասադն է արել: Նաև Հայաստանում վերանորոգված մի շարք եկեղեցիներում է խաչքարեր տեղադրել, խորան սարքել:

Ազատամարտի տարիներին «պոստ է գնացել», ասում է՝ «Դէ, էն ժամանակ ո՞ր գորիսեցին չի պոստ գնացել...»: Ի դեպ, այդ տարիներին նոնակի կաղապար է սարքել, որ հետո շուգունից ձուլեն:

Ինչպե՞ս է սկսվել կապը Ֆրանսիայի հետ: Առաջին գործն արել է Ռոմանում՝ 2003-ին: Մասնագետ էր պետք քաղաքում 1915 թ. զոհերի հուշահամալիր տեղադրելու համար, չգիտի՝ ինչպես են գտել իրեն. «Կանչեցին, գործն արել եմ Երևանում, հետո ուղարկել, գնացել-ցույց տվել՝ ոնց տեղադրեն. 45 տ քար եմ ուղարկել Երևանից: Հայկականն եմ ձգտել շեշտել: Ամբողջը տուֆից չէ. հատակը բազալտից է, մի մասը սևացնելով, մի մասը սպիտակ թողնելով՝ ստացել եմ Աղթամարի եկեղեցու հատակագիծը: Եվ դրա վրա քան



**դակներ են տեղադրվել՝ հուշահամալիրն ամբողջացել է»:**

Գործը ճանաչում բերեց հեղինակին: 2006թ. Բուդլե Վալանսում տեղադրվեց Լ. Առաքելյանի երկրորդ աշխատանքը:

Ու արդեն Ֆրանսիայում անհատներից են պատվերներ լինում: **«Այնտեղ քաղաքներ կան, որոնցում քայլում եմ՝ ինչպես Գորիսում: Հենց իմանում են այնտեղ եմ՝ հարցնում են՝ քար ունե՞ս»:** Ինչո՞ւ է այստեղից քար տանում. ասում է, որ այնտեղ էլ քարերի բազմազանություն կա, դրանցով էլ է աշխատում, բայց եթե պատվիրատուն հայ է, անպայման հայկական քար է ուզում: Կոնկրետ հուշահամալիրների կողքով անցնելիս՝ թվում է՝ Հայաստանում ես:

Սեղանին ֆրանսերեն թերթեր ու ամսագրեր են փռված. ֆրանսիական մամուլը բավականին շատ անդրադարձել է Լյովային ու նրա գործերին: Նաև ռադիո ու հեռուստատեսություն է հրավիրվել:

Հիմա որտե՞ղ է ապրում. հարցին ինքն էլ չի կարողանում պատասխանել: Տարվա մեջ երեք տեղն էլ հասցնում է լինել ու աշխատել՝ Գորիս, Երևան, Ֆրանսիա: Գորիսում արհեստանոց ունի, մայրաքաղաքում էլ վարձակալում է: Գորիսում և՛ աշխատում է, և՛ ինչ-որ տեղ՝ հանգստանում:

Բացի պատվերները, լինո՞ւմ է պարզապես ցանկություն՝ ստեղծագործելու... «Եթե ժամանակ եղավ, այո՛, հիմնականում՝ փոքր գործեր, բայց դրանք էլ ինձ չեն մնում, նվիրում եմ: Բայց հիմա դրա հա

### մար գրեթե ժամանակ չի լինում...»:

Երևանում մի ֆրանսահայի հետ հիմնել են «Քարավանք» ընկերությունը, և այդ գրասենյակի միջոցով են իրեն գտնում: Ֆրանսիայում համագործակցում է ճարտարապետ Բաֆֆի Պետրոսյանի հետ:

Ի վերջո, առաջին ուսուցիչը հայրն է եղել, ի՞նչ տարբերություններ է տեսնում նրա ու իր (ընդհանրապես սերունդների) միջև: Ասում է, թե մեծ հակասություններ չկան, տարբերություններ կան կիրառած նախշերի, զարդանկարների միջև: **«Իրենց ժամանակ այդքան գրքեր չկային արվեստի, հայկական զարդանախշերի վերաբերյալ, ինքնուս էր, ինչ իմացել կիրառել է: Մենք հնարավորություն ենք ունեցել կրթություն ստանալու, կարդալու, շփվելու: Ինձանից հետո որդիս է գալիս. իրենց սերնդի շփման հնարավորություններն ավելի մեծ են»:**

Ընդունելով, որ քանի գնում, կատարելագործվում է ամեն ոլորտ՝ միաժամանակ նշում է, որ հիմնիկվա քանդակագործության մեջ այդքան էլ չեն «մանրանում»:

**«Օրինակ, վերջերս մի խաչքար ենք տեղադրել Ֆրանսիայում. ուղղակի չորս հատ քար է՝ մի կողմը լայն, մի կողմը՝ նեղ. ինքնին խաչ ստացվեց: Վրան ընդամենը մի նախշ կար: Դա ավելի մոդեռն ոճի է, բայց մեր ծնողների սերունդը դա չի ընդունում: Ֆրանսիայում ընդունվեց, իսկ, ասենք, Սյունիքի ժողովուրդը դա իբրև խաչքար չի ընդունի, Երևանում մի մասը կընդունի»:**

Համաձայն չէ, թե սա սերունդների խնդիր է, և ժամանակի հետ այստեղ էլ մոդեռնը կընկալվի: **«Այստեղի նոր սերունդն էլ ավելի պահպանողական է. խաչքարի վրա ինչքան մանր նախշեր լինեն, այնքան լավ...»:** Եվ քանի որ ինքը «արվեստը արվեստի համար» տարբերակը չի ընդունում, ձգտում է ընդունելին ու հասկանալին անել:

Շրջել է Հայաստանում, հարցնում ենք՝ որտե՞ղ են պահպանվում ամենաշատ, արժեքավոր ու հին խաչքարերը: Պատասխանում է, թե առավել շատ հանդիպել է Եղեզնածորում և Գեղարդի կողմերում: Էջմիածնում էլ կան, բայց դրանք հիմնականում այստեղից-այնտեղից հանել-տարել են: Տարբեր բնակավայրերի խաչքարերը հիմնականում տարբերվում են զարդանախշերով և ինչ-որ տեղ՝ արտաքին կառուցվածքով: Փաստում է նաև, որ Սյունիքում ամենաքիչ են ու անորակները, նուրբ գործեր չեն եղել, միգրացի քարն էր պատճառը, ի վերջո, ամեն քարի վրա չի ստացվում նուրբ զարդաքանդակներ անել: Խաչքարի համար ամենահարմարը տուֆն է և փափուկ բազալտը:

Չի կարծում, թե այսօր պատվերների մեջ գերակշռող խաչքարային «բումը» վատ է. **«Դե եթե մարդը խաչքար է պատվիրում, վարդը է՞ս սառել, չէ, ուրիշ բան եմ անում: Ամեն դեպքում, թող խաչքարերով լցվի Հայաստանը: Քարն էլ է չէ՞ ժամանակի հետ մաշվում, քայքայվում: Մի օր այս հները կվերանան, թող մի քանի հարյուր տարի էլ այսօր դրվածները մնան: Ի վերջո, այս բուն անկախությունից հետո սկսվեց, խորհրդային տարիներին այսպես չէր, ինչ-որ տեղ վերածնված հավատքը նաև քանդակագործությունը վերադարձրեց մեր արժեքներին»:**

Լյովա Առաքելյանը ցավ չի ապրում, որ շարժման տարիներին Գորիսի կենտրոնում տեղադրված ֆիդայիների արձանախումբը հանվեց: Չնայած այն ուշագրավ էր նրանով, որ Հայաստանում տեղադրված առաջին ֆիդայիների արձաններն էին, ասում է, թե հոր հետ հապշտապ արել էին, շատ կարճ ժամկետում, և ընդամենը նմանության հարց էր լուծվել:

ԳԵՐՂԱՍՏԱՆ. ՍՈՍՔԵԼՅԱՆՆԵՐ

# Արմո Տաթևազյան կերտել է նաև Կոնստանտին Օրբելյանի կիսանդրին ու Դավիթ Բեկի հուշարձան



ԱՐԵՎԻԿ ԱՔԵԼՅԱՆ

Տաթևան է... Սեզ ժայռերի մեջ ծվարել է նա ու, ասես վերևից, Տիրոջ իրավունքով, հսկում է գյուղ այցելողներին:

Մեքենան մի կերպ հաղթահարում է ոլորանները, հեղին հասնում Տաթև գյուղ ու կանգ առնում ճամփաբաժանին: Մեքենայից իջնում է այցելուն, ձեռքը դնում ճակատին, հպարտությամբ ու կարոտով հայացքն ուղղում աջ ու ձախ: Մի կողմում Սյունյաց թագուհին է՝ իր վեհությամբ, իսկ մյուսում՝ հարազատ, մանկության տարիների իր օրրանը՝ Տաթև գյուղը: Նա ասես ամբողջությամբ անհազ ծարավով կլանում է իր լեռների օդը, հեռվից հեռու հայացքով գրկում հարազատ լեռները ու... շարունակում ճանապարհը:

Արմո Տաթևազյան Առաքելյանը ծննդավայրում է: Դանդաղ, բայց վստահ քայլերով շարժվում է գյուղ, ճանապարհին ուսումնասիրում ամեն մի քար ու թուփ, բարևում գյուղացիներին, հալ ու հարցում անում բոլորից ու կրկին շարունակում քայլեր: Քանդակագործի այցը մի քանի առաքելություն ուներ:

Տաթևազյան առաջինն այցելեց գյուղի կենտրոն, ուր տեղադրված են երկու մեծի՝ Դավիթ Բեկի և Կոնստանտին Օրբելյանի արձանները: Նա դանդաղ մոտեցավ նրանց, բարևեց ու մտովի զրույցի բռնվեց

նրանց հետ: Քանդակագործի ձեռքն ակամայից սահեց քանդակների վրայով, ու թվում էր, թե մատների տակ ա՛յ ա՛յ կկենդանանան նրանք: Չգիտես՝ մաքրո՞ւմ էր փոշին դարերի, թե՞ վերհիշում ամեն զարկը մորճի: Մտազբաղ էր հայացքը, բայց և հպարտ. դարեր ի վեր իրենց տոհմին հատուկ արվեստն այսօր ներկայացնում է ինքը՝ վաղվա օրն էլ հանձնելով զավակներին ու թոռներին:

Կառուցված գանգակատունը վերականգնել են ուղիղ 100 տարի հետո՝ 1903-ին: Այստեղ, իմ պապը՝ ուստա Բաբան, ամենաուժեղ վարպետներից մեկն է եղել: Այ էր թվականից էլ մեր ընտանիքում առաջացել է մասնագիտությունն իրար փոխանցելը»,- քանդակագործը մտովի գնում է մի քանի դար հետ ու հիշում նախնիների պատմությունը:

Հարազատ մորեղբոր ձեռքի աշխատանքներով հպարտանում է նաև Տաթևի գյուղապետ Մուրադ Սիմոնյանը: Մեկ առ մեկ հիշելով քեռու մի քանի տասնյակների հասնող քանդակները՝ գոհունակությամբ ավելացնում է, որ Գորիսում և տարածաշրջանում նույնպես Տաթևազյան իր ձեռագիրն ունի: Այդ ամենից զատ գյուղապետը վստահեցնում է. «Շուտով կկազմակերպեն թե՛ Դավիթ Բեկի և թե՛ Կոնստանտին Օրբելյանի արձանների պաշտոնական բացումը»:

Արմո Տաթևազյան այցելում է նաև Օրբելյանների կիսախարխուլ տունը և հարգանքի տուրք մատուցում մեծն կոմպոզիտորին:

Նրա հաջորդ այցը հարազատների շիրմներին է, ծաղիկներ է դնում ու գյուղից հեռանում՝ իր հետ տանելով նրանց մասին հիշողությունները:


Տաթևան է... Սեզ ժայռերի մեջ ծվարել է նա ու, ասես վերևից, Տիրոջ իրավունքով, ճանապարհում է հյուրերին...

«ՍՅՈՒՆՅԱՏ ԵՐԿԻՐ», ԵՆՅԵՄԲԵՐ 2015 Թ., № 29 (372)

ԳԵՐՂԱՍՏԱՆ. ՍՐԳՈՒՍԱՆՅԱՆ- ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆՆԵՐ



Բաղղասար Արղումանյան



Գետիկ Բաղղասարյան

## Հովհաննես Բաղղասարյան, ով գնում է նախնիների՝ հանճարեղ Բաղղասար Արղումանյանի և մեծահոշակ Գետիկ Բաղղասարյանի հետքերով



Owl, 2019 թ.

Ծնվել է 2000 թ., Երևան քաղաքում: 2005-2016 թթ. սովորել է մայրաքաղաքի Խաչիկ Դաշտենցի անվան թիվ 114 դպրոցում:

Այնուհետև՝ 2016-2020 թթ., ուսումը շարունակել է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում:

2020-2022 թթ. ծառայել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում:

2022-2024թթ. շարունակել է ուսումը Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում՝ որպես մագիստրոս:

Փոքրուց սիրել և զբաղվել է քանդակով, ոգեշնչվել է Գետիկ Բաղղասարյանի աշխատանքներով:



Pheasant, 2019 թ.



Life & Death, 2020 թ.



Death, 2022 թ.



Կոստանտին Օրբելյանի կիսանդրին



Դավիթ Բեկի արձանը



# Նարեկ Օրդյան. Սյունյաց աշխարհի մերօրյա քանդակագործը

«Արվեստագետը շատ չպիտի խոսի, նրա մասին պիտի խոսեն իր գործերը», - այս հաստատ համոզմունքն ունի քանդակագործ Նարեկ Օրդյանը: Չնայած երիտասարդ տարիքին՝ հասցրել է մնայուն գործեր ստեղծել: Բայց նրան ճանաչում բերեց հատկապես Սուրբ Գրիգոր Տաթևացու հուշակոթողը, որ տեղադրված է Գորիսի կենտրոնական հրապարակում:

Նարեկ Օրդյանը ծնվել է 1986 թվականին, ավարտել է Վերիշենի միջնակարգ դպրոցը, արվեստի դպրոց չի հաճախել, հայրն է եղել (քանդակագործ-գեղանկարիչ Գագիկ Օրդյան)՝ մասնագիտության առաջին ուսուցիչը: Քանդակելու սերը նրան երևանի գեղարվեստի պետական ակադեմիա է տարել, որի քանդակի բաժինը



Նարեկ Օրդյանի հայրը՝ քանդակագործ-գեղանկարիչ Գագիկ Օրդյանը

ավարտել է 2009 թվականին: Ուսանողական տարիներին ամուսնացել է, այժմ երեք որդի ունի, դեռ վաղ է խոսել, թե նրանցից ով կգնա իր հետքերով, բայց անտարբեր չեն հոր մասնագիտության հանդեպ: Այնուամենայնիվ, Գորիսում ունի հետևորդներ՝ Գորիսի Հենրիկ Իգիթյանի անվան գեղարվեստի ազգային կենտրոնի սաներ, ովքեր ուսումը պիտի շարունակեն Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի քանդակի բաժնում: Ինքն էլ ժամանակին կարևորեց պրոֆեսիոնալ ուսում ստանալը (խոսքը բարձրագույն կրթության մասին է):

Առաջին մոնումենտալ գործը Տաթևացու հուշակոթողն էր, դեռևս ուսանող է եղել, երբ սկսել է քանդակել, նաև թերահավատներ կային, թե կարո՞ղ է նման բարդ գործի տակից դուրս գալ: 3.5 մետր բարձրությամբ մի հսկա քարաբեկորից է կերտել, ավարտուն տեսքով հուշակոթողը 3.3 մետր բարձրություն ունի: Մոնումենտալ այդ աշխատանքը



քանդակել է երկու տարում: Շնորհակալ է Սյունիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանին, ով վստահել է, ոգևորել, նաև հովանավորել, որ սկսի պատասխանատու գործը: Այդ կարևոր գործը կյանքի է կոչել Տաթևացու ժամանակաշրջանը, նրա գործունեությունն ուսումնասիրելուց հետո:

Ասում է, որ ամեն մի քանդակ կերտելուց առաջ անպատճառ պիտի իմանա այդ անձնավորության անցած ուղին, նրա ապրած ժամանակաշրջանը (ինչպես, ասենք, Իսրայել Օրու): Երիտասարդ քանդակագործի համար ռիսկային էր Տաթևացու հուշակոթողի քանդակումը ստանձնելը, բայց առաջին գործը կուտ չգնաց: 2010 թ. հոկտեմբերի 16-ին, երբ նշվում էր Գորիսին քաղաքի կարգավիճակ շնորհելու 140-ամյակը, Գրիգոր Տաթևացու անվան հրապարակում հանրապետության նախագահի մասնակցությամբ բացվեց եռամեծար փիլիսոփա, մանրանկարիչ և աստվածաբան Գրիգոր Տաթևացու հուշարձանը. հիշարժան օր՝ երիտասարդ քանդակագործի համար:

«Եթե Տաթևացու արձանը չլիքի Գորիսի կենտրոնական հրապարակում, մեր քաղաքից մի շատ կարևոր բան պակասած կլինի», - այժմ ասում են գորիսեցիները: Հետո եղան նոր գործեր, Վազգեն Սարգսյանի բրոնզաձուլ արձանը 2015 թ. ապրիլի 2-ին տեղադրվեց Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում՝ Արցախյան գոյամարտում զոհված կապանցիների շիրմներն ամփոփող պանթեոնում:

«...Գյուրջյանի ստեղծագործության մեջ միահյուսվում են Արևելքի հնագույն և եվրոպական նոր արվեստների լավագույն ավանդույթները: Շատ են հավանում Գյուրջյանի «Հաղթանակ» քանդակը: Հետաքրքիր ոճ ունի՝ իր ընդհանրացումներով, իր պլաստիկայով»:

բուրջի հուշահամալիրում՝ Արցախյան գոյամարտում զոհված կապանցիների շիրմներն ամփոփող պանթեոնում:

Անցած տարի Գորիսի պետական համալսարանի բակում մշտական գրանցում ստացավ հայագի նվիրյալ Շահան Նաթալի կիսանդրին:

Արդեն պատրաստ է Իսրայել Օրու բրոնզաձուլ կիսանդրին, որը պիտի տեղադրվի Անգեղակոթում: Ձեռնարկել է կերտելու մարզպան Վասակ Սյունու արձանը, որ այժմ կիսատ է:

Վերջնական տեսքի պիտի գան Գարեգին Նժդեհի և հայ ազգային-ազատագրական շարժման նվիրյալ, Նժդեհի և Անդրանիկի զինակից Պողոս Տեր-Դավթյանի կիսանդրիները:

«...Հատիչով և մուրճով քարին շունչ տալու արվեստը վաղնջական ժամանակներից է գալիս: Հին Հունաստանում քանդակագործությունը հասավ ամենաբարձր մակարդակի: Հեգելն արվեստի դասական (անտիկ) շրջանը կապում է հենց քանդակագործության հետ: Հայ քանդակագործական արվեստն էլ երևելի անուններ է տվել:

Ո՞վ է ամենից ավելի մեծ տպավորություն թողել Նարեկ Օրդյանի վրա: «Հակոբ Գյուրջյանը, - ասում է նա, - Գյուրջյանի ստեղծագործության մեջ միահյուսվում են Արևելքի հնագույն և եվրոպական նոր արվեստների լավագույն ավանդույթները: Շատ են հավանում Գյուրջյանի «Հաղթանակ» քանդակը: Հետաքրքիր ոճ ունի՝ իր ընդհանրացումներով, իր պլաստիկայով», - բացատրում է: Այն համոզմունքն ունի, որ քանդակագործը պետք է վեր կանգնի նյութականից. «Քանդակագործը հոգին չպիտի վաճառի նյութական բարիքներին: Եթե արվեստագետը, քանդակագործը մտածում է փող աշխատելու մասին, նրան մեռած կարելի է համարել (գոնե արվեստում)»:

Գրողներ, արվեստագետներ կան, ովքեր իրենց գործը ստեղծելուց հետո ասում են՝ եթե նորից սկսեի, այլ կերպ կլիներ վերջնական արդյունքը: Նարեկ Օրդյանը նման զգացողություն ունեցել է: «Իհարկե, ես էլ եմ նման զգացողություն ունեցել: Տաթևացու քանդակի վրա աշխատելիս որոշել էի կոմպոզիցիան փոխել, բայց արդեն ուշ էր, աշխատանքը կիսով չափ արել էի, արդեն հնարավոր չէր»:

Ներկայացնում է գործերը՝ «Գաղթի ճանապարհին (սարսափն աչքերին մանուկ է՝ մոր շալակին)», «Երևակայություն», «Եվրոպայի առևանգումը» (ցուլի տեսքով Ջևը փախցնում է աղջկան), նաև հոռետեսական անվանումներով քանդակներ՝ «Հուսահատություն», «Տառապանք» և այլն: Գործերի մեջ նկատվում է թեմատիկ բազմազանություն:

Քանդակագործն իր աշխատանքում տարբեր նյութեր է օգտագործում՝ բազալտ, գրանիտ, մարմար, բրոնզ և այլն: Ո՞րին է նախապատվություն տալիս Նարեկը. «Նշանակություն չունի, ոսկորից էլ եմ քանդակ արել, փայտից էլ, գրանիտից էլ և այլն, կոմպոզիցիայի ձևից, կոնկրետ քանդակի ձևից է կախված, թե ինքն ինչ նյութից պիտի լինի: Կարևորը նյութը ճիշտ ընտրելն է: Օրինակ, Տաթևացու արձանը չէր կարող բրոնզից լինել: Նյութի սխալ ընտրության պատճառով քանդակը կարող է արժեզրկվել», - ասում է ու հավելում, որ իրեն ինչքան հիշում է, քանդակել է՝ պլաստիլինից, փայտից, հետո ավելի կարծր նյութերից:

Իսկ երբևէ գեղանկարչությամբ չի՞ զբաղվել. նրանց տան այն հարկաբաժնում, որտեղ մեկտեղված են ավարտուն (և ոչ այնքան) քանդակները, պատերին կախված էին հոր վրձնած գեղանկարները. «Իմ



«Հաղթանակ»



«Հայրենիք»

# Հայոց վրիժառուության առաքյալը

Գորիսում հավերժացվեց հայ ժողովրդի մեծանուն զավակ Շահան Նաթալիի հիշատակը

Սեպտեմբերի 1-ին Գորիսի պետական համալսարանի գլխավոր մասնաշենքի բակում, ուսանողների, հյուրերի, Գորիս քաղաքի բնակիչների մասնակցությամբ ու հանդիսավոր արարողությամբ, բացվեց Շահան Նաթալիի (Հակոբ Տեր-Հակոբյանի) հուշարձանը:

Մեծ հայի հիշատակը հավերժացնելու նախաձեռնողը և աշխատանքների հովանավորն ու կազմակերպիչը Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանն էր:

Մոտ չորս տարի առաջ հղացած այս գաղափարն իրականացնողը մեր հայրենակից, երիտասարդ քանդակագործ Նարեկ Օրդյանն է, ով հանրությանը հայտնի է Սուրբ Գրիգոր Տաթևացու հուշակոթողի պատրաստմամբ (2010թ. հոկտեմբերի 16, տեղադրված է Գորիս քաղաքի կենտրոնական հրապարակում): Նարեկ Օրդյանը Սպարապետ Վազգեն Սարգսյանի բրոնզաձուլ արձանի քանդակագործն է նաև արձանը 2015թ. ապրիլի 2-ին տեղադրվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում՝ Արցախյան ազատամարտում նահատակված կապանցիների պանթեոնում:

Շահան Նաթալիի արձանը նույնպես բրոնզաձուլ է, այն, հիրավի, չքնաղ մի ստեղծագործություն է՝ դրված 1,8 մ բարձրության բազալտե պատվանդանի վրա:

Հուշակոթողի բացման պատիվը տրվեց քանդակագործին և Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Արտուշ Ղուկասյանին:

Շահան Նաթալիի կյանքի և գործունեության մասին ելույթներ ունեցան Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը, Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Արտուշ Ղուկասյանը, ՀՀ պաշտպանության նախարարության «Մայր Հայաստան» ռազմական թանգարանի տնօրեն Ավագ Հարությունյանը, Գորիսի պետական համալսարանի հումանիտար և հասարակական մասնագիտությունների ֆակուլտետի ղեկանի պաշտոնակատար Թեհմինա Մարությանը, «Ակսել Բակունց» հիմնադրամի նախագահ Սամվել Հարությունյանը:

Համալսարանի ուսանողուհի Սոնա Ալա-

վերդյանն ընթերցեց հատված Շահան Նաթալիի «Նոր երգ երգոց» բանաստեղծությունից, որի մեջ արտացոլված են հեղինակի եռությունը, նպատակները, իր իսկ դավանած գաղափարների հիմնական ուղղությունները և պատգամը սերունդներին:

...Արևմտյան Հայաստանի Խարբերդի շրջանի Հուսենիկ գյուղում 1884թ. ծնված Հակոբ Տեր-Հակոբյանն ականատեսն էր Արևմտյան Հայաստանում 1895-97թթ. համիդյան ջարդերի, որի ընթացքում զոհված մոտ 300 հազար հայերի մեջ էին նրա հայրը, մորեղբայրը և բազմաթիվ ազգականներ: Հոր դիակի վրա ողբացող մոր պատկերը՝ այդ օրերի սահմուկեցուցիչ մյուս տեսարանների հետ, ամբողջ կյանքում ուղեկցեցին նրան:

Երեխա հասակում որբացած և վրեժխնդիր լինելու վճիռ ընդունած Շահան Նաթալին իր անելիքների մեջ առավել հաստատուն դարձավ Մեծ եղեռնի սարսափների մասին ԱՄՆ-ում լսելուց հետո: Իսկ վճիռն այսպիսին էր՝ անպատիժ չթողնել ցեղասպաններին, եթե աշխարհը չցանկանա պատժել նրանց:

Եվ այդպես՝ Մեծ եղեռնի գլխավոր պատասխանատուներին պատուհասելու հարցը դարձավ նրա կյանքի ամբողջ նպատակն ու իմաստը:

Հենց նրա նախաձեռնությամբ կազմվեց մոտ 200 թուրք ճիվաղի սև ցուցակը, ովքեր էլ պատասխան տվեցին ու գետնվեցին հայոց վրիժառուների ձեռքով՝ սկսած գլխավոր հայակեր Թալեթաթ, Ջեմալ, Էնվեր փաշաներից մինչև Հայոց ցեղասպանության գաղափարախոս Բեհհեդին Շեքիր բեյ...:

Երբ 1961-ին Նաթալին եկավ Հայաստան, ծաղկաձորում հանդիպեց ճամբար դրած մի խումբ դպրոցականների: Նրանց մեջ էլ, բնականաբար, տեսավ հայության վաղվա օրը, նոր արևածագը: Երևի այդ իրողությունն էին հաշվի առել դրվատելի այս նախաձեռնության հեղինակները՝ Շահան Նաթալիի ոգեղեն վերադարձի ու ոգեկոչման վայր ընտրելով Գորիսի պետական համալսարանի բակը: Այդ տեղով հարյուրավոր ուսանողներ կանցնեն ամեն օր և կամաթե ակամա կհաղորդվեն մեծ ու արժանապատիվ հայորդու, հայոց ազգային հերոսի վեհ կերպարին:



Եվ, այդուհանդերձ, հետաքրքիր էր իմանալ, թե ինչպես հղացավ Շահան Նաթալիի հիշատակը հավերժացնելու՝ տասնամյակներով ուղացած և սպասված գաղափարը: Այդ առիթով ահա թե ինչ ասաց Սուրեն Խաչատրյանը. «Շահան Նաթալին մահացավ 99 տարեկանում՝ 1983թ. ապրիլի 18-ին, Քոստոնոմում: Այնտեղ էլ հերոսի հոգնատանջ մարմինը հողին հանձնվեց: Բայց նրա կյանքն ու գործը գրեթե անհայտ մնացին հայ ժողովրդի լայն շրջանակներին, նրա հիշատակը չհարգվեց ու չհավերժացվեց ըստ պատշաճի: Մինչդեռ նա կատարեց այն, ինչ հրամայում էին 1,5 մլն նահատակ հայերի հոգիները, ինչը պարտավոր էին կատարել ողջերը: Շահան Նաթալին, առանց չափազանցության, հայոց նեմեսիսն էր՝ հունական դիցաբա-

նության մեջ հայտնի արդար բարկության աստվածը: Մենք պարտավոր էինք գոնե ուղացումով հավերժացնել նրա անմեռ հիշատակը և հավերժացրինք»:

Ասվածին հավելենք՝ Շահան Նաթալին թողել է նաև գրական հարուստ ժառանգություն, քանզի գրական շնորհներ, վերլուծական, քաղաքագիտական բացառիկ կարողություններ ուներ: Եկել է ժամանակը, որ այդ ամենն ամբողջացվի ու հրատարակվի, դրվի ընթերցողի սեղանին, ինչը կլինի նրա հիշատակի հավերժացման ևս մեկ ակնառու քայլ:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ  
«ՍՅՈՒՆՅԱՏ ԵՐԿԻՐ»,  
№ 29 (405), 10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016 Թ.

# Նարեկ Օրդյան. Սյունյաց աշխարհի մերօրյա քանդակագործը

ՍԿԻՋԲԸ՝ էՋ 17

գեղանկարները չեմ ցուցադրում, բնավորություն է, դրանք վեր են ածվում քանդակների և նոր միայն ներկայացվում հանրությանը»:

Չի՞ կարծում, որ Գորիս քաղաքին պակասում են ճարտարապետական փոքր ձևերը (քանդակները). «Այն կարծիքին եմ, որ ամեն մի քանդակ տեղ չպիտի գտնի քաղաքի պուրակներում, ծառուղիներում: Կարող է մեկը գեղանկար գնի և կախի իր տան պատին: Բայց քանդակը դեմք է ներկայացնում, քաղաք է ներկայացնում, քաղաք մտնողն ի՞նչ կասի: Քանդակները պրոֆեսիոնալ քանդակագործները պիտի անեն, ամեն հատիչ ու մուրճ բռնող քանդակագործ չէ: Մեկը մի պարզունակ խաչքար է պատրաստում, թե՛ քանդակագործ եմ, քանդակ եմ արել: Խաչքարագործությունն ու քանդակագործությունը տարբեր բաներ են: Խաչ-



քարը հայերիս այցքարտն է, դրանով են մեզ ճանաչում աշխարհում: Բայց այստեղից-այնտեղից գտած զարդանախշեր են բերում, կցում-կցմցում, իրար հետ բնավ կապ չունեցող: Նայում ես, հա, սիրուն է, բայց հո սիրունով չէ: Ասելիք չկա մեջը»:

Մեր գրուցում քանդակի հետ կապված ոչ մի դետալ չի վրիպում Նարեկի ուշադրությունից: Ասում է, որ քանդակի, հուշակոթողի պատվանդանը ևս ճիշտ պիտի ընտրվի: «Եթե պատվանդանը ճիշտ չի ընտրվում և սխալ տեղ է տեղադրվում՝ միջավայրի հետ «չխոսող», քանդակը խեղճանում է»: Նրա կերտած գործերի մասին փորձում եմ մեկնաբանություն ստանալ. «Համոզված եմ՝ եթե հեղինակն իր աշխատանքը մեկնաբանում է, արժեզրկում է այն: Տեսնողն ինքը պիտի ընկալի գործը: Այլ բան է, որ կարող է անհասկանալի դետալներ լինել»:

Օրվա մեջ այնպիսի պահեր չկա՞ն, որ ավելի հաճույքով է ստեղծագործում: Նման պահեր չկան, բայց իրեն լավ է զգում, երբ սիրելի գործով է զբաղված, սիրում է, երբ անկաշկանդ ստեղծագործում է. «Եթե մի բան գալիս է մտքիս, պիտի անեմ, չեմ կարողանում հանգստանալ: Չեմ սիրում, երբ ստեղծագործող մարդը կապկուր է, շատերը կեղծում են, չեն ասում ճշմարտությունը»:

Հետաքրքրվեցինք քանդակագործի ստեղծագործական ծրագրերով: Մի «հան-



«Հայ ընտանիք»

դուզն» մտահղացում ունի՝ կերտել Մովսես Խորենացու արձանը: Հզոր գործ է լինելու՝ 15-20 մետր բարձրությամբ: Այժմ արձանի էսքիզներն է անում: Խոստովանում է, որ չափազանց պատասխանատու գործ է ձեռնարկել, բայց այն վստահությունը, որով տոգորված էր նրա խոսքը ստեղծվելիք հուշակոթողի մասին, հույս է ներշնչում, որ Գորիսի բարձունքներից մեկին (ինչպես ինքն է նախատեսում) կհառնի Պատմահոր հուշակոթողը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ  
«ՍՅՈՒՆՅԱՏ ԵՐԿԻՐ»,  
№ 33 (451), 10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017 Թ.

# Բաբիկ Վարդանյան



Մերօրյա խաչքարագործ վարպետ Բաբիկ Վարդանյանը՝ Սիսիանից, որոշակի ներդրում ունի հայ խաչքարագործության մշակույթի զարգացման գործում:

Վարպետ Բաբիկը սերում է քարգործ վարպետների գերդաստանից, ում հայրը, պապը, պապի հայրը եղել են քարգործ վարպետներ:

Վարպետը մանկուց հոր և եղբայրների հետ միասին հիմնական ժամանակն անցկացրել է վարպետ Վաղինակի արվեստանոցում, իսկ բանակից զորացրվելուց հետո շարունակում է իր վաղամեռիկ հոր գործը, կերտել և կերտում է բազում խաչքարեր ու հուշադրություններ:

Փոքր-ինչ բարդ կլինի համեմատել հայկական ավանդական և ժամանակակից խաչքարագործական մշակույթները, քանի որ վարպետ Բաբիկը, լինելով արվեստագետ, իր կնիքն է թողել հայկական ժամանակակից խաչքարային արվեստում, ու հենց այդ կնիքն է, որ ընդհանրություն է ստեղծում վարպետի բոլոր աշխատանքներում և միևնույն ժամանակ դրանք տարբերակում թե ավանդական և թե ժամանակակից այլ խաչքարերից:

Վարպետի կերտած աշխատանքներում



հորինվածքի կառուցվածքը փոքր-ինչ այլ է, քան դասական խաչքարերում, իսկ դրանց մեջ կա մեծ խորհուրդ ու բովանդակություն:

Վարպետ Բաբիկի ստեղծագործական աշխատանքները մեծ հետաքրքրություններ են առաջացրել ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանի սահմաններից դուրս:

Վարպետի աշխատանքները դիտարկելուց կարող ենք ենթադրել, որ խաչքարագործությունը նա չի դիտարկում որպես արհեստ կամ մասնագիտություն: Խաչքարը

կարծես հավատի դրսևորում լինի, և ինչպես վարպետն է պնդում՝ միայն հավատացյալը կարող է և իրավունք ունի խաչքար կերտելու. «...Ով որ խաչքար ա անում, ինչքան որ ուսումնասիրել եմ թե՛ Հայաստանում, թե՛ Հայաստանից դուրս, մեծամասամբ էն մարդիկ են, ովքեր հավատք ունեն:

Վարպետ Բաբիկի նախագծած յուրաքանչյուր զարդանախշ տարբերվում է նախորդներից, ամեն մեկն էլ յուրովի է, ամեն մեկն էլ իմաստ ունի, գեղեցիկն ու իմաստը

մեկտեղված են, իսկ վարպետ Բաբիկը պահելով հայկականությունը՝ յուրովի ու գեղեցիկ է ներկայացնում հայկական խաչքարերը, կարողանում բացատրել յուրաքանչյուր զարդի իմաստն ու բովանդակությունը:

**ԱՐԿԱԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՖԱԿՈՒՆԵՏԻ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ և  
ՊԱՏՄԱԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՆԻ  
ԴԱՍԱԽՈՍ**

# Ռազմիկ Արզումանյան

Ծնվել է 1950 թ. Գորիս քաղաքում:

1971-1982 թթ. մասնակցել է Գորիսում կազմակերպված մի շարք ցուցահանդեսների: 1976 թ. մասնակցել է Երևանում կազմակերպված գրաֆիկայի հանրապետական ցուցահանդեսին:

1977-1980 թթ. մասնակցել է հանրապետական և միությանական թեմատիկ ցուցահանդեսներին:

1977 թ Երևանում կազմակերպված ցուցահանդեսում «Իմ Զանգեզուրը» շարքի համար արժանացել է «Ամենամյա» մրցանակի: 1987 թվականից սկսած՝ նախկին ԽՍՀՄ նկարիչների միության «Երիտասարդական» սեկցիայի անդամ է:

Ներկայումս բնակվում է Կանադայում: Քանդակագործության ոլորտում նրա ստեղծած գործերից լավագույնն է Ակսել Բակունցի տուն-թանգարանի բակում 2004-ին կանգնեցված խաչքար-հուշարձանը:

Խաչքար-հուշարձանի բացման առիթով Թեհմինա Մարությանի խոսքից հատված՝ ստորև:

\*\*\*

Գրողի 105-ամյակը հարմար առիթ էր՝ «չափազանց կարևոր» մի մտահղացում իրականացնելու համար. Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ ու ֆինանսավորմամբ էլ բակունցյան ավանդական օրերին գրողի տուն-թանգարանի այգում տեղադրվեց քանդակագործ Ռազմիկ Արզումանյանի խաչքար-հուշակոթողը:

Այո, ճիշտ է ասված՝ «գործք թագավորին»: Հավերժության ոգով են շնչում խաչքարի վրա փորագրված տողերը՝ «Կաման Աստուծոյ և արդեամբ մարգպետի Սինեաց



Սուրեն Խաչատրեանա կանգնեցաւ սուրբ խաչս ի բարեխաւս Ակսել Բակունցա, որ շարաղետ ամի ՌԶԼԷ փոխեցաւ ի Քրիստոս տեթող կսկիծ անսփոփ ազգիս հայոց»:

Յուրաքանչյուր սյունեցի, յուրաքանչյուր հայ երախտագիտությամբ ու խոնարհաբար է ընդունելու իր տաղանդավոր զավակի հիշատակին նվիրված այս պարզը. չէ՞ որ Ակսելը շիրմաքար չուներ... Եվ կոթողն այդ քարեղենն ոգու պես հսկելու է դարերին՝ քարե հավերժախոս ձայնով՝ «Ալեքսանդր Բակունց՝ ի գեղջեն Գորիս, որդի Ստեփանա և ամենայն հայոց»:

Հայրենի հողը բախտ չունեցավ ամփոփելու Բակունցի աճյունը, բայց ամփոփեց ոգին... Եվ ոգին ձայն է տալու, ձայնի կանչով «մանուշակը թեքվելու է, գլուխը հենի այդ քարին...»:

## ԱՂՈՔ

*Ակսել Բակունցի լուսապայծառ հիշատակին՝ կանգնեցված խաչքարի առթիվ*

...Մեռելներու իբրև խաչ  
Ես այս ծառս տնկեցի:  
**Լ. Զ. ՍՅՈՒՐՄԵՆՅԱՆ**

Տե՛ր, խաչքարն այս ընդունի՛ր, Օրհնությամբ քո հայրական... Նվիրական այս հողին Մերվող խաչն այս նորընծա Թող պահպանես բարեխոս, Լինի հոգուն հանձարի...

Որ երկրային իր ճամփից Հայածական կարեվեր Վերադարձավ առ ի քեզ՝ Պայծառատես, լուսերես... Տե՛ր, օրհնությամբ հայրական Պահպանեն այս ընդունի՛ր Խաչքարերիդ բույլի մեջ, Եվ սփոփիր հոգիներ, Որ դեռ միտում են ցավից Լույսի, լավի և բարու Այն ապաժամ «հանգյալի»:

Տե՛ր, բարությամբ տիրական Բարեխոսն այս ընդունի՛ր:  
**ՔԱԶԻԿ ԴՈՐՈՒՆՑ**



# Ռուբիկ Գասպարյան (Բուդյան)



Ծնվել է 1946 թ. Կապան քաղաքում: Մանկությունը և պատանեկությունն անցել են կապանցիներին հայտնի 2-րդ շենքում: Սովորել և ավարտել է Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցը, այնուհետև՝ 1964-68 թթ., Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանի քանդակագործության բաժինը:

1968-70 թթ. ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում:

1970-78 թթ. ընդունվել է ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի քանդակագործության բաժինը:

Նրա դիպլոմային աշխատանքը՝ «Ըմբշամարտիկների պայքար»-ը, ներկայացվել է ԽՍՀՄ ուսանողների դիպլոմային աշխատանքների ցուցադրությանը և արժանացել արծաթե մեդալի: Գիպես քանդակը գտնվում է Կապանի ժամանակակից արվեստի թանգարանի մշտական ցուցադրության սրահում:

Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի քանդակագործության բաժինն ավարտելուց հետո տեղափոխվել է

Կապան և աշխատել Ավտոլերանորոգման գործարանում՝ նկարիչ ձևավորող: Գործարանի մուտքի մոտ՝ Երևան-Կապան մայրուղու բանուկ մասում, տեղադրված է արծիվ, որի թևերի փոխարեն քանդակել է «Բելագ»-ի թավիք՝ որպես ավտոլերանորոգման գործարանի խորհրդանիշ:

Նաև հեղինակել է Կապանի մուտքի քանդակը՝ կնոջ տեսքով՝ գլխին ունենալով խաղաղության խորհրդանիշ թռչուն, որն ինչ-ինչ պատճառներով չտեղադրվեց (այն նույնպես Կապանի ժամանակակից արվեստի թանգարանում է):



«Ըմբշամարտիկների պայքար»-ը

Նրա ստեղծած «Երևան-Կապան մայրուղու բանուկ մասում, տեղադրված է արծիվ, որի թևերի փոխարեն քանդակել է «Բելագ»-ի թավիք՝ որպես ավտոլերանորոգման գործարանի խորհրդանիշ:

Ռուբիկը, տաղանդավոր քանդակագործ լինելուց բացի, տաղանդավոր ֆուտբոլիստ էր: Հանդես էր գալիս «Լեռնագործ» ֆուտբոլային թիմում: Մահացել է 2020 թվականին: ●

# Գարեն Զադայան



Ծնվել է 1953թ. օգոստոսի 24-ին Վերիշեն գյուղում, որի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո շարունակել է կրթությունը Երևանի Սարյանի անվան ուսումնարանում՝ մասնագիտանալով փայտի գեղարվեստական մշակման մեջ:

Նրա կրթությունն ու առաջին քայլերն արվեստում հիմք դրեցին ստեղծագործական ակտիվ գործունեության, որը տևեց տասնյակ տարիներ ու իր հետքը թողեց Հայաստանի տարբեր անկյուններում: Նրա ստեղծած խաչքարերը, հուշակոթողները, քանդակները ոչ միայն գեղագիտական արժեք են ներկայացնում, այլև խորն ազգային ու հոգևոր խորհուրդ ունեն: Մասնավորապես, Արցախյան ազատամարտի հերոսների և 44-օրյա պատերազմի նահատակներին նվիրված հուշակոթողները վկայում

են հերոսների հանդեպ նրա հարգանքի ու պատկառանքի մասին:

Բերդաձորում տեղադրված խաչքարը, որը նվիրված է Արցախյան առաջին պատերազմի զոհերին, Գարեն Զադայանի ամեն



նանշանակալից աշխատանքներից է, որի լուսանկարները չեն պահպանվում:

Հարժիսի միջնակարգ դպրոցի բակում տեղադրված է Արցախյան ազատամարտի հերոս Համլետ Մինասյանի արձանը, որը հիշեցնում է մեր քաջ հայրենակցի սիրանքը:

Տեղ համայնքում Զորավար Անդրանիկի հիշատակին նվիրված հուշակոթողը նույնպես կարևոր նշանակություն ունի տարածաշրջանի մշակութային կյանքում:

Իր ստեղծագործական ուղին զուգակցել է նաև հանրապետական նշանակության նախագծերին մասնակցություն ունենալով: Նրա վարպետությունն ու նրբագեղ ձեռագիրը տեղ են գտել Երևանի օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի նախաքանդակների վրա:

Գարեն Զադայանը ոչ միայն արվեստագետ էր, այլև նվիրված ուսուցիչ, ով իր գիտելիքներն ու հմտությունները սիրով փոխանցել է սերունդներին: Ուսուցանել է քանդակագործություն 20-ից ավելի աշակերտի, որոնցից շատերն այսօր հայտնի քանդակագործներ են Գորիսի տարածաշրջանում:

Նրա թողած ժառանգությունը բազմաշերտ է՝ հուշադրյուրներից ու խաչքարերից մինչև բարդ քանդակներ: Այսօր էլ, երբ ամեն անգամ արևի ճառագայթները դիպչում են Զադայանի կերտած խաչքարերին, թվում է՝ վարպետը ժպտում է՝ ասելով, որ քարն ունի հիշողություն, իսկ արվեստը՝ հավերժության այցեքարտ:



# Լևոն Թումանյան



Կապանի արվեստի թանգարանում բացվեց քանդակագործ Լևոն Թումանյանի անհատական աշխատանքների ցուցահանդեսը՝ նվիրված նրա հիշատակին:

Արվեստագետը ծնվել է Կապանում՝ 1953 թվականին, ավարտել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը, ապա՝ 1978-ին ընդունվել և 1984-ին ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտը՝ նկարիչ-քանդակագործի որակավորմամբ: Կապանում մասնակցել է ցուցահանդեսների, նրա աշխատանքները գտնվում են անհատական հավաքածուներում:

Հարազատները, մտերիմները որո-

շեցին Լևոնի աշխատանքների ցուցահանդես կազմակերպել, որի բացումը տեղի ունեցավ փետրվարի 15-ին:

Ցուցահանդեսը ներածական խոսքով բացեց գեղանկարիչ Բորիկ Մինասյանը՝ մասնավորապես նշելով, որ Կապանում քանդակագործը նկարիչների հետ մասնակցել է ցուցահանդեսների, բայց անհատական ցուցահանդես առաջին անգամ է կազմակերպվում: Անդրադառնալով Լևոն Թումանյանի աշխատանքներին՝ բանախոսն ընդգծեց այն հանգամանքը, որ նա իր աշխատանքներում անդրադարձել է

տարբեր թեմաների, իսկ դիպլոմային աշխատանքը եղել է Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի քանդակը: Էկրանից հնչեց Լևոն Թումանյանի կենդանի խոսքը. ցուցահանդեսի մասնակիցները որոշ մանրամասներ իմացան նրա ստեղծագործական կյանքից:

Լևոն Թումանյանի մասին հուշեր ներկայացրին քանդակագործ Ալեքսան Առաքելյանը, Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասան Արտավազ Գրիգորյանը, ուրիշներ:

Ներկաներին անկեղծ երախտագիտություն հայտնեց Սիլվա Գրիգորյանը՝ ցուցահանդեսին մասնակցելու համար, որն էլ ըստ ամենայնի հարգանքի տուրք էր ամուսնու հիշատակին:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ  
15 ՓԵՏՐՎԱՐԻ 2023Թ.**



## Սոս Ասրյան

Ծնվել է 1952 թ. մարտի 28-ին՝ Կապանում: Սովորել է Հունան Ավետիսյանի անվան թիվ 9 դպրոցում: 1970 թ. ընդունվել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը և 1976 թ. ավարտել ուսումնարանի լրիվ դասընթացը՝ «Քանդակագործ» մասնագիտությամբ:

Ուսման ընթացքում զորակոչվել և ծառայել է խորհրդային բանակում (1973-1975թթ.): Զորացրվելուց հետո ապրել ու աշխատել է Կապանում: Դասավանդել է Քաջարանի մանկական գեղարվեստի դպրոցում, աշխատել Կապանի պետական թատրոնում՝ բուտաֆորիստ:

1990 թվականից իր արվեստանոցում ստեղծագործական աշխատանքով է զբաղվել: Նա բազմաթիվ քանդակների հեղինակ է: Կյանքից հեռացել է 2024 թ.:

# Ռոբերտ Կամոյան. կյանք նվիրված գունաշխարհին

Ծնվել է 1937 թվականի հունվարի 6-ին: Հայրը՝ Վարդան Կամոյանը, Լոռուց էր (ծնվել է Ալավերդիում), ուր նրա նախնիները եկել էին Ագուլիսից (պապը՝ Արշակը, որոշ ժամանակ բնակվել է Խնձորեսկում): Ռուսաստանում (Սվերդլովսկում) լեռնային ինժեների բարձրագույն կրթություն ստացած Վարդան Կամոյանը Կապան է եկել 1932 թվականին՝ գործուժամաք՝ տեղի հանքարդյունաբերական ձեռնարկությունում աշխատելու համար: Կապանում էլ ընտանիք է ձևավորվել և ապրել մինչև կյանքի վերջը: Մայրը՝ Վարդիթեր Կամոյանը, Վաչագան գյուղից էր՝ Օրբելյանների տոհմից (Ռոբերտ Կամոյանի վկայությամբ՝ հայտնի իշխանական տոհմից):

Ռոբերտը միջնակարգ կրթություն է ստացել Կապանի թիվ 3 ռուսական դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել է Լեռնի գրագրի Ի. Ռեպինի անվան գեղարվեստի ակադեմիայում: 1954-55 թթ. այնտեղ սովորելուց հետո՝ երկրորդ կուրսից ուսումն ընդհատել է, վերադարձել Կապան:

1958 թվականին ընդունվել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետը, որը, ռեժիսուրա մասնագիտությամբ ավարտել է 1963 թվականին: Միաժամանակ սովորել է նույն ինստիտուտի գունանկարչական ֆակուլտետում, որն ավարտել է 1964-ին՝ նկարիչ-գունանկարչի ու մանկավարժի մասնագիտությամբ: Գեղարվեստաթատերական ինստիտուտում սովորել է ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ռեժիսոր Վարդան Աճեմյանի, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, ռեժիսոր Արմեն Գուլակյանի, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր Էդուարդ Իսաբեկյանի, և այլ նկարիչների, դերասանների ու ռեժիսորների ղեկավարությամբ:

1965 թ. աշխատել է Մեղրու շրջանի Ագարակ քաղաքի մշակույթի տան տնօրեն:




1966-1967 թթ. աշխատել է Երևանի Հ. Թումանյանի անվան պետական տիկնիկային և Կ. Ստանիսլավսկու անվան պետական թատրոններում՝ ռեժիսոր, նկարիչ:

1967-98 թթ. աշխատել է Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնում՝ բեմադրող ռեժիսոր, նկարիչ և գլխավոր նկարիչ: Զուգահեռաբար բեմական ձևավորումներ է կատարել Գյումրու, Գորիսի թատրոններում:

1964 թվականից մասնակցել է հանրապետական և համամիութենական ցուցահանդեսների: Անհատական ցուցահանդեսներ է բացել Լեռնի գրագրում, Ռիգայում, Յուրմալայում, Վիլնյուսում, Երևանում, Կապանում:

1971 թվականից գործել է նրա հիմնադրած նկարչական ստուդիան, որտեղ տարիների ընթացքում ուսանել են հարյուրից ավելի պատանիներ և աղջիկներ:

Ռոբերտ Կամոյանի ստեղծագործությունների մի մասը գտնվում է Հայաստանի, ԱՄՆ-ի, Կանադայի, Ռուսաստանի Դաշնության, Լիտվայի, Լատվիայի և



«Յուրը»

Էստոնիայի թանգարաններում ու մասնավոր հավաքածուներում:

Վաստակաշատ արվեստագետի ստեղծագործական տեխնիկայում գերակշռում են յուղաներկը, ջրաներկը, գուաշը, տուշը, մատիտը, ածուխը, ժանրային առումով՝ բնանկարը, դիմանկարը, կոմպոզիցիան:

Նրա ստեղծագործությունների գլխավոր լեյտմոտիվը մարդն է՝ իր հոգսերով, մտահոգություններով:

Այդ բոլորով հանդերձ՝ Ռոբերտ Կամոյանը դեռևս չունի ստեղծագործությունների ամբողջական կատալոգ, որի ստեղծումն անհրաժեշտ է և հրատապ: Օրախնդիր է նաև նրա հազարից ավելի գեղանկարների պահպանության հարցը, որ հիմա գտնվում են գեղանկարչի արվեստանոցում:

Ռոբերտ Կամոյանը զբաղվել է նաև քանդակագործությամբ: Առայժմ հաջողվել է պարզել, որ հեղինակել է երկու ստեղծագործություն:

## Լորիկ Մինասյան



նրա նախասիրությունների և գեղագիտական ընկալումների մասին:

Լորիկը ոչ միայն վրձինն է ձեռքն առել, այլ հատիչն ու մուրճը, շունչ տվել քարին: Քանդակագործության հանդեպ նրա հակումն, անշուշտ, դեր է ունեցել արյան կանչը: Շիրվանզադեի նրա նախնիները բրուտագործներ են եղել, և վստահորեն կարելի է փաստել, որ քանդակագործությունն աղերսներ ունի իր ծագման հետ:

Ծնվել է Կապանում, սովորել թիվ 7 միջնակարգ դպրոցում, այնուհետև՝ ծառայություն խորհրդային բանակում, որն ավարտելով՝ ընդունվել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի կերպարվեստի բաժինը, որտեղ դասավանդում էին գեղանկար, քանդակ և կիրառական արվեստ:

Երախտագիտությամբ է հիշում իր ուսուցիչներին՝ ՀՀ ժողովրդական նկարիչ, ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ Ղուկաս Չուբարյանին, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Լևոն Կոջոյանին, մյուսներին: Ղուկաս Չուբարյանը նրան գծանկար է դասավանդել: «Այն ամենը, ինչ նա ինձ տվել է, բավական էր որոշ կյանքի համար, նա ոչ միայն մասնագիտությունից էր խոսում, այլև հանապազօրյա կյանքից, ինչը և շատ կարևոր էր», - վերհիշում է Լորիկը:

Բուհն ավարտելուց հետո գործուղվել է Ծավ գյուղի միջնակարգ դպրոց, որտեղ դասավանդել է երեք տարի: Այնուհետև աշխատել է գիտությունների ակադեմիայի փորձարարական գործարանում՝ դիզայներ, ունի հեղինակային գործ: Քանդակագործական առաջին երևելի աշխատանքն արել է 1990-ին, եղբոր՝ գեղանկարիչ Բորիկ Մինասյանի հետ. դա «Մուսա» հարթաքանդակն էր, որ տեղադրված է Կապանի պատկերասրահում:

Արցախյան առաջին պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշակոթող-խաչքարի համահեղինակն է, որը գտնվում է Քաջարանում:



Ինքը նաև արվեստի գործ է համարում 1996 թվականին ստեղծված «Կենսա ծառ» աշխատանքը, որ տեղադրված է հոր գերեզմանին:

Համահեղինակությամբ՝ քանդակագործ Գևորգ Մշեցու հետ, մի քանդակ է արել՝ «Աշխատանք» է կոչվում, որ տեղադրված է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի վարչական շենքի մերձակա պուրակում:

Մտադրություն ուներ Կապան քաղաքի մուտքը խորհրդանշող մի քանդակ անել, նախնական աշխատանք էր արել, մակետ

ստեղծել, բայց ինչ-ինչ պատճառներով այդ մտահղացումն իրականություն չդարձավ: Նույն բախտին արժանացավ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող «Նուռը» քանդակը, որի մակետը կա՝ իր բացատրագրով: Գեղարվեստական խորհրդի մի քանի փուլով անցավ մայրաքաղաքում, բայց խոչընդոտել են այդ մտահղացման իրականացմանը... Նուռը հավերժության խորհրդանիշ է, շատ կուզեք, որ այդ քանդակը տեղադրվեր Կապանում:

**ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Ժիրայր Մարտիրոսյան



նու փայտն եմ նախընտրում, շատ լավ է հղկվում»:

Նրա քանդակների թեմատիկան...

«Բակունցի տուն-թանգարանի այգում՝ ծառերի բների վրա, քանդակներ արեցի՝ բակունցյան թեմաներով, իմ պատկերացումներով: Քանդակագործը նյութը վերցնելով շատ ժամանակ իր կոմպոզիցիան հարմարեցնում է նյութին...»

Ես բակունցյան թեմաներով բավականին գեղանկարչական աշխատանքներ ու-

Լանրությունը ժիրայր Մարտիրոսյանին ճանաչում է որպես գեղանկարիչ: Հետագայում պարզվեց, որ նաև քանդակագործությամբ է զբաղվում:

- Ինքս ինձ առաջին հերթին գեղանկարիչ եմ համարում, բայց ժամանակի ընթացքում որոշակի քանդակներ եմ արել: Իմ արվեստանոցում էլ շատ աշխատանքներ կան, Բակունցի տուն-թանգարանում էլ: Ընկուզենու փայտի վրա արված դիմաքանդակներ են՝ Գուսան Աշոտ, Չարենց, Բակունց, Տերյան, Սևակ, - ասում է ժիրայր Մարտիրոսյանը:

Քանդակով սկսել է զբաղվել մոտ տասը տարի առաջ...

Որպես քանդակի նյութ՝ նախապատվությունը տալիս է փայտին. «Ընկուզե-



նեմ, հենց այդ հանգամանքը նպաստեց, որ քանդակում ավելի հեշտությամբ կերպավորեմ բակունցյան հերոսներից մի քանիսին»:

Ժիրայր Մարտիրոսյանը նաև ծրագիր ունի քանդակի ոլորտում. «Ընդհանրապես իմ համար ավելի դյուրին է գեղանկարչությունը, քան քանդակագործությունը, բայց նաև ձգտում եմ մեր հերոսների քանդակները պատրաստել: Քանդակի միջոցով կերպար ստեղծելն ավելի դժվար է, քան

գեղանկարչության մեջ: Կտավի վրա դու աշխատելու չափանիշ ունես՝ կտավը մեծ վերցնես, դետալները շատացնես, դետալների միջոցով քո ցանկացած գաղափարն արտահայտես... Քանդակի ժամանակ որոշակի չափ է տրված, այդ չափի մեջ դու կարող է կոմպոզիցիոն մտածելակերպ դրսևորես, բայց հնարավորություն չլինի ինչ-որ դետալներ դնել, որ հասկացվի»:

# Բորիկ Մինասյան



ղոցում: Հինգից մեկն «Արցախահին» էր. դեռատի աղջիկը գլխավորում պահել է փյունիկ թռչունը, քանդակի մեջ այլ տարրեր են ներդրել՝ նուռ, խաղող, հավերժություն են խորհրդանշում:

Եվ մի քանդակ՝ «Մուսա» անվանյալ, տեղադրված է Գարեգին Նժդեհի փողոցի ներքնահարկում, որտեղ 1990-ականների սկզբին պատկերասրահ էր գործում:

Բորիկ Մինասյանի քանդակը, որ «Ժառանգություն» է կոչվում, տեղադրված է Ջերմուկում: Նա նաև խաչքար է քանդակել՝ նվիրված Արցախյան զոհվածների ճակատագրի մարտիկների հիշատակին: Այդ առումով մի փոքրիկ պարզաբանում տվեց. «Ըստ իս՝ ձգտել եմ արվեստ «ներարկել» այդ աշխատանքի մեջ՝ երկու հրեշտակների տեսքով»:

Լինելով գեղանկարիչ՝ ինչու է երբեմն անցել քանդակագործության, Բորիկ Մինասյանը պարզաբանում է, թե գեղանկարչության պարագայում կա մի դիտակետ, իսկ քանդակը չորս կողմից է դիտվում: Գաղտնիքը դրանով է պայմանավորված:

Որպես քանդակի «շինանյութ» նախընտրում է Միսիանի բազալտը, բայց ըստ նրա՝ ամենադյուրինը տուֆի հետ աշխատելն է, քանզի թույլ է տալիս, ինչպես ցանկանում ես «վարվել» իր հետ:

Ինչ վերաբերում է քանդակի ոլորտում իր ծրագրերին, մտադիր է դեկորատիվ մի քանդակ կերտել և տեղադրել Կապանի ժամանակակից արվեստի թանգարանի առջև, քանդակի էքզիզն արդեն պատրաստ է:

Քանդակագործության ոլորտում Բորիկ Մինասյանն իդեալ է համարում ֆրանսիացի քանդակագործ Էմիլ Անտուան Բուրդելին, անգլիացի քանդակագործ Հենրի Մուրին, հայ քանդակագործներից՝ Երվանդ Քոչարին: Առանձնապես գնահատում է վերջինիս մոնումենտալիստական աշխատանքները, իսկ քանդակագործին համարում է համաշխարհային ճանաչում ունեցող արվեստագետ:

ԶՐՈՒՅՑԸ՝  
ՄԱՐԻ ԵՎԱՍՍԱՐԴՅԱՆԻ



Բորիկ Մինասյանն առավել հայտնի է որպես գեղանկարիչ: Ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի գեղանկարչության բաժինը: 1992 թվականից՝ Հայաստանի նկարիչների միության անդամ: 1990 թվականից ժամանակակից արվեստի թանգարանի Կապանի մասնաճյուղի տնօրենն է: Ունի հեղինակային գործեր Կապան և Ջերմուկ քաղաքներում (քանդակներ և գեղանկարչական աշխատանքներ): Մասնակցել է միջազգային, համամիութենական, հանրապետական ցուցահանդեսների: Արժանացել է «Մովսես Խորենացի» մեդալի:

Զբաղվել է նաև քանդակագործությամբ: Իր սիրելի աշխատանքն «Արցախահին» քանդակն է. «Երբ սկսվեց Արցախյան շարժումը, մտածեցի, թե ես ինչով մասնակցեմ ազգային-ազատագրական զարթոնքին: Բացի այդ մեր քաղաքին պակասում էին ճարտարապետական՝ փոքր ձևերը: Այդ շրջանում հինգ քանդակ տեղադրվեց քաղաքում, որից մեկը Ստեփան Դավթյանի «Մտորում» քանդակն է՝ «Լեռնագործ» հյուրանոցի առջև, Ռոբերտ Կամոյանի «Ցուլը»՝ Արամ Մանուկյանի փո-

# Ստեփան Դավթյան

Կապանա տան երևելի արվեստագետներից է: Ավարտել է Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցը, 1978-ին՝ Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի քանդակի բաժինը: Հարգանքի զգացումով է հիշում դասախոսներին՝ Վռամշապուհ Շաքարյան, Գրիգոր Ահարոնյան, Երեմ Վարդանյան, Թերեզա Միրզոյան...



Խորհրդային բանակում ծառայելիս (սահմանապահ զորքեր) բազում քանդակներ է արել, որում արտացոլված են սահմանապահների՝ անակնկալներով լեցուն ծառայությունը: Նրա գինվորական տարիների ստեղծագործությունների մասին անդրադարձ կա Անդրկովկասի Կարմրադրոշ սահմանապահ օկրուգի «На рубеже родины» (15 հունիսի 1979 թ.) թերթի «Ամբողջի մասերը» հրատարակման մեջ, որում կարդում ենք. «Ահա տեսնում եք Ստեփան Դավթյանի աշխատանքը՝ Մոգիլսկու քանդակը: Արխիվում Անդրկովկասի արտակարգ հանձնաժողովի պետ Սոլոմոն Մոգիլսկու՝ բացի մի եզակի լուսանկարից այլ բան չէր պահպանվել: Բայց, այնուամենայնիվ, Դավթյանն իր աշխատանքում արտացոլել է այդ աննկուն մարդու՝ Ֆելիքս Էդմունդովիչ Ջերժինսկու գինակցի ներքնաշխարհը: Ես տեսել եմ այդ կիսանդրին և հիացած եմ: Ինչպիսի ձիրք պիտի ունենա քանդակագործը, ինչպես կարող է իմանալ մարդու հոգու գեղեցկությունն ու լայնությունը, որ մարդկանց փոխանցի այն, ինչ տեսել ու զգացել է»:

Ստեփան Դավթյանին լրագրողը հարցրել է, թե արդյո՞ք Մոգիլսկու քանդակը նրա լավագույն գործն է. «**Ինձ հաճախ են նման հարց տալիս: Քանդակագործի հա-**

մար յուրաքանչյուր աշխատանք սիրելի է, որովհետև այն երեխայի ծննդյան պես է: Եվ հետո չեն լինում սիրելի և ոչ սիրելի երեխաներ: Այդպես և քանդակներն են: Քանդակները լինում են կամ ավարտված կամ մտահղացված: Անցնում է ժամանակը, և քանդակագործի առջև նոր խնդիրներ են դրվում: Այն, ինչը գոհացնում էր, դա արդեն անցյալում է: Նշանակում է՝ նոր ուղիներ պիտի փնտրել»:

Ավելի վաղ՝ 30 մարտի 1979 թ., թերթը տպագրել էր նրա լուսանկարը՝ համառոտ ներկայացնելով գինվոր-քանդակագործին:

Ստեփան Դավթյանը ստեղծագործել է 1972 թվականից, իսկ 1973-ից մասնակցել է հանրապետական, միջազգային և այլ ցուցահանդեսների: 1992-ից Հայաստանի նկարիչների միության անդամ է: Ստեղծագործությունները գտնվում են Ռուսաստանի, Վրաստանի, Լիտվայի, Լատվիայի, Իրանի, Լիբանանի, ԱՄՆ-ի և այլ երկրների մասնավոր հավաքածուներում:

Կարելի է ասել, որ Ստ. Դավթյանի գիտակցական կյանքն անցել է մանկավարժության և քանդակագործության ոլորտներում:

1979 թվականից գեղարվեստի մանկական դպրոցում քանդակագործություն է դասավանդել, 1993 թվականից մինչև 2024 թվականը Կապանի գեղարվեստի մանկական դպրոցի տնօրենն էր՝ հրնթացս դասավանդելով քանդակագործություն: Այժմ այդ



դպրոցում քանդակագործություն է դասավանդում նրա սան Էդգար Ստեփանյանը, կոմպոզիցիստ՝ Ռաֆայել Առաքելյանը:

2004 թ. ապրիլի 21-ին Կապանի գեղարվեստի մանկական դպրոցի դասարաններից մեկը կոչվեց Ստեփան Դավթյանի անվամբ: Անվանակոչության արարողությանը մասնակցում էին արվեստագետի գործընկերները՝ Ռոմեն Դոնյան, Սեյրան Աղավելյան, Հրանտ Էլջյան, Սեյրան Գրիգորյան, Ռուբիկ Կոստանյան, ովքեր քանդակագործի մասին հուշեր պատմեցին՝ համատեղ աշխատանքի, հին ու բարի ժամանակների հետ կապված:

Ստեփան Դավթյանը մնայուն գործեր է թողել. Կապանի «Լեռնագործ» հյուրանոցի առջև տեղադրված է «Մտորում» քանդակը: Կապանի Հալիձոր թաղամասի № 8 մանկապարտեզի շենքի ճակատային մասում տեղադրված է «Ուժ և հավատարմություն»

խճանկարը: Ստեփան Դավթյանը բազում սաներ է դաստիարակել, նրա ապրած կյանքը նվիրում է հայրենի եզերքին, Կապան քաղաքին, դիցական Խուստուփ լեռանը: Հարցազրույցներից մեկում լրագրողի հարցին, թե չի՞ ցանկացել դրսում ապրել ու ստեղծագործել, պատասխանել է. «**Հազար հնարավորություն եմ ունեցել, բայց առանց հայրենի քաղաքի ես ինձ երբեք չեմ պատկերացրել: Եղբայր, եթե իսկապես ծառայում ենք ազգին, արի ծառայենք, միասին քայլենք, թե՞ դու ուրիշ նպատակ ունես, թե՞ կարծում ես ուրիշ նպատակներ էլ են լինում: Պարտվենք՝ տուժող ես եմ, հաղթենք՝ շահող ես եմ»:**

Իսկը՝ մտավորականի կեցվածք:  
**ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**



# Մանվել Մաթևոսյան

Մի քանի ամիս առաջ ժամանակակից արվեստի ինստիտուտն և ArtNexus-ը հայտարարել էին «Հանրային արվեստի գործերի ստեղծում» մրցույթի հաղթող արվեստագետներին, ում գործերը հոկտեմբերի վերջին իրենց տեղը կգրադեցնեն Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղում:

Գալից գրառումներում կներկայացնենք մեր արվեստագետներին և իրենց ստեղծած գործերը: Այսօր կպատմենք Մանվել Մաթևոսյանի մասին, ով երևանաբնակ քանդակագործ է, ծնունդով Սյունիքի մարզի Սիսիան քաղաքից: Ուսանել է Երևանի երկու հեղինակավոր արվեստի ինստիտուտներում: Ստեղծագործում է նորարարական մոտեցումներով՝ անդրադառնալով ժամանակակից քանդակագործության հիմնական խնդիրներին: Աշխատում է քարի, բրոնզի հետ՝ որպես հիմնական նյութ օգտագործելով մետաղի ջարդոնը՝ կարևորելով ստեղծագործության մեջ բոլոր նյութերի առանձնահատկությունները:

Ստեղծագործական հետազոտության և համագործակցության իր փորձառությամբ Մանվելը յուրօրինակ մոտեցում է բերում միջդիսցիպլինար նախագծերին՝ կամրջելով քանդակագործության և միջավայրի ներգրավվածության միջև առկա անջրպետը:

Մանվելը համագործակցել է տեսանկարահանողների և ռեժիսորների հետ տարբեր «Վիդեո» և կինոնախագծերի շրջանակում, որոնց թվում են՝ «Ավորա» մրցանակի արձանիկի և իր ստեղծագործական ճանապարհը ներկայացնող վավերագրական ֆիլմերը, վերջինս ցուցադրվել է BEKART-ի և «Արվեստանոցի» կողմից:

2023 թ.-ին հեղինակել է Գեղարվեստական տպագրության Չորրորդ միջազգային բիենալե, Երևան 2023-ի մրցանակները, ինչպես նաև դարձել է Պորտուգալիայի Պիկո կղզում գործող NU»VEM Artist Residency-ի մասնակից:

Նրա «Քառակուսու մասերը» տեղահատուկ քանդակային իստալյացիան ուսումնասիրում է բնության և մարդու միջամտության փոխազդեցությունը՝ դիտողին հանրային տարածքի հետ երկխոսության մեջ ներգրավելու միջոցով: Այն հարցադրում է ավանդական արվեստի սահմանները՝ ներմիավորելով բնական միջավայրի հետ և հրավիրում դիտողներին վերանայել իրենց տեղը այս բոլորապատույտ հարաբերություններում:

Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի մերձակայքում գտնվող դաշտերի բլուրներին 5,3մ բարձրությամբ ժանգոտած մետաղից, տրոհված քառակուսու երկրաչափական մասերը ասիմետրիկ կրկնությամբ հավակնում են բնության տարբեր ֆորմաները համալրել մարդու միջամտությամբ ստեղծված ֆորմայով՝ սահմանվելով երկրաչափական ֆորմաների ու բնապատկերի հարաբերության շուրջ:

Ծրագիրն իրականացվում է Շվեդական միջազգային զարգացման համագործակցության գործակալության (Sida) կողմից ֆինանսավորվող և Շվեդիայի Արվեստի դրամաշնորհների կոմիտեի կողմից իրականացվող ArtNexus ծրագրի օժանդակությամբ: \*\*\*

Երևանաբնակ արվեստագետ Մանվել Մաթևոսյանը հետաքրքրված է նյութը, ինչպես նաև քանդակագործի վերաբերմունքը դրա նկատմամբ հասկանալու մեջ: Փնտրում է եռաչափ գունային լուծումներ, որոնք նրան հնարավորություն կտան իր գաղափարները վերածել օբյեկտիվ պատկերների:

Օգտագործելով երկաթ, տարբեր տեսակի քարեր, փայտ, բրոնզե չժանգոտվող պողպատ և մետաղի ջարդոն՝ որպես հիմնական նյութ և ստեղծագործական հիմք: Մանվելն աշխատում է իր սեփական քանդակագործական ստուդիայում, որը գտնվում է նախկին խորհրդային գործարանում: \*\*\*

«Echoes» ստեղծվել է 2021 թվականի սկզբին: Ստեղծագործության գաղափարը ծագել է խորհրդային մեքենաների տարբեր մասերի համադրումից՝ մի կողմից արտահայտելու մարդու տեսլականն ու մտքերը, մյուս կողմից՝ խորհրդային, հետխորհրդային արդյունաբերական ժառանգությունն օբյեկտիվացնելու, այն նոր ձևով ներկայացնելու՝ վերաիմաստավորման և վերարտադրության միջոցով: \*\*\*



«Echoes» series, iron, cast iron, H13cm



«Stop», wood, iron, concrete, H75cm



«Dragon» Grinding wheel, iron H10cm

«One Piece of color» քանդակների շարքը ստեղծվել է 2020 թվականին՝ պատերազմի տարիներին՝ դառնալով սպասելու և դժվար ժամանակաշրջանի հաղթահարելու ակտ: Սերիայի վրա աշխատելը փորձ էր՝ հաղթահարելու աղետի զգացումը, անորոշությունը ժամանակին, միաժամանակ չկտրվելով ավելորդ տեղեկատվական հոսքից: Արդյունքում ես փնտրում էի նոր ուղիներ և մեթոդներ նյութի հետ աշխատելու համար՝ ստեղծելով քանդակներ, որոնց ստեղծագործությունը կլինեին նվազագույն՝ լուռ և կառավարելի:

## Կրթական և աշխատանքային փորձը

2023 NUVEM արվեստագետների ռեզիդենտության մասնակից 2023 թվականին՝ Պիկո կղզի, Պորտուգալիա:

2023 Չորրորդ միջազգային Գրաֆիկայի Բիենալե մրցանակների հեղինակ, Երևան 2023:

2016 Հեղինակ է արձանիկի՝ Aurora Prize for Awakening Humanity, համաշխարհային մարդասիրական մրցանակի խորհրդանիշ արձանիկ:

2016-2022 Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի դասախոս, Երևան:

2011-2017 Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա, քանդակագործության բաժին (բակալավորի և մագիստրոսի կոչում):

2004-2011 Փանոս Թերլեմեզյանի



«Waiting», bronze, 57x25x31cm

անվան գեղարվեստի պետական քոլեջ, քանդակագործության բաժին:

## Ցուցահանդեսներ և նախագծեր

2021-2022 «TOMORROW» (Վաղը) Գաֆեւճեան արվեստի կենտրոն:

2019 «Born in Syunik. Sisian» (Ծնվել է Սյունիքում. Սիսիան) Տաթևի վանական համալիր, Ավորա ֆորում, IdeA հիմնադրամի «Տաթևի վերածնունդ»

նախագիծ:

2019 «Armenia Art Fair» (Հայաստանի արվեստի տոնավաճառ), Դալան արվեստի պատկերասրահ:

2017 «It's me» (Ես եմ) Հայաստանի նկարիչների միություն (9 աշխատանք), Համագալին Հայաստան:

## Կրթական և մշակութային հասարակություն

2016 «Երկխոսություն» անհատական ցուցահանդես, Ալբերտ և Թովլ Բոյաջյան ցուցասրահ:

2015 «Ուղերձ 100 տարի անց», Հայաստանի ազգային պատկերասրահ:

2015 «Հանրապետական երիտասարդական ցուցահանդես», Հայաստանի նկարիչների միություն (1 աշխատանք):

2015 համատեղ նախագիծ Լուսինե Զաքարյանի տուն-թանգարանի հետ (ճարտարապետ Աննա Բարսեղյան):

2015 Համատեղ քանդակի նախագիծ Երվանդ Քաչարի թանգարանի հետ:

## Կրթություն

2015-2017 թթ.՝ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա, քանդակագործության բաժին: 2011-2015 թթ.՝ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա, քանդակագործության բաժին: 2004-2011 թթ.՝ Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ, քանդակագործության բաժին: 2002-2004 թթ. Սիսիանի Զաքար Խաչատրյանի անվան արվեստի դպրոց:

## Աշխատանքային փորձ

2016-2022 թթ. Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի դասախոս:

## Անհատական ցուցահանդես

2016 «Երկխոսություն» Ալբերտ և Թովլ Բոյաջյան ցուցասրահ:

## Կարծիքներ, մամուլի հոդվածներ

«Ավորա» մրցանակի արձանիկի պատրաստումը:

Վավերագրական ֆիլմ Մանվել

# Մանվել Մաթևոսյան

ՍԿԻՉԲԸ՝ ԷՋ 25

Մաթևոսյանի մասին, Bekart-ի արտադրություն:

Վավերագրական ֆիլմ Մանվել Մաթևոսյանի, Նարինե Ալեքսանյանի մասին, Arvestanots-ի արտադրություն:

Վավերագրական ֆիլմ արվեստագետների մասին, Bekart-ի արտադրություն:

## Ցուցահանդեսներ

2023 Չորրորդ միջազգային Գրաֆիկայի Բիենալե մրցանակների հեղինակ, Երևան 2023:

2023 Չորրորդ միջազգային Գրաֆիկայի Բիենալե մրցանակների հեղինակ, Երևան 2023:

2021-2022 «TOMORROW» (Վաղը) Գաֆետեան արվեստի կենտրոն:

2019 «Born in Syunik. Sisian» (Ծնվել է Սյունիքում. Սիսիան) Տաթևի վանական համալիր, Ավրորա ֆորում, Idea հիմնադրամի «Տաթևի վերածնունդ» նախագիծ:

2017 «It's me» (Ես եմ) Հայաստանի նկարիչների միություն (9 աշխատանք), Համազգային Հայաստանի կրթական և մշակութային միություն:

2016 «Սերունդները» Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ (9 աշխատանք):

2015 «Ուղերձ 100 տարի անց», Հայաստանի ազգային պատկերասրահ (1 աշխատանք):

2014 «Հանրապետական երիտասարդական ցուցահանդես», Հայաստանի նկարիչների միություն (1 աշխատանք):

2013 Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա, Ալբերտ և Թովե Բոյաջյան ցուցասրահ (3 աշխատանք):

2013 «Հանրապետական երիտասարդական ցուցահանդես», Հայաստանի նկարիչների միություն (3 աշխատանք):

2011 «Երիտասարդների ցուցահանդես», Հայ հեղափոխական դաշնակցություն (3 աշխատանք):

2011 «Գարնանային ցուցահանդես» Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ (2 աշխատանք):

2011 «Հայոց ցեղասպանություն», Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ (1 աշխատանք):

2011 «Կանանց տոն», Հայաստանի նկարիչների միություն (1 աշխատանք):

## Պարգևներ, վկայականներ

2016 «Դեպի հավերժություն» մեկ ստեղծագործությունը գտնվում է Հայաստանի ազգային պատկերասրահում:

2016 Հեղինակ է արձանիկի՝ Aurora Prize for Awakening Humanity:

2016 «Ուղերձ 100 տարի անց» ֆիլմի դափնեկիր:

2014 Շնորհակալագիր, Հայաստանի նկարիչների միություն, «Հանրապետական երիտասարդական ցուցահանդես»-ին մասնակցելու համար:

2013 Շնորհակալագիր, Հայաստանի նկարիչների միություն, «Հանրապետական երիտասարդական ցուցահանդես»-ին մասնակցելու համար:

2011 Վկայական՝ «Յերեկ» քանդակի համար:

2010 Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի վաստակի վկայական՝ «Իմ կորած հայրենիք» ցուցահանդեսին մասնակցելու համար:

## «Կղզու մի կտոր»

Պիկո կղզում (Պորտուգալիա) «Կղզու մի կտոր» քանդակների շարքում ստեղծագործողի և նյութի յուրահատուկ երկխոսության արդյունք են՝ ստուդիայի, միջավայրի և քանդակի նյութի համադրություն:

## «Արձագանքներ» շարք

«Արձագանքներ» քանդակագործական ինստալացիաների շարքը ստեղծվել է 2021 թվականի սկզբին: Ստեղծագործության գաղափարն առաջացել է խորհրդային մեքենաների տարբեր մասերի համադրումից՝ մի կողմից՝ արտահայտելու սեփական տեսլականն ու մտքերը, մյուս կողմից՝ օբյեկտիվացնելու հետխորհրդային արդյունաբերական ժառանգությունը՝ այն նորովի ներկայացնելով վերաիմաստավորման և վերարտադրության միջոցով:

## «Մի կտոր գույն» շարք

«Մի կտոր գույն» քանդակների շարքը ստեղծվել է 2020 թվականին՝ պատերազմի տարիներին՝ ինձ համար դառնալով սպասելու և դժվար ժամանակաշրջանը հաղթահարելու ակտ: Սերիայի վրա աշխատելը միակ դեղամիջոցն էր՝ հաղթահարելու ճնշող անորոշությունը և անխուսափելի աղետի զգացումը, միևնույն ժամանակ կարևոր էր չխանգարել առաջնագծում ավերիչ իրավիճակի մասին տեղեկանալու սուր մոլուցքին: Քանդակների վրա աշխատելու ընթացքում ես փնտրում էի մինիմալ, լուռ, կառավարելի լուծումներ, որոնք կհամապատասխանեին այն ամենին, ինչ ես ապրում էի այդ ժամանակ:



# Սարգիս Բաբայան

Ծնվել է 1986 թ. ապրիլի 9-ին Երևանում: Նախնիները Մեղրու տարածաշրջանի Կալեր գյուղից են:

Միջնակարգ կրթությունն ավարտելուց հետո՝ 2001-2008 թթ., սովորել և ավարտել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը: 2008-12 թթ. սովորել է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում (քանդակագործություն, բակավավորիատ): 2012-2014 թթ. սովորել է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում (քանդակագործության մագիստրատուրա): 2015 թ. սովորել է Մոսկվայում՝ Նիկողայոս Նիկողոսյանի արվեստանոցում:

2015-ից Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի դասախոս է:



«Շրեք սերունդ» ընթացք կամ ինքնաքանդակ



Կարեն Դեմիրճյանի արձանը մարզահամերգային համալիրի տարածքում

## Ցուցահանդեսներ

2009 թ. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպված «Հայ ժողովրդի նվիրյալները» խորագրով: Երևանի ՃՊՇՀ-ի ցուցասրահ:

2009 թ. «Մի կտոր կրակ» խորագրով: նկարիչների միություն:

2010 թ. Սուրբ Սարգիսի տոնին նվիրված ցուցահանդես «Սեր Աստծո հանդեպ»:

Նկարիչների միություն:

2010 թ. «Ազատություն գոչեցի» խորագրով:

2010 թ. Կանանց միջազգային օրվան նվիրված ցուցահանդես, ՄԱԿ-ի գրասենյակ:

2010 թ. Միջազգային խաղաղության օրվան նվիրված ցուցահանդես, ՄԱԿ-ի գրասենյակ:

2010 թ. Մարդու իրավունքների պաշտպանության օրվան նվիրված ցուցահանդես, ՄԱԿ-ի գրասենյակ:

2010 թ. Աղքատության վերացման միջազգային օր, ցուցադրումը ՄԱԿ-ի գրասենյակ:

2011 թ. Սիրո տոնին նվիրված ցուցահանդես, Հայաստանի նկարիչների միություն:

2011 թ. «Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակ», ՀՆՄ:

2011 թ. ԵԳՊԱ-ի 65-ամյակին նվիրված ցուցահանդես, ՀՆՄ:

2011 թ. «Բացահայտենք նոր տաղանդներ» Երևանի քաղաքապետարանի ցուցասրահ:

2011 թ. «Աստիճան» Ալբերտ և Թովե Բոյաջյան ցուցասրահ:

2011 թ. «Աստիճան դեպի երկինք» Ռուսական արվեստի թանգարան:

2012 թ. Մովսես Գորգիսյանին նվիրված հանրապետական մրցութային ցուցահանդես, ՀՆՄ:

2012 թ. Դիպլոմի պաշտպանություն, ՀՆՄ:

2012 թ. Երիտասարդ ստեղծագործողների հանրապետական ցուցահանդես, ՀՆՄ:

2013 թ. «Երկխոսություն» Ալբերտ և Թովե Բոյաջյան ցուցասրահ:

2013 թ. «Քարե հեքիաթը» սիմպոզիում Բելառուսիա:

2014 թ. «Հմանացիա», ՀՆՄ:

2014 թ. «Դիմաքանդակ», Ալբերտ և Թովե Բոյաջյան ցուցասրահ:

2014 թ. «Երկխոսություն» նվիրված հայ-ռուսական մշակութային ժառանգությանը, Российский центр науки и культуры:

2014 թ. «Ֆրանսիան հայի աչքերով», Ալբերտ և Թովե Բոյաջյան ցուցասրահ:

2014 թ. «Բարեկամություն», Թբիլիսի գեղարվեստի ակադեմիայի ցուցասրահ:

2014 թ. The Artists collective workshop of Gothenburg, Շվեդիա:

2014 թ. Armenian Art Fair Մերիդիան ցուցահանդեսային կենտրոն:

2015 թ. «Պատասխան հարյուր տարի անց», Չարենցի անվան գրականության թանգարան:

2015 թ. «Հմանացիա» Château de la Buzine (Ֆրանսիա, Մարսել):

2015 թ. «Անցյալը ներկայում», ՀՀ Ազգային պատկերասրահ:

2015 թ. «Սրբալույս Մյուռոն», Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

2015 թ. «ԵԳՊԱ-ի 70-ամյակին նվիրված», ՀՆՄ:

2016 թ. «Դիմաքանդակ», ՀՆՄ:

2017 թ. «Կանանց միամսյակին նվիրված», Էդվարդ Իսաբեկյանի ցուցասրահ:

2017 թ. Հանրապետական ցուցահանդես, ՀՆՄ:

2017 թ. Three colors AGBU Armenia

2017 թ. «День Саргиса Бабагана» RAU Art akvarium

2017 թ. Հայ-ճապոնական





«Արևածագ», բրոնզ

Ժամանակակից արվեստ, ԵԳՊԱ-ի ցուցասրահ:

2017 թ. ՀՆՄ-ի 85-ամյակին նվիրված, ՀՆՄ:

2018 թ. «Արարող Ձեռքեր» Գևորգյան հոգևոր ճեմարան:

2018 թ. «Մեզանից (ոչ) մեկը, Ալբերտ և Թովե Բոյաջյան ցուցասրահ:

2018 թ. «Գիծ և հետք» անհատական ցուցահանդես Royal Classic House:

2018 թ. «Arte Salerno» Սալերնո, Իտալիա:

2019 թ. «Arte Madrid» Մադրիդ, Իսպանիա:

2019 թ. Հանրապետական Գարնանային ցուցահանդես, ՀՆՄ:

2020 թ. «Գրաֆիկական արվեստ» Styile Graphics Museum, Գյումրի:

2021 թ. Հանրապետական Գարնանային ցուցահանդես ՀՆՄ:

2021 թ. ՀԳՊԱ-ի 75-ամյակին նվիրված ցուցահանդես, ՀՆՄ:

2022 թ. «Գարնանային սալոն», ՀՆՄ:

2022 թ. «Էստամպ» գրաֆիկայի ցուցահանդես ՀՆՄ:

2022 թ. «Աշնանային սալոն», ՀՆՄ:

2023 թ. «Գարնանային սալոն», ՀՆՄ:

2023 թ. «Փոխանցում» LKFF ցուցասրահ Բելգիա:

2023 թ. Քանդակի հանրապետական ցուցահանդես, ՀՆՄ:

2023 թ. Անհատական ցուցահանդես Հենրիկ Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոն:

2024 թ. «Ձուգահեռ աշխարհներ» անհատական ցուցահանդես Ալբերտ և Թովե Բոյաջյան ցուցասրահ:

2024 թ. «Գարնանային սալոն», ՀՆՄ:

**Մրցանակներ**  
2009 թ. «Մի կտոր կրակ» խորագրով: Երրորդ մրց., ՀՆՄ:

2011 թ. Սիրո տոնին նվիրված ցուցահանդես: Երկրորդ մրց., ՀՆՄ:

2011 թ. Հանրապետության նախագահի մրցանակ, Առաջին մրցանակ, ՀՆՄ:

2011 թ. «Բացահայտենք նոր տաղանդներ» խորագրով: Լավագույն քանդակ, Երևանի քաղաքապետարանի ցուցասրահ:

2012 թ. Մովսես Գորգիսյանին նվիրված հանրապետական մրցույթ-ցուցահանդես: Լավագույն քանդակ, ՀՆՄ:

2013 թ. «Քարե հեքիաթը» խորագրով: Լավագույն քանդակ, Բելառուսիա, քաղաք Մոգիլյով:

2014 թ. Արա Սարգսյանի անվան լավագույն դիպլոմային աշխատանք:

2016 թվականից Հայաստանի նկարիչների միության անդամ:

2018 թ. For the aesthetic and expressive High Valency Իտալիա, քաղաք Սալերնո:

2019 թ. Անդրադարձ հույն դասականներին, Իսպանիա, Մադրիդ:

2022 թ. Հայ-ֆրանսիական բարեկամությանը նվիրված քանդակ: Առաջին մրցանակ:



## Գագիկ Ալեքսանյան

Արտերկրում ապրող և ստեղծագործող քանդակագործներից է մեր հայրենակից Գագիկ Ալեքսանյանը, ով միշտ հավատարիմ է մնացել իր ակունքներին:

Ծնվել է 1958 թ. Կապանում, սովորել է Կապանի թիվ 27 գիշերօթիկ դպրոցում: 8-րդ դասարանն ավարտելուց հետո մասնագիտական կրթություն է ստացել Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանում (քանդակի բաժին): Չորս տարվա ուսումնառությունից հետո ընդունվել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի քանդակագործության բաժինը: Բուհն ավարտելուց հետո՝ 1984-ին վերադարձել է հայրենի քաղաք:

Հանգամանքների բերումով 1994-ին տեղափոխվել է Ռուսաստանի Դաշնության



Յարուսլավլ քաղաք, շարունակել գործունեությունը նախընտրած մասնագիտությամբ: Այնտեղ ունի արվեստանոց, ձուլման փոքրիկ արտադրամաս՝ բրոնզե փոքրիկ քանդակներ պատրաստելու համար: Մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների: Նրա աշխատանքները գտնվում են Ռուսաստանի Դաշնության, եվրոպական երկրների մասնավոր հավաքածուներում:

Տևական ժամանակ ապրելով ու ստեղծագործելով դրսում՝ բնավ էլ չի մոռացել հայրենի քաղաքը: Քանդակներից մեկը տեղադրված է Կապանի Սմբատ Մելիք-Ստեփանյանի բազմաբնակարան շենքերից մեկի առջևի պուրակում:

Կերտել է նաև Գարեգին Նժդեհի դիմաքանդակը, որը մի խումբ նվիրյալների շնորհիվ վերջին հանգրվանն է գտել Խուստուի լեռան լանջին:

Տասնամյակներով սպասված իրադարձություն էր 1918-1920 թթ. Զանգեզուրյան հերոսամարտի նվիրյալներից Պողոս Տեր-Դավթյանի կիսանդրու տեղադրումը Կապանի կենտրոնում, որի բացումը տեղի ունեցավ 2022 թ. օգոստոսին՝ Կապան քաղաքի օրը: Գագիկը պատմում է, որ ձեռքի

տակ ուներ Տեր-Դավթյանի երեք լուսանկար՝ բարեբախտաբար լավ պահպանված: Դրանց շնորհիվ, իր հավաստմամբ, կարողացավ հերոսականություն հաղորդել քանդակին:

Գագիկը մեկ այլ հետաքրքրական նախաձեռնության հեղինակ է: Թումանյան փողոցի վրա մի հենապատ է ձգվում, որից դուրս ցցված քարի վրա նրա մուրճի և հատիչի շնորհիվ շունչ առավ Հովհաննես Թումանյանի դիմաքանդակը:

Գագիկ Ալեքսանյանն իր մուրճն ու հատիչը բանեցրել է, որ այլ գործեր մշտական գրանցում ստանան Կապանա տանը: 2023 թ. Թումանյան փողոցում բացվեց «Սյունիք» հարթաքանդակը:

Մարզի հինգ քաղաքային և երկու գյուղական համայնքներն ամբողջացնող հարթաքանդակի հեղինակը նկարիչ-դիզայներ Անդրեաս Օհանջանյանն է, քանդակագործը՝ ինքը:

Հարթաքանդակին պատկերված Խուստուի լեռը խորհրդանշում է Կապան համայնքը, բարձրաբերձ Կապուտջուղ՝ Քաջարանը, ժայռերի քարանձավային պատկերը՝ Գորիսը, հինավուրց աստղագիտության կենտրոնը՝ Ջորաց քարերը՝ Սիսիանը, հայկական նուռը և նռնենին՝ մրգաշատ Մեղրին, իսկ ցորենի հասկերը, սարահարթերը խորհրդանշում են գյուղական համայնքները՝ Տեղը և Տաթևը:

Ի՞նչ ծրագրեր ու պլաններ ունի: Ասում է՝ սիրում է մեր ազգային հերոսների: Հեռանկարում Արամ Մանուկյանի և Լուսակցական, պետական գործիչ, Ղափանի կուսըղջկոմի նախկին առաջին քարտուղար, Կապանի պատմության մեջ մնայուն հետք թողած անձնավորության՝ Ռաֆայել Մինասյանի կիսանդրիների կերտումն է...

Հաջողություն և ստեղծագործական ներշնչանք մաղթենք քարին շունչ տվող արվեստագետին՝ Գագիկ Ալեքսանյանին:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



# Գրիգոր Ավետիսյան (Վարպետ)



Ծնվել է 1924 թ. սեպտեմբերի 9-ին Անգեղակոթ գյուղում:

Ութամյա կրթությունը ստացել է գյուղի դպրոցում: Քարի հետ աշխատելու բնատուր ձիրք է ունեցել:

Որպես քարտաշ-որմնադիր մասնակցել է Երևանի «Սասունցի Դավիթ» կայարանի, ինչպես և մայրաքաղաքի մի շարք այլ կառույցների շինարարությանը:

Երկար տարիներ մայրաքաղաքում աշխատելուց հետո վերադարձել է ծննդավայր և շարունակել քարոզրծ վարպետի աշխատանքը:

Ջարգացնելով իր հմտությունները՝ 1975-ին գյուղում հիմնել է քարի մշակման արտադրամաս:

1988-ին հիմնել է «Գրանիտ» կոոպերատիվը և շարունակել զբաղվել քարի մշակմամբ: Այդ տարիներին ակտիվ մասնակցություն է ունեցել Սիսիան քաղաքի կառուցապատման և բարեկարգման աշխատանքներին:

Ոգեշնչված լինելով Ջորավար Անդրանիկի գործունեությամբ, կերտել է նրա արձանը և տեղադրել Անգեղակոթ գյուղում, որի բացումը տեղի է ունեցել 1991-ին:

Արցախյան առաջին պատերազմում նահատակվել են 13 համագյուղացիներ. 1993-96 թթ. գյուղի կենտրոնում, որտեղ հողին են հանձնվել նրանք, կառուցել է պանթեոն:

Տարիների ընթացքում, հաշվի առնելով նրա գործունեությունը, սիսիանցիները Գրիգոր Ավետիսյանին շնորհել են Վարպետ պատվանունը:

Մահացել է 2007 թվականին:

# Վահե Եղյան



Ծնվել է 1998 թ. Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Սիսիանի № 3 միջնակարգ դպրոցում՝ 2004-2012 թթ.:

2006-2012 թթ. հաճախել է Զաքար Խաչատրյանի անվան արվեստի դպրոցը և ավարտել դպրոցի լրիվ դասընթացը:

Այնուհետև ընդունվել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջ (2012-2019 թթ.), ուսումնառության տարիներին մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների և մրցույթների:

2016 թվականին անցել է պարտադիր զինվորական ծառայության և մասնակցել համաբանակային բոլոր մրցույթներին՝ զբաղեցնելով պատվավոր տեղեր:

Պարտադիր զինվորական ծառայությունն ավարտելով՝ 2018 թվականից շարունակել է ուսումը և 2019 թվականին ավարտել Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստական քոլեջի քանդակի բաժինը:

Ներկայումս սովորում է Երևանի գեղարվեստի ակադեմիայի քանդակագործության բաժնի մագիստրատուրայում:

2023 թվականից ՀՀ նկարիչների միության անդամ է:

## Մասնակցել է հետևյալ ցուցահանդեսներին

2013 թ. - Աշնանային ուսանողական ցուցահանդես:

«Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության», երկաթ, փայտ



«Քրիստոս», երկաթ, գրանիտ 30x67x30



«Նկարիչը և նրա մայրը», երկաթ, 20x20x35



2013 թ. - Թերլեմեզյան ցուցասրահ, «Հին ու նոր Երևան»:

2015 թ. - ՀՀ նկարիչների միության սրահ, «Հին ու նոր Երևան»:

2015 թ. - Թերլեմեզյանի անվան պետական քոլեջ, վարպետաց դաս Վիգեն Ավետիսի հետ:

2015 թ. - Թերլեմեզյան ցուցասրահ, «Հայոց աշխարհ» ուսանողական ցուցահանդես:

2015 թ. - Թերլեմեզյան ցուցասրահ, «Թրաֆիքինգ և միգրացիա» ցուցահանդես:

2016 թ. - Թերլեմեզյան ցուցասրահ, «Հորինվածք» ուսանողական ցուցահանդես:

2016 թ. - Արմավրի զինվորական կայազոր, նկարիչ-քանդակագործների փնջային 2-րդ փուլի հաղթող:

2017 թ. - ՀՀ նկարիչների միության սրահ, «Ես եմ» խորագրով ցուցահանդես՝ Համագային հայ կրթական և մշակութային միության կողմից կազմակերպված:

2018 թ. - Լուսի Թութունջյան ցուցասրահ, Բեյրութ «Ես եմ» խորագրով ցուցահանդես՝ Համագային հայ կրթական և մշակութային միության կողմից կազմակերպված:

2018 թ. - Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոն, Համագային հայ կրթական և մշակութային միության 90-ամյակին նվիրված ցուցահանդես:

2018 թ. - Վիրտուալ «Վերածնունդ»

մշակութային և ինտելեկտուալ հիմնադրամի կողմից հայտարարված քաղաքային քանդակի մրցույթ՝ նվիրված Սուրբ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմին:

2019 թ. - Գևորգ Գրիգորյանի /Ջոտտո/ արվեստանոց-թանգարան, ուսանողական ցուցահանդես:

2019 թ. - ՀՀ նկարիչների միության սրահ, ՀՀ նախագահի մրցանակ:

2019 թ. - Տաթևի վանական համալիր, ցուցահանդես՝ կազմակերպված Ավորա ֆորումի շրջանակում:

2019 թ. - ՀՀ նկարիչների միության սրահ, «Ես եմ» Հայաստանի երիտասարդ արտիստների ցուցահանդես:

2020 թ. - ՀՀ նկարիչների միության սրահ, «Հայացք մեկ այլ կողմից» ուսանողական ցուցահանդես, 2-րդ հորիզոնական:

2020 թ. - Վիրտուալ մշակույթի զարգացման գործին նպաստելու համար՝ «Կոմիտասի 150 ամյակ»:

2020 թ. - Վիրտուալ XII International Symposium TPI CH by sculpture:

2021 թ. - Ալբերտ և Թովե Բոլաջյան ցուցասրահ, 2-րդ մրցանակ՝ «Լավագույն քանդակային մտահղացման համար»:

2022 թ. - ՀՀ նկարիչների միության սրահ, դիպլոմային աշխատանք:

2023 թ. - ՀՀ նկարիչների միության սրահ, դիպլոմային աշխատանք:

2023 թ. - Իրան, խմբակային ցուցահանդես:

2023 թ. - Երևան, Հայ-իրանական ցուցահանդես:

2023 թ. - ՀՀ նկարիչների միության սրահ, քանդակի խմբակային ցուցահանդես:

2023 թ. - ՀՀ նկարիչների միության սրահ, «Արևը՝ ջահ սրբազան...»:

2023 թ. - Արա Սարգսյանի մրցանակ՝ լավագույն դիպլոմային աշխատանքի համար:

2024 թ. - ՀՀ նկարիչների միության սրահ, գարնանային ցուցահանդես:

2024 թ. - «Հանուն հայի հարատևման» ցուցահանդես: Անհատական ցուցահանդես՝ «Երկխոսություն», ապրիլի 5, 2023 թ.:



«Պայքար», երկաթ, 40x15x17

# Եղիշ Կարապետյան



Մեղրիում հետաքրքրվեցինք, թե ով է փոքրիշատե հետք թողել քանդակագործության ոլորտում: Բոլորը վկայակոչեցին Եղիշ Կարապետյանին, ով նաև պատասխանատու պաշտոն է զբաղեցրել շրջխորհրդի գործկոմում:

Ծնվել է 1959 թ. Մեղրիում, ավարտել նախ՝ տեղի Ստ. Շահումյանի անվան դպրոցը, այնուհետև՝ Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի գծագրանկարչական բաժինը 1981 թվականին: Մի քանի տարի դասավանդել է Լիճքի դպրոցում: 1985-ից սկսել է աշխատել Երևանի գեղագիտական կենտրոնի Մեղրու մասնաճյուղում մինչև 1989 թվականը: Որոշ ժամանակ զբաղվել է գյուղատնտեսությամբ, Մեղրիում հայտնի գյուղատնտես Յուրի Առաքելյանի հետ հիմնել է տնկարան:

1991-ին նշանակվել է Մեղրու մշակույթի բաժնի վարիչ. «1991-ի գարնան մի օր «պատվիրակություն» եկավ մեր հիմնածայգին, թե պիտի շրջանային կուլտուրայի բաժնի վարիչ աշխատես: Հետո մշակույթի նախարարությունից կանչել էին, գնացի Երևան: Զինվորական համազգեստով էի: Մշակույթի նախարարն այն ժամանակ Պերճ Զեյթունցյանն էր, հետաքրքրվեց՝ ով եմ, ինչ մասնագիտություն ունեմ: Պատասխանեցի՝ նկարիչ եմ: Ասաց՝ գնա, հեռու տեղից ես եկել, գնացեք, սահմանը պահեք», – անցած օրերն է վերհիշում մեր գրուցակիցը:

1996 թ., տեղափոխվեց Մոսկվա: Այդ-

տեղ և որոշ ժամանակ զբաղվել է գեղանկարչությամբ, բնակարանների ձևավորմամբ: Այնպես որ գեղեցիկն արարելու ձգտումը երբեք չի լքել նրան:

Մեղրիում շատ չես հանդիպի հուշարձանների, ճարտարապետական փոքր ձևերի՝ քանդակների: Այնուամենայնիվ, քաղաքի նրա ստեղծած մնայուն գործերից են հարթաքանդակները: Մեղրի-Կապան մայրուղուց մինչև քաղաքի կենտրոն՝ թեքության վրա, հետիոտնային անցում կա, յուրաքանչյուր աստիճանավանդակին թեմատիկ քանդակներ է արել՝ Մեղրու պատմությանն ու կենցաղին առնչվող: Որպես քանդակի «հումք» ընտրել են Սիսիանի բազալտը: Ընդամենը չորս ամսում է արել, բայց հասցրել է իր մտահղացումները քարին հանձնել և Մեղրու կոլորիտ ստեղծել:

Եղիշը Մեղրիի գեղագիտական կենտրոնում աշխատելու տարիներից մի դեպք է հիշում. մտադիր էին քանդակի սիմպոզիում կազմակերպել, որ Մեղրի ժամանեն քանդակագործներ, տեղում քանդակներ անեն, նաև վարպետաց դասեր անցկացնեն տեղացի երիտասարդների հետ: Արթիկից տուֆի հսկա քարաբեկորներ էին տեղափոխել, որ պիտի քանդակների վերածվեին: Բայց գեղեցիկ մտահղացումն իրականություն չդարձավ...

Մեղրիում «քարե» ստեղծագործություն-



ներից է սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության ռահվիրա Փարամազի հուշակոթողը, որ քաղաքում տեղադրվել է 2001 թ. հունիսին: Փարամազի հուշակոթողը, ըստ Ե. Կարապետյանի, չի արտացոլում մեղրեցու կերպարը: Իսկ ընդհանրապես խորհրդային տարիներին «շաբլոն» քանդակներ էին տեղադրվում՝ պայմանավորված այդ ժամանակների գաղափարախոսությամբ, մանավանդ առաջնորդների՝ Լենինի, Ստալինի և այլն: Անկախության տարիներին դրանք բոլորն անցան պատմության գիրկը...

Եղիշ Կարապետյանը նշում է, որ մտերիմ էր կապանցի արվեստագետների հետ, ջերմությամբ է հիշում քանդակագործ Մա-

րատ Նուրիջանյանին, գեղանկարիչ Ռոբերտ Կամոյանին, որոնց հետ շատ ժամանակ է անցկացրել, զրույցներ ունեցել արվեստի հարցերի շուրջ, մասնավորապես, քանդակագործության վերաբերյալ: Ասում է, Մարատը մեր «նաստալնիկն» էր, իսկ Կամոյանը այն ժամանակներում (նկատի ունի՝ սովետական) իր գեղանկարչական աշխատանքներում անում էր բաներ, որ ուրիշները չէին համարձակվում անել:

Արդեն առաջացած տարիքին՝ «Եթե արձան քանդակելու պատվեր ունենա, ձեռքը կվերցնի» մուրճն ու հատիչը», հարցիս դրական պատասխան է տալիս, բայց նաև հավելում է՝ գերեզմանոցի քանդակ չեմ անի...

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

# Գառնիկ Հայրապետյան

Ծնվել է 1925 թ. նոյեմբերի 15-ին Գորիսի տարածաշրջանի Կյորու գյուղում:

Տեղի դպրոցն ավարտելուց հետո սովորել է Գորիսի մանկավարժական ուսումնարանում:

1943-ին զորակոչվել է բանակ և մասնակցել Մեծ հայրենականին:

1947-ին զորացրվելուց հետո սովորել և ձեռք է բերել քարտաշ-քանդակագործի մասնագիտություն ու մինչև կյանքի վերջը զբաղվել քանդակագործությամբ:

Երևանում մասնակցել է Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի ճակատային մասի քանդակների կերտմանը, այնուհետև Երևանի մետրոյի «Սասունցի Դավիթ» կայարանի «Մեծ Մհեր» կոմպոզիցիայի ստեղծմանը:

Պատրաստել է Մեծ հայրենականում զոհված համերկրացիների հիշատակը հավերժացնող հուշարձաններ Կյորու (Ձորաշեն), Մաղանջուղ (Այգեձոր) գյուղերում, ինչպես և համագյուղացի բանաստեղծ Գրիշա Մանուչարյանի հուշարձանը:

Հեղինակել է բազմաթիվ խաչքարեր ու կիսանդրիներ հանրապետությունում և արտերկրում:

Նրա ստեղծագործությունների թվում



են Երևանի Նոր-Նորքի զանգվածում տեղադրված խաչքարը՝ նվիրված Արցախյան առաջին պատերազմում նահատակված հայորդիներին, ինչպես և Կակաշների կոմպոզիցիան Ալմաթիում, հուշակոթող ՌԴ Ժեկնովոզսկ քաղաքում:

Մահացել է 2014 թ. մարտի 16-ին:



● Բանաստեղծ Գրիշա Մանուչարյանի հուշարձանը



Մեծ հայրենականում զոհվածների նվիրված հուշարձան Մաղանջուղ (Անգեղակոթ) գյուղում



## Նաիրի Բաղդադյուլյան

Ծնվել է 1977 թ. Գորիս քաղաքում:  
1991 թ. ընդունվել է Երևանի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը:  
1994 թ. ընդունվել է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա, որն ավարտել է 2000 թ.: Մասնակցել է բազմաթիվ հանրապետական, հավաքական և թեմատիկ ցուցահանդեսների Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում և Իտալիայում: 2003 թվականից ցուցադրվում է ԱՄՆ-ում J. Kamin պատկերասրահում: ●



«Երգ», 2003թ., բրոնզ / քանդակ



«Գաղտնիք», 2002թ., բրոնզ/քանդակ



«Հակ», 2003թ., բրոնզ/քանդակ

## Նարեկ Բաղդադյուլյան

Ես՝ Նարեկ Հրանտի Բաղդադյուլյանս, ծնվել եմ 1980 թվականի հոկտեմբերի 28-ին՝ Հայաստանի Հանրապետության Գորիս քաղաքում՝ խեցեգործ Հրանտ Բաղդադյուլյանի ընտանիքում:  
Գորիսի նկարչական դպրոցում ստացել եմ իմ առաջին գեղարվեստական կրթությունը:  
Գորիսի Ակսել Բակունցի անվան միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1997-2003 թվականներին, սովորել եմ Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիայում:  
Ակադեմիայում ուսանել եմ Նելսոն Շիրվանյանի, այնուհետև Գարեգին Դավթյանի և Թերեզա Միրզոյանի համատեղ ղեկավարած արվեստանոցներում:  
2001 թ. մասնակցել եմ Հայաստանում և Ֆլորենցիայում՝ Քրիստոնեության ընդունման 1700-ամյակին նվիրված ցուցահանդեսին՝ ներկայացնելով «Աղամ և Եվա» աշխատանքը:  
2001 թվականից սկսած մասնակցել եմ նկարչների միության կողմից կազմակերպված մի շարք հանրապետական ցուցահանդեսների:




2003 թ. աշխատանքներս ցուցադրել և վաճառել եմ Կալիֆորնիայի Լագունա Բիչ քաղաքում գտնվող մի քանի ցուցասրահներում:  
2010 թվականից բնակվում եմ ԱՄՆ Կալիֆորնիայի Օրենջ Բաունթի շրջանում: Այստեղ հիմնադրել եմ շենքերի ավտոմատացման, օդորակիչների

տեղադրման և սպասարկման ոլորտում մասնագիտացած Delta T ընկերությունը:  
Քանդակագործությամբ զբաղվում եմ՝ շարունակելով ստեղծել գեղարվեստական արժեքներ:  
2020 թվականին՝ 44-օրյա պատերազմի օրերին ձևավորված գորիսեցի կամավորների խմբի հետ, Եվա Դավթյանի առաջնորդությամբ Գորիսում համահիմնադրել ենք «Հրանտ Բաղդադյուլյան» արվեստանոցը: Սա վաղուց ծրագրված նպատակ էր, որտեղ մշտական ցուցադրության են դրված հորս՝ Հրանտ Բաղդադյուլյանի աշխատանքները: Արվեստանոցը նաև կրթական ու մշակութային ծրագրերի իրականացման հարթակ է:  
Նպատակ ունեմ առաջիկա տարիներին Գորիսում իրականացնել ավելի մեծածավալ մշակութային և արտադրական ծրագրեր՝ նպաստելով քաղաքի զարգացմանը: Մասնավորապես՝ տարվա մեկ քառորդը ցանկանում եմ անցկացնել Գորիսում՝ քարոզելով պատանիներին ինքնաճանաչ, տեխնոլոգիապես զարգացած և կրթված հայ լինելու կարևորությունը:  
Այս գործունեությամբ ձգտում եմ ոչ միայն զարգացնել Գորիսը, այլև երիտասարդների մեջ սերմանել ազգային գիտակցություն ու ստեղծարար մտածողություն: ●



# Էդիկ Կոստանդյան. «Իմ պատկերացրած պատկերը փայտի մեջ է, ավելորդ մասերն են հեռացնում»



Էդիկ Կոստանդյան, ծնվել է 1956 թ., ավարտել է Կապանի Մաքսիմ Գորկու անվան թիվ 1 միջնակարգ դպրոցը: Ծառայել է խորհրդային բանակում, վերադառնալուց հետո աշխատել է առևտրի բնագավառում: Մինչև 1982 թ. Հայաստանում է բնակվել, այնուհետև գնացել է Ռուսաստան, երկու տարի մնալուց հետո վերադարձել: Ղարաբաղյան շարժում... Աշխատել է Կապանի մանկական զբոսայգու տնօրեն: 1990 թվականից զբաղվում է քանդակագործությամբ:



**- Հարգելի Էդիկ, եղբայրդ՝ Ռուբենը, գեղանկարիչ է, հավանաբար քանդակագործությունը գեներով է տեղ գտել թո նախասիրությունների մեջ...**  
- Փոքրիկ տարիքում փայտից իրեր էի պատրաստում, մանկությունից սիրել էի, հոգեհարազատ է քանդակագործությունը: Հայրս դաժան կյանք է ունեցել, 1937 թվականին Տաշիկստան էին արքայրել: Եթե նրա մեջ այդ նախասիրությունը լիներ, ապա դրսևորելու հնարավորություն չէր ունենա: Գյուղում մի անգամ փայտից պատրաստած փոքրիկ մեքենա նվիրեցին ինձ, իմ մեջ ցանկություն առաջացավ այդպիսի իրեր պատրաստել:  
**- Որքան գիտենք, որպես քանդակի նյութ փայտն եք նախընտրում:**  
- Շղարշիկ գյուղում ծառ էին կտրել, երբ այդ փայտը տեսա, ինձ փիղ հիշեցրեց, և այդ փայտից փիղ պատրաստեցի:  
Ունեմ մեկ քանդակ քարի վրա...  
Ընկուզենու փայտից քանդակը շատ գեղեցիկ է ստացվում ու չի ճաքում, մնայուն է:

Նաև թթենու փայտն է գեղեցիկ:  
**- Ձեր քանդակների թեմատիկան, հատկապես ի՞նչ եք փորձում ասել:**  
- Ամբողջ Հայաստանը խաչքարեր է քանդակում, ես ասում եմ՝ փոխեք թեման, խաչքարը մի քիչ տխուր և չափազանց պատասխանատու թեմա է: Անիմալիստիկայի անցեք...  
Միայն փղի 200 քանդակ եմ պատրաստել, մյուս աշխատանքներս չեմ հաշվել: Ունեմ նաև առյուծի, հովազի, վագրի, արջի, ցուլի քանդակներ:  
Փիղը հզորության, խաղաղության խորհրդանիշն է, ուժեղ և բարի:  
**- Տեսնում ենք՝ փոքր ծավալի աշխատանքներ եք նախընտրում:**  
- Ըստ փայտի չափի, ամենախոշորը՝ 1 մ բարձրությամբ, ամենափոքրը՝ 20 սմ: Ծատերն են տարբեր չափի փայտեր բերում, ես ասում եմ՝ ինձ համար այնպիսի փայտ չկա, որ ասեմ՝ սա ինձ պետք է:  
**- Արվեստաբաններից որևէ մեկն անդրադարձե՞լ է Ձեր ստեղծագործություններին:**  
- Երբեք թույլ չեմ տվել, որ իրենք մտնեն իմ ստեղծագործական աշխարհ, դրա անհրաժեշտությունը չեմ տեսել: Միգուցե ճիշտ չեմ վարվել, բայց այդպես է եղել:  
**- Այդքան քանդակներ եք ստեղծել, արդյո՞ք դրանք վաճառել եք, թե՞...**  
- Նվիրել եմ կամ վաճառել: Հիմնական աշխատանք չունեմ, ստեղծագործություններս վաճառելով եմ ապրում, դա էլ իմ աշխատանքն է:



խատանքն է: Ի դեպ Վազգեն Սարգսյանի տուն-թանգարանում ունեմ քանդակած փիղ:  
**- Պատվերներ լինո՞ւմ են:**  
- Այո, լինում են:  
**- Ի՞նչ խնդիր եք դնում Ձեր առջև, երբ սկսում եք աշխատանքը հերթական քանդակի վրա:**  
- Փայտը, որ դնում եմ իմ առջև, նայում եմ՝ ինչ կարելի է ստեղծել այդ փայտից:  
**- Քանդակի մեջ ի՞նչն եք կարևորում:**  
- Իմ մտածելակերպն ու իմ աշխատանքի ձևն ունեմ, իմ պատկերացրածն եմ ներկայացնում:  
Հայրիկիս անունը Փարավոն է, եգիպտական քանդակներն ինձ միշտ հետաքրքրել են...  
Իմ պատկերացրած պատկերը փայտի մեջ է, ավելորդ մասերն են հեռացնում:  
**ՋՐՈՒՅՏԸ՝ ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ**

# Գեորգի Գևորգյան




Գեորգի Գևորգյանը Կապանում հայտնի էր իր փայտե քանդակներով: Միջնակարգ կրթությունը ստացել է հայրենի քաղաքում, այնուհետև աշխատանքային գործունեություն ծավալել «Ռելեի», կոնդեսատորների գործարաններում, Կապանի լեռնահարստացման կոմբինատում, էլեկտրացանցում, որտեղից անցել էր կենսաթոշակի: Նախասիրությունը փայտափորագրությունն էր, մասնակցել է ցուցահանդեսների, մասնավորապես, Վանաձորում: Նրա աշխատանքները ներկայացվել են Կապան քաղաքի տոնին նվիրված «Ստեղծագործում են կապանցիները» ցուցադրանքում:  
Փայտին շունչ ու կենդանություն հաղորդելու շնորհը Գեորգի Գևորգյանին «այցելեց» 40 տարեկանը լրանալուց հետո: Ընկերը զբաղվում էր փայտափորագրությամբ, ինքն էլ որոշեց փորձել ուժերն այդ արվեստում: Առաջին աշխատանքը կարիճ էր, որ նվիրեց եղբորը: Այնուհետև աշխատանքից

ընկուզենու բնափայտը դյուրին է ենթարկվում քանդակողի կամքին:  
Ժողովրդական իմաստությունն ասում է՝ նայիր արմատին: Մանկավարժների ընտանիքում է դաստիարակություն ստացել: Հայրը՝ Սուրեն Գևորգյան՝ հանրապետության վաստակավոր մանկավարժ, 17 տարի Կապանի Մաքսիմ Գորկու անվան թիվ 1 դպրոցի տնօրենն էր: Մեծ հայրենականի ակտիվ մասնակից, արժանացել է Կարմիր աստղի, Ալեքսանդր Նևսկու շքանշանների, մեդալների և պատվոգրերի:



Մայրը՝ Ալեքսանդրա Գևորգյանը, օրիորդական ազգանունը՝ Բոյարսկայա, երկարամյա մանկավարժ, գեղանկարչուհի, նաև նկարչություն է դասավանդել դպրոցում, մանուկների հոգում սերմանել գեղե-



հետ ազատ ժամանակը, շաբաթ-կիրակի օրերը նվիրեց փայտե քանդակներ կերտելուն:  
Ծնվեցին մեկը մյուսից ինքնատիպ քանդակներ: Իհարկե, նախապատվությունը տալիս էր անիմալիստական ժանրին, կենդանիների ուշագրավ քանդակներ է ստեղծել, քիչ չեն նաև կանանց կերպարանքով քանդակները: Այժմ դժվար է հաշվել, թե քանի քանդակ է ստեղծել, նաև սիրում էր սեփական «արտադրանքը» նվիրել մտերիմին և հարազատին (և ոչ միայն): Երկար տարիներ ըմբռնել էր փայտի լեզուն, զբաղվելով սիրած գործով՝ գիտեր, որ փայտից ինչ կարելի էր ստանալ: Որպես քանդակի ստեղծման հումք՝ հիմնականում օգտագործում էր ընկուզենու բնափայտը. այն հետագայում չի ճաքում և յուրօրինակ փայլ ունի: Բացի այդ

ցիկը տեսնելու և ընկալելու արվեստը:  
Երկու կարծիք լինել չի կարող, որ փայտին շունչ տալու շնորհը Գեորգիին մորից է անցել: Հասակ առավ՝ մոր գեղեցիկ կտավների գույներն իր մտապատկերում ունենալով: Եվ ստեղծեց գեղեցիկ ու հաճելի իր աշխարհը՝ փայտե քանդակների տեսքով: Մի անգամ խոստովանել է, որ այդ ամենին նպաստել է իր ստեղծագործական երևակայությունը:  
Եվ հիմա, երբ հրաժեշտ է տվել երկրային կյանքին, Գևորգյանների բնակարանում նրա ներկայությունը նաև կա՝ իր կերտած բազում փայտե քանդակներով:  
**ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**





Արցախյան գոյամարտի նահատակների հիշատակը հավերժացնող հուշակոթող (2016 թ., նախագծի հեղինակ և ճարտարապետ՝ Սևադա Զաքարյան)



Համլետ Մինասյան, Հարժիսի միջն. դպրոցի բակ, 1997 թ., քանդակագործ՝ Գարեն Զադայան



Վազգեն Սարգսյանի հուշարձանը Կապանի Բաղարուջի հուշահամալիրում, 2015 թ., քանդակագործ՝ Նարեկ Օրդյան



Վուրգ Ոսկանյան, 2012 թ., Մխիթանի Ազատամարտի հրապարակ, քանդակագործ՝ Գետիկ Բաղդասարյան





Սուրբ Գրիգոր Տաթևացու հուշակոթողը (2010 թ., քանդակագործ՝ Նարեկ Օրդյան, ճարտարապետ ու նախագծի հեղինակ՝ Սևադա Զաքարյան)



Իսրայել Օրի (քանդակագործ՝ Նարեկ Օրդյան)



Վասակ Սյունի, մարզպան հայրց և վրաց աշխարհի (քանդակագործ՝ Նարեկ Օրդյան)

Ակսել Բակունցի հուշարձանը գրողի տուն-թանգարանի բակում՝ փողոցի կողմից (2015 թ., քանդակագործ՝ Միխայել Ղուկասյան)

**ՄԻՋՆԱԿԱՆ ԵՎ ԵՎԵՆՈՒՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՀԻՇՏԱՎԻՇՆԻ ԶԱԿԵՐԻ ԿԱՅԵՐԻ ՎԵՐԱԿԱՅԱՐԱՆՈՒՄ**



◀ *Բաղարուրջի հուշահամալիրը՝ կառուցապատված 1970-ից 1990 թվականներին: Գլխադիր քարի խաչով ավարտվող քանդակազարդ ու քառանկյուն մի սյուն է՝ նվիրված Մեծ եղեռնի, 1988-ի Սումգայիթյան ու Բաքվի զոհերին՝ կերտված Յուրիկ Գևորգյանի նախագծով:*



Հուշահամալիր Գորիսում, 1989 թ., նախագծող և ճարտարապետ՝ Սևադա Զաքարյան: Հուշահամալիրում հավերժացված է Հայոց մեծ եղեռնի և Սպիտակի երկրաշարժի զոհերի, ինչպես և Արցախյան առաջին պատերազմում նահատակված հայորդիների հիշատակը: ▶



## ՄԵՔ ԱՅՍՏԵՂ ՊԻՏԻ ՃԱԽՐԵՆՔ ՈՒ ՄՆԱՆՔ



**Մեծ Իշխանասարը՝ սարերի սարը, որի սրբացած գագաթը գերության մեջ է**

Գորիսի մուտքը խորհրդանշող հուշակոթող: Մեր լեռնաշխարհի բրգաձև ժայռերին նմանվող կառույցը խորհրդանշում է անառիկ բերդ, արտահայտում է գորիսեցու արարող ոգին, Հայ առաքելական եկեղեցու և Մեսրոպյան գրերի անանց նշանակությունը մեր անցած և անցնելիք ճանապարհին: Կառուցվել է 1999-2001 թթ., նախագծի հեղինակ և ճարտարապետ՝ Սևադա Զաքարյան

ԽՈՍԷ՝ ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏԻ  
ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ՝  
ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏԻ



## Սյունյաց սարեր

Հազար ու մի երգում գոված սար եմ տեսել, Բայց միշտ ձեր կարոտը քաշել, Սյունյաց սարեր, Ասես մեծ վարպետ Նաղաշի ձեռքն է հասել, Ծաղիկներիդ գույն-գույն նախշել, Սյունյաց սարեր, Ինձ մոր սրտով ձեր գիրկն առեք, Սյունյաց սարեր: Յայլաններիդ ծուխը սահող երամ դառած, Իմ նազելին երամի մեջ երազ դառած:

Ծաղկիդ բույրը հազար դաշտ ու ձոր կլցնի, Հազար ցամաք հողի, քարի շուրթ կբացի, Տուն կբերեք ձեր պանդուխտին, չեք կորցնի, Հովերդ ինձ ձեռքով կանեն, Սյունյաց սարեր, Ինձ մոր սրտով ձեր գիրկն առեք, Սյունյաց սարեր:

Մարդուն քաջի ուժ կտա ձեր օդն ու ջուրը, Սուրբ մոր նման օրոր կասի զով զեփյուռը, Աշխարհով մեկ տարածվել է ձեր անունը, Ձեզ հազարան խաղ եմ կանչել, Սյունյաց սարեր, Ինձ մոր նման ձեր գիրկն առեք, Սյունյաց սարեր:

Գուսան Աշոտ, Սյունյաց հողը անարատ է, Չարի սերմը բուն չի դնի, անարմատ է, Մարդն արծիվ է, լեռնածին է, հրահատ է, Հազար հողմեր ձեզ չեն մաշել, Սյունյաց սարեր, Ինձ մոր նման ձեր գիրկն առեք, Սյունյաց սարեր: Յայլաններիդ ծուխը սահող երամ դառած, Իմ նազելին երամի մեջ երազ դառած:

# Հայաստան ասելիս



ՏԱԹԵՎԻ ՄԱՅՐ ՎԱՆՔԸ,  
ՈՐ ՄԻՍԱԿԱՆ ՏԱՆ  
ԲՈԼՈՐ ՎԱՆՔԵՐԻ  
ԳԼՈՒԽՆ ՈՒ  
ՇՆՈՐՀԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ  
ԱՂԲՅՈՒՐՆ Է

ՈՍԿԵԿՈՒՌ ԽԱՉԸ,  
1979 Թ. նախագծող՝  
Բաղդասար  
Արզումանյան,  
կատարող՝ ոսկերիչ  
Ժիրայր Չուլոյեան



Հայաստան ասելիս այտերս այրվում են,  
Հայաստան ասելիս ծնկներս ծալվում են,  
Չգիտեմ ինչո՞ւ է այդպես:  
Հայաստան ասելիս շրթունքս ճաքում է,  
Հայաստան ասելիս հասակս ծաղկում է,  
Չգիտեմ ինչո՞ւ է այդպես:  
Հայաստան ասելիս աչքերս լցվում են,  
Հայաստան ասելիս թևերս բացվում են,  
Չգիտեմ ինչո՞ւ է այդպես:  
Հայաստան ասելիս աշխարհը իմ տունն է,  
Հայաստան ասելիս էլ մահը ո՞ւմ շունն է...  
Կմնամ, կլինեմ այսպես:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ